ՀԱՅԿ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ.

ԹԻՒ ԺԲ. — ՀՐԱՏԱՆ Ե. **1872** ՏԱՐԻ Ե. — ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՅԱՂԱԳՍ ԹԷ՝ ՊԻ՞ՏԻ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ ԿՐՕՆԻ.

Հաւատք առանց գործոց մեռեալ է։

Եթէ գործքն են արդարև մարդոյ սըրտին՝ հաւատոյ և ղգացմանց արտայայտիչք կամ հաւաստիք, ինչպէս մտաց խորհածը՝ սրտի ըղձացածը և կամաց հրամայածը կարտայայտուի՝ կամ կըղործադրուի լեզուով, աչօք, ձեռօք, ոտիւք և այլն. ղգայարանքներով, ո՛չ ապաքէն կրօնի մէջ և հոգւոյն առ Աստուած սէրը՝ ջերմեռանդութիւնը և խղճերը նոյնպէս գործովք՝ այս ինքն՝ պտղաբերութեամբ պիտի արտայայտուին։

Արդարև մարդոյ հոգւոյն բաղձացածը սրտով պիտի կատարուի, կամ պարզապէս՝ կրօնն առ Աստուած սրտի մէջ պահի տարածուի և տիրէ, սակայն՝ մտածելով որ՝ մարդս ի հոգւոյ և ի մարմնոյ բաղկացած մի էակ է, պէտք է խոստովանիլ՝ զի անկարելի է հոգւոյն առանց գործակցութեան մարմնոյ ընծայուիլ Աստուծոյ, այս ինքն առանց պատրաստութեան, ինչպէս կամ պատահին ներքինութեանց։

Ուշադրութիւն առնք և տեսնք թէ ի՞նչպէս։

Ասացի վերև, թէ մարդս է հոգւոյ և է մարմնոյ բաղկացած մի էակ է։

Առանց հոգւոյ՝ մարմինն է մի դիակ, և առանց մարմնոյ՝ հոգին՝ բաժանեալ մի հոգի է։

Պէտք է երկուքն ի միասին առնուլ, որպէս զի մարդ կազմուի *)։

Ուրեմն այս միաւորութեան զօրութեամբ ի՞նչպէս կգործէ մարդ։ —

(*) Դիւրիմ. պատ. եր. 51։

Կամ հոգին հեռանալով մարմնոյ, կամ մարմինն հնազանդելով հոգւոյ, և կամ երկուքն իմիասին հաւասարձայն պիտի գործեն։

Ուստի կարող է ամեն ոք փորձել յանձին իւրում, և պիտի տեսնէ՝ թէ կարելի է հոգւոյն կամ սրտին զգացմունքը արտաքուստ ևս շուտով չ յայտնուի։

Ապաքէն երկիւղը և ահը որոյ և իցէ սիրտը պաշարելէն անմիջապէս յետոյ՝ երեսը կգունատուի, ներքին ինչ ուրախութիւնը կզրդէ արտաքուստ կայտառալ՝ ինչպէս և երեսը ժպիտներով լի կներկայանայ, բարկութիւնն՝ աչքերը կխոժոռեցնէ, մազերը և յօնքերը կսըցէ, միանգամայն կդողացնէ ամբողջ մարմինը, սէրն շատ հեռուէն կցայտէ և կցօլայ երեսի վերայ, այնպէս որ՝ եթէ չափազանց ջանք լինի այս զգացմունքներէն մինը քօղարկել կամ կեղծել, անմիջապէս ներքին յուզմունքն կամ այլայլութիւնն անշուշտ կը նկարագրի յերեսն և կմատնէ։

Ուրեմն կհետևի, թէ՝ այսպիսի վիճակի մէջ մարմինն և հոգին մի այնպիսի փոխադարձ սերտ յարաբերութիւն և կապակցութիւն ունին ընդ միմեանս, և այնպէս միաբան կընթանան և ի միմեանց կախումն կկրեն, ըլլ անհնարին է հատարակաց միաբան գործողութիւն չունենալ։

Բրդ եթէ այս ապացուցուի մարդոյ ամենայն գործոց մէջ, ուրեմն մի և նոյն-չէ ասել՝ նա և կրօնական ներգործութեանց մէջ։ Ո՞նչ, միթէ երկրաւոր գործոց համար մի տեսակ բնութիւն, և երկնաւոր բաներու համար մի այլ տեսակ բնութիւն ունենալ պէտք և արժան է։

Թող ինթադրուի, ըլլ գուցէ կարելի լինի՝ որ մարդ պըտի մէջ միայն կրծնի առ բողջապէս ի գործ դնէ։ Բայց և այս ապօրինաւոր է։ Ըլ ան ըլ կրօնն ալ պարտք է և կվերաբերի բոլոր մարդկութեան կամ մի ընկերութեան՝ և ոչ թէ միւսմ անհատի։

Օրինակ չէ պէտք մի թագաւորի այցելութեան երթալը իւր իշխած երկրին, ուստի բնակչաց և հպատակաց ոչ թէ առանձին առանձին՝ այլ համանգամային հրապարակական ցոյցերով իւրեանց զգացմանց հաւաստիքը յայտնելները, այլ սակայն կասեմ, ըլ Ստուած՝ գոլով ստեղծիչ և տէր ամենայն արարածոց և տիեզերաց, ունի իրաւունք բովանդակ մարդիկներէն ճանաչուիլ և պաշտուիլ կրօնի ներգործութեամբք. իսկ այս անշուշտ առանց արտաքին գործողութեանց և հրապարակական պաշտամանց կարելի չէ կատարուիլ մանաւանդ ըլ մարդիկ չեն հրեշտակք, որ ի միասին հաւաքուին մտաց գործողութեամբք, և առանց զգայարանաց գործակցութեանց իմանան զներաբ. թող և զայն՝ որ ամեն կրօն ունի իւր պարտիքը, և ով որ մի կրօն կգաւանի, ի հարկէ նա ընկերութեան առջև յանձն կառնու կատարել նոյն կրօնի պարտիքը։

Ըստ այսմ՝ մարդ մշանջենաւորապէս կախումն ունի Ըստուծոյ, և ինչպէս նորա ձեռաց ստեղծուած՝ պատուել ևս յաւէտ կարօտ առ նա։ Իսկ փոխարէն մի պարտք պէտք չէ ունենայ առ նա, այս ինքն յաւէտ երախտագէտ զգացմամբ օրհնել զնա և մեծարել, և միանգամայն մտաբել՝ որ միշտ իւր խնամոյ ներքև պահէ։

Պարելի է դարձեալ ինթադրել՝ ըլ Ստուած կարօտ չէ մարդոյ մեծարանաց

և պաշտամանց, որ նորա անհուն և ամենակարող Էութեան առջև քանի՜ խեղճ և պակասաւոր բաներ կարին լինել։ Եւ թէ նա արդէն իւր աքանչելի ստեղծագործութեամբք կը փառաւորուի և իւր պատկառելի մեծարանք կներկայացնէ մարդոյ կամ մարդկան։

Բայց ո՛չ արդեօք նոյն իսկ աքանչելագործութիւնք անգամ մարդոյս օրինակ և յորդոր կան փութալ և բորբոքուիլ յաւէտ զգալ, գիտել և երախտագէտ լինել Աստուածային բարերարութիւններին։ Ո՞չ ապաքէն մարդ միշտ կկարօտի Աստուածային խնամոց և ողորմութեանց, ուստի զոհութեամբ պարտաւոր է օրհնել Տէրը, խնդրել՝ որ միշտ հսկէ իւր վերայ և խնամէ, և աղաչել՝ որ ընդունի իւր աղաչանքները և երախտագէտ զգացմանց փառաբանութիւնքը, և այս մի՛թէ մե՞ծ բան է նորա անչափ խնամոց, սիրոյ, անդին շնորհաց և առատաձեռնութեանց ի փոխարէն։

Մանաւանդ զի Աստուած կը հրամայէ մարդկան պաշտել զինքն, բայց ո՛չ առանց արտաքին գործողութեանց կամ պաշտամանց՝ արարողութեանց և ծիսից։

Յիշէ Աբելի, Նոյի, Աբրահամու և այլոց ըղհատգործութիւնքը։

Յիշէ Պ. Հատական քահանայագործութիւնքը և հին ուխտին Տապանակը։

Յիշէ, զի երէ Աստուծոյ անընդունելի և անհաճոյ էր կրօնական պաշտամունքները, ընդ որ ուրուն աշխարհի Փրկիչը Յիսուս Քրիստոս եկաւ և հաստատեց զայնս աշխարհի վերայ, և զերծրին հնոյն լուսաւորելով սիրեց ընդ ամենայն սիրելիս ի ձեռն Առաքելոց քարոզութեանն։

Յիշէ վերջապէս, և երէ հաւատաս Փրկչի Մարդեղութեան անօրէնութեանց և փրկարար խորհրդոց, ուրումն գործովք պիտի ապացուցանես զայնս հանդերձ սրբատուռանդն ջերմեռանդութեամբք և առանձնական և հրապարակական արտաքին պաշտամամբք և արարողութեամբք, որովք հոգին յարաժամ հաւատոյ աչաց ընդառաջ պատկերացուցանելով Աստուածութեան անհուն խորհուրդները, երախտիքները և անթիւ և այլ և այլ բարերար և շնորհական անօրէնութիւնքը, և ոգևորուած և յափշտակուած սիրոյ Աստուած միշտ կհետևի զբարին սիրել, և բարի գործեր և այլոց նախանձելի օրինակներ հանդիսացնել, որով Աստուծոյ անունը յաւէտ և հանապազ մեծաւ և խորին լիմն պատկառանօք պաշտելի և երկրպագելի կիպայլի յընդհանուրս, և առաքինութեանց քաղցր և անձկալի պտուղները բազմաբեղուն և փառաւորնպէս սփռեալ կպանծան իմարդիկ։

Վ. ՀԱԿՕԲ Վ. ՊՕՂՈՍԵԱՆ
Մանկ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԹԷ Ո՞ՒՐ ԵՆ ԱՒԱՐԱՑՐ ԵՒ ՏՂՄՈՒՏ.

(ԺԱ. ԴԱՐԷՆ ՇԱՐՈՒՆԱԿ)

Խոյի Հարաւ — արևմտեան կողմումն է Անձաւոյ կամ Անձահոյ ձորն, որի մէջն է Կոտօլ, այս ինքն Կոտոր բերդն կամ դիւղն, և նրա մօտովն է անցկենում Խոյի պարզ և վճիտ գետն, որ բերդի կամ գիւղի անունն է վեր առած. Էս գետի

անունը, կամ գետէն գիւղի անունն։ Էս գետը ձորէն դուրս գալիս թեք վում է դէպ ի հիւսիս, ու լեռների ստորոտների տակովն փոքր ինչ ընթանալէն յետոյ շուռ է գալիս դէպ ի արևելք, թափվում Խոյի դաշտը։ Պ. Բաֆֆին ուշադրութիւն չէ դարձրած ո՛չ մեր նախնեաց մատենագրութիւններին և ո՛չ տառերի աղաւաղութեանը։ Վիճենայ տպած 1857 ամի, Ատլաս — աշխարհացոյց տախտակի մէջը գրած է Քօթուր, որ աւելի մօտ է Կոտոր բառին։ Հ. Զամէ. հատ. Բ. երես 827, ասում է ,, Եւ եհաս անդր (ի Հեր կամ ի Խոյ) ձեռով Ապլխարիպ (Հաւնունի) և տեսեալ թէ փակեալ են ամենայն կողմամբ, ոչ կամեցաւ մարտ դնել ընդ քաղաքին, այլ միայն եթող զնշանակ քաջութեան իւրոյ անդ, զի ուժգին հարմամբ քաղեսեալ զպողովատիկ սուսեր իւր ի մեծ դուռն երկաթի, մնեաց խորագոյնս ,, . Էս անցքն Խոյի բնակիչ Հայերն աւանդութեննէ մըՆացեալ, ինձ ցոյց են տուած արևմտեան բերդի դուռն, որպես թէ նշան կայ նրա վերայ մինչև այսօր։ Հ. Ինճիճեանն իւր աշխարհագրութեան Հայաստան հատորումն երես 250, ասում է ,, Խոյ ի հնումն անկանէր ի Պարսկահայս կամ ի Հեր և Զարևանդ գաւառի Պարսկահայոց ,, ։ Հաւաստի եմ այժմ, որ ամենայն ուշադրութիւնով կարգացողն համոզուի, թէ Հեր գաւառն ունէր և ունի հայանուն Հեր, Խեր կամ այժմեան Խոյ քաղաքն, թէ ունէր Դերենիկի ժամանակն այգիներ և բերդ և երկաթէ դուռն, ինչպէս և մինչև ցայսօր ունի, թէ Արտաղ և Հեր գաւառներն այլ և այլ գաւառներ են, և թէ Վօթուր ըստ Պ. Բաֆֆիի, այս ինքն Քորոտ գետն չէ համապատասխանում նրա երևակայեցեալ նշանակութեանն, ասելով թէ, պղտոր ջուր ունի, լըղային և ցեխոտ յատակով, ևլն. ընդհակառակն Խոյի ջուրն պարզ և ամենագովելի է Ատրպատականի մէջին։

Խոյի դաշտի աւարտուելոյ արևելեան — հարաւային կողմումը, դէպ յանդիման Ընձահոյ ձորին, ընկած է մին ուրիշ լայնաբերան ձոր, այժմ Բաղըսակ-դէրէսի ասացեալ, ընդունում է իւր մէջն ուրիշ աղբիւրների և վտակների ջրերի հետ և Կոտոր գետը։ Էս ձորովը Կոտորը քանի մի փարսախ դէպ ի արևելք ընթանալէն յետոյ, թեկվում է դէպ ի հիւսիս — արևելք, ուրիշ ձորի մէջը մտնելով, հոսվում է գնում հասնում մինչև մեր պատմական Մառական աւանը, ուր անուանվում է ի նախնեաց Կարմիր գետ, արդարև կարմիր գոյն ունի և այսօր, և անշուշտ էս գոյնն ընդունում է վերան եղած լեռների կարմիր հողերէն։ Կարմիր գետը Մառականի առաջովը վայր է հոսվում վարար և սրնթաց ներ և քարքարոտ ձորերի մէջովն, թափվում է Երասխ գետը Ղամբի-ձոր գեղի մօտ. ուր է Սուրբ Սահականնոս Նախավկայի Վանքն (5)։ Թօմաս Արծրունին գիղեցիկ իմն նկարագրելով էս ձորն, ասում է երես 285. ,, Գարիկ արքայն Արծրունեաց վայր խաղացեալ ի Մառական աւան առ Կարմիր կոչեցեալ գետովն, որ ելանէ ի գետն Երասխ, չինէ և անդ ամրական տեղի դժուարամատչելի աստիճակող հինից ևլն. ,, ։ Զարմանալի առատ են էս ձորերումը մինչև այսօր էլ վայրի էձերը, այծենիները և կաքաւները։

Մառական աւանն, Արծրունի թագաւորների ձմերոցը, շինուած է Կարմիր և Տղմուտ գետերի խառնվելոյ տեղն, և ունի արևմտեան կողմումը ընկած լեռների մէջին մի դժուարանցանելի նեղ կիրճ, երկարութիւնն կէս ժամի ճանապարհ, և սորա մէջովն է անցկենում պատմական Տղմուտ գետը կամ Տղմուտ դաշտի գետն։ Էս կիրճէն դուրս գալիս, ներկայանում է աչքիդ առջևն, ամենայն Հայի համար տխուր պատմական Աւարայրի դաշտն, որին այժմ Զօրսի դաշտ են կոչում, և սրա հիւսիսային կողմի ղլխին այս ինքն վերջին, կայ փոքրիկ ինչ զառ ի վեր վերոյիշեալ Կարայ-Զիադին գիւղն, որի դաշտն խառն է Աւարայրի հետ։ (Տես Կուռնկ օրագիր 1863 ամի Յունիս ամիս, համար 6 . . . . .) Ըստ որում Վարդանանց պատերազմը եղած է Արտաղ գաւառի մէջը, վասն որոյ փոխադրութիւնք կրկին վերադառնանք Արտաղ գաւառն, ու նախնեաց աւածները համեմատենք նրա այժմեան դրութեան հետ։

Թերևս պարոն Բաֆֆին երկրայի պատերազմը Արտաղ գաւառումը պատահելոյ մասին, բերենք

(5) Տես Ջանապարհորդ. Յ. Շահխ. Եպիսկոպոսի,

էտեղ ժամանակակից և ականատես Ղազար Փարպեցին բառերը որ երես 118, ասում է. «Եւ երկրորդ ասէին Թերևս անդ ի տեղւոջն (ի Հեր և Զարևանդ գաւառին) վճարէին կէս գործոյն պատերազմի . . . սակայն և առաւել ստիպով եւ կեալ հասանէին գունդն Պարսից ի գա—ա— Աբոպաղ, հուպ ի գետն, որ կոչի Ա—ատրայր, չբջփակ գեղէ Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց (Մուշկանենւսաղաւուրդ) յաղագս երկիւղի զօրացն Հայոց, ապուր ապատանի անձանց համարէին պատշաճ, և ի ձեզ նոքա ղակէզ բանակէին»։ Եղիշէ ականատես և Ասողիկ և Թօմաս Արծրունին հաստատում են էս, միայն թէ Աւարայրը նրանք դաշտ և Տղմուտը գետ են կոչում։ Փարպեցին Վահան Մամիկոնէի համար, երես 223 ասում է. «Ձսկին թէ զօրք բազումք խաղացեալ գայ ի Պարսից, եկեալ հասեալ են ի սահմանս Հեր և Զարևանդ գաւառի . . . . վուէթացաւ և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան . . . . չուեալք ի Դունայ զօրքն Հայոց, ըստ աւուրց օթևանացն, երթեալ հասանէին ի գաւառն Արտազ, և մնտեալք ի գունդն Պարսից ի գիւղ մի, որում անուն Ներսեհապատ»։ Ուրեմն այսուհետև կարելի չէ մըտածել, թէ էսպիսի պատմաբանները սխալուած լինին, և չկարողացան զանազանել Հեր և Զարևանդ և Արտազ գաւառներն, էնպիսի ազգային և երևելի պատերազմի անցքն գրելու ժամանակ։

Ա յժմ Արտազ գաւառի մէջն երևելին, այս ինքն Խանի նստելոց տեղն է Մակու բերդն կամ քաղաքն, որ ընկած է ձորումը, իւր վտակի ձախակողմումը, մին լերան լէն պատառուածի մէջին, և լերան շրթունքները հովանի են անում բերդի մէջի տներին, ինչպէս կէս ամպ հովանի։ Հիւսիսէն, Մակուի լերան քամակումը մինչև Մասիան, ոչինչ դաշտ կամ քաղաքի տեղ չկայ. ընկեր էլ, ոչ Խոր—վիրապէն և ոչ Հեր Զարեանդ գաւառէն կարելի չէր զօրքին չուել։ Մակուն ունի մին եկեղեցի, ինչպէս մտիս է, նուիրած սուրբ Վարդանայ անուանը, ինչպէս և հին Պարսկաստանի եկեղեցին։ Էս երկու քաղաքի և նրա գեղերի Հայերը տարին մին շաբաթ կամաւոր, բայց սաստիկ պաս կպահին սուրբ Վարդանի համար Հոկտեմբերի վերջերումը։ Էս պասն պահում են մինչև ցայսօր, էն տեղանքից գաղթուած Ռուսաստանն Հայերը, Ռուսները վերջին պատերազմի ժամանակն Ատրպատականէն Հայերը գաղթելէն յետոյ դարձեալ մնացած են Մակուի բերդումն մերձ յիսուն գերդաստան։ Մակուի բարձր լերան վերայ փորագրուած են կարծեմ բևեռաձև տառեր, շատ բարձր լինելոյ համար, դժուար էր ինձ օրինակելն։

Մակուի ձորումն դէպ ի արևմուտք կէս ժամաչափ ճանապարհ վտակի ձախ կողմովն գնալով, անցես կենում դէպ ի հարաւ վտակի աջակողմը, մտնում մին ձոր Ծործոր ասացեալ, որի միջովը մին վտակ է գալիս խառնվում Մակուի վտակին։ Էս Ծոր ձորն քաւորդ ժամ, Թերևս փոքր աւելի, քարքարոտ և խոխոմ ճանապարհով բարձրանալով պատահում ես մին մեծ գեղի, որի արևմտեան կողմի լերան կողքումը կայ մին հոյակապ եկեղեցի քարակուռ. թէպէտ այժմ ամայի է, բայց երևում է գաւթի պարսպի պատերն ու խուցերը ինչ ինչ աւերեալ և ինչ ինչ կիսաւեր։ Մակուի Հայերը և Մահմետականները անխտիր կգան էս տեղ ուխտ. Մակուի քահանային ու Թադէոս առաքելոյ վանքի միաբաններըը հաւատացնում էին ինձ, թէ էս է երևելի Զաքարիայ Եպիսկոպոսի Ծործորու վանքն, և թէ էս եկեղեցի զօրութիւնովը ով որ նրա մօտի անտառէն, որքան և լինի, փէտ կտրէ ու վառէ, կպատժուի։ Էս անտառը բաղկանում է քանի մի բարձրադոյն ծառուկէ և հարիւրաւոր թուփերէ. սրա վերևն բղխում է մին սառնորակ աղբերակ և թափվում է անտառի մէջը, ու անհետ լինում խիճերի մէջին։

Խնդրեմ բարեմիտ ընթերցողէն ներումն, եթէ էտեղ փոքր ինչ շեղվինք մեր նպատակէն, ըստ որում ազգային աւանդութիւններին կվերաբերի, թոյլ չտանք մեզ մոռացութեան մէջը։ 1843 թուին Մակուայ Ալիխանի որդիի հարսանիքն էր, վան որոյ և մեծ բազմութիւն էր հրաւիրուած Ատրպատականի ամենայն քաղաքներէն, որոց միոնն էլ ես էի։ Սեպտեմբերի սկիզբներին խանի եղբօր որդիների և հիւրերի հետ ես էս գնացի որսորդութիւն այծեմի, վայրի էձի ու կաքաւի էս Ծորձոր ասած ձորի կողմն, ուր շատ առատ են էս

կենդանիները։ Նշանակուած էր էս Վանքի մօտի գեղումն, որի բնակիչները Հայ-Հաւատափոխ Մահմետականներ են, որսորդներիս համար ճաշ պատրաստել։ Կէս օրն անց էր փոքր ինչ, վերապարձանք որսորդութիւնէն, լեցինք թէ մի շփոթ է ընկած ծառաների մէջը։ Խորին Պարսկաստանցի ծառաներն անտեղեակ գոլով ծաւ կորկոյ տեղական աւանդութեանը, հաւանելով անտառը և աղբիւրակի մօտը ճաշելոյ համար, վանքի ծառերէն կտրել էին կիսակտուրներ պատրաստելոյ։ Երկրացի Մահմետական ծառաները չհամարձակուելով յայտնի արգելել, պիտի էին Հայ պատասխանողներին Ջաւդ և Գասպար անուն։ Սրանք օրքան խնդրել էին, Պարսիկները չէին լսել, վասն որոյ և մէջերնին կռիւ էր ընկել ու միմեանց պիտի թեթև վիրաւորել էին։ Ինկ Մահմետականները կռիւը հանդարտացնելոյ համար դնացել էին մօտիկ գեղէն փէտ էին բերել տուել նրանց երեն։ Երբ մեք վերադարձանք, Հայերը ինձ և Պարսիկներն լսանի եղբօր որդիին դիմեցին։ Շատ յորդորեցինք հաշտուին, չեղաւ, Հայերը խոստացած վերադարձան Մակու։ Մեք նստեցինք ճաշել, ուր մերձ քսան հոգիներ կլինէինք, բայց ծառաները կրկնապատիկ, թերևս եռապատիկ ըստ սովորութեան Պարսից։ Ճաշն երկար քաշեց, ըստ որում բոլոր էս երիտասարդները գինի խմող էին. վասն որոյ և արբեցան շատերը։ Մակուեցի Մամեա Ալի խանի որդի Ջուշուա խանը ևս հարփած լինելով, իւր ծառաների միջին հրամայեց, դնա այս ինչ պարկող մուխրուպին ասա պայթէ։ Մուխրուպն ուշացաւ. նա կրկնեց իւր հրամանը քանի մի անգամ. տեսաւ չէ կատարուում, ինքը վեր կացաւ տեղէն, դնաց բերէ։ Քանի մի րոպեից յետոյ վերադարձաւ, սիրտնած, ընչասպառ, անհանդարտ աչքերով, դողդոջուն ոտներով, ձեռներով, տեղը նստեց թէ չէ, միւս կողմէն ճիչ-աղաղակը բարձրացաւ, մինչ տեսանք Մուխրուպի ազգականները բերեցին ձգեցին մեր առաջև լալով-կոծով ողորմելի մուխրուպին, պորտի վերևիցը վիրաւորուած, արիւնը շիռում էր, աղիքները դուրս թափած, աչքերը լաց ու խուփ անում, ձեռները, ոտները կերկերում, կիսակենդան։ Ձանձրացաւ քանի մի րոպէ՝ հոգին աւանդեց։ Էս բանը յետոյ հասաւ Մամեա Շահին, որ հրամայեց Աստրպատականի կուսակալ իւր եղբայր Բէհմէն միրզին, հաղար թուման Պարսից դրամ, Մուխրուպի արիւնի գինն առնէ տայ ծնողներին, ճշմարտուեցաւ բնակիչների ջերմեռանդութիւնը դէպ ի աւանդութիւնը։ Ջաւդ և Գասպար Հայերը ստացան Ալի-խանէն մին մին թուր պարգև, Սկսենք մերն, այս ինքն.

Էս Ծործորի վանքէն մի ժամէն աւելի գնում ես նեղ և տաժանելի ձորով բարձրանում ես մի լեռան գագաթէն շուռ ես գալիս ըղուրների միջովն, և յետոյ երկու անջրդի հեղեղատ ու մին աղքատիկ Քուրդ բնակիչներով գիղ ես անցկենում, դարձեալ բարձրանում մի լեռան, որի գագաթին, ուստի անցես կենալոյ, քանդած հարթաւոյրած ճանապարհ է բայց արած, և տպաւորմի վերայ փորագրուած է, եթէ թիւն չեմ սխալում, ՌՄՂԴ. Թուին, ի ժամանակս առաջնորդութեան Սիմէօն Եպիսկոպոսի։ Էս է էն ծերունի Սիմէօն Արքեպիսկոպոսը, որին Պարսից տէրութիւնը կամենում էր Դանիէլ Կաթուղիկոսէն յետոյ Կաթուղիկոս ընտրել, բայց Սիմէօնը հրաժարվեցաւ էն դահէն։ Սորա ժամանակն է նորոգուած Թադէոս Առաքելոյ վանքն ու խուցերը արքունական հրամով Արլաս Միրզայ Պարսից Թագաժառանգի ծախսովն, որի յիշատակարանը քանդած մնումն վերայ դրած է առաջնորդարանի պատին։

Եւ էսպէս ճանապարհներով 5—6 ժամ Մակուէն երթում դէպ ի արևելք, երբեմն դէպ ի հարաւ դիմելէն յետոյ, հասանք մի վտակի, որ իջնում է մի ըղուրի կողքիցը։ Վտակի ձախ կողմումի լայնացրած ճանապարհ և աջակողմումն է մի մեծ շքեղ մատուռ, ի՞նչ սուրբի նուիրած, մոռացել եմ։ Մատուռի վրևն է վանքի ջաղացն ուռենի ծառերով պատած։ Իարձրանում ես էս դարի գուսը, հասնում ես ջաղացի մօտն, առջևդ բացվում է պատմական Շաւարշանի դաշտն, որի հիւսիսային կողմումն է կառուցած հոյակապ դեղնադոյն սրբատաշ քարից մեծ թաղէոս Առաքելոյ հոյակապ վանքը. քանի կաթուղիկէ լինելը մոռացած եմ. մոխ է միայն մայր և պանդակատան կամուղիկէքն։ Ջաղացէն մին ասպրէզ գնալով, հասանք գնդն ու վանքի պարսպի

գուռն, ուստի երկու ասպարէզ հեռաւորութիւնով պէտ ի հարաւ — արեւմուտք է Շաւարշան գեօղաքաղաքի ուղղակնները և գերեզմանատունը ոչ հեռի նորանէ։

Շաւարշան կամ Արտազ գաւառի համար ասում է Խորենացին Բ. 3. «Ի գաւառն Շաւարշան, որ այժմ Արտազ կոչի»։ Բ, 49. «Հրամայեալ բնակեցուցանել (զԱլանս) ի հարաւոյ արեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշան գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն (երկրին Աղանաց) Արտազ, քանզի և աշխարհն, ուստի գերեցան, Արտազ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»։ Յիշատակվում է Թադէոս Առաքելոյ հին Վկայաբանութեան ճառընտրումը (Ստորագ. Հին Հայաստ. Հ. Ինճիճեանի երես 202). «Հասանէ (Թադէոս Առաքեալն) յաշխարհն Հայոց առ Թագաւորն Հայոց Սանատրուկ ի գաւառին Արտազ Շաւարշան, յամսեանս արքունի, ուր էին հովոյ գետինք Թագաւորաց Հայոց»։ Խոր. Բ. 71. ճառընտիրը և Ցայսմաւուրն Նոյեմբերի 18 էն տեղ են հաստատում Թադէոս Առաքելոյ նահատակութիւնն ու տուրը Լուսաւորչի յղութիւնն։ Անտարակուսելի է, որ Թադէոս Առաքելոյ նահատակութիւնն տեղն ու նրա վանքը յօրէ անտի շինութիւնն, եղած է և կայ մինչև ցայսօր մի և նոյն տեղումն, և անընդհատ շարունակած է նրա Եպիսկոպոսութիւնն մինչև ցայսօր, և նախապատիւ է եղած Հայաստանի Եպիսկոպոսների մէջին։ Հայր Ձամչեանը նախնիքների հեղինակութիւններէ առնելով ասում է (հատոր Բ. երես 328) թէ 625 Փրկչի թուականին «Հաւ եղը (Կաթուղիկոսն) զոմանս Եպիսկոպոսաց և ի Վարդապետաց, զՏրիտուր Արքեպիսկոպոսն Արտազու, զԲրիստակիոր Եպիսկոպոսն Դարունեաց և այլն. և այլն.»։ Թօմաս Արծրունին երես 290, ասում է «Գրէ առ Եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց, որ նստէր ի Հանգստի սրբոյն Թադէոսի Առաքելոյ Յարտազական գաւառի»։ Նոյն երես 251, «Եւ ինքն Խուրան առեալ մնան զօրուն գնաց ի Շաւարշան Սանատրուկ»։

Էն Շաւարշան դաշտը, հիւսիսի կողմէն, այս ինքն Վանքի, պատած է բլուրներով, լեռներով մինչև Մակու. և արեւմտեան կողմէն էս լեռներով մինչև մին օրման ճանապարհ։ Դաշտի լայնութիւնն, այս ինքն արեւմուտից ցարեւելք լեռներն մին ժամէն փոքր պակաս ճանապարհ կլինի։ Էս արեւելքի լեռներին, որին Սանատրուկ էին ասում, քամակին է Գերատի, այս ինքն Մակուի գաշտն։ Վանքի ծերունի, մեծ եօթանասուն տարեկան ծեր, պարմա հասակով և խօսուն Սիմէօն Վարդապետն Քուրդ վերակոչեալ, որ էր ձեռնասուն տիրացու վերոյիշեալ Սիմէօն Եպիսկոպոսի, ձիաւորվեցաւ ինձ հետ՝ գալ ցոյց տալ նուիրական Աւարայրը և Տղմուտը։ Վանքէն դուրս եկանք Շաւարշան գեօղաքաղաքի մօտէն անց կացանք գնալ դէպ ի հարաւ։ Սա տեղեակ էր Թադէոս Առաքելոյ նահատակութեան պատմութեանը. ինչպէս իւրեան ուխտի ժառանգութիւն, շատ անգամ էլ Ադաթանգեղոսի, Եղիշէի, և Ցայսմաւուրքի պարբերութիւններէն անգիր էր ասում, որ նշան էր տեղեակ լինելոյ և ազգային պատմութիւնների. ինձ ցոյց էր տալիս երկարօրէն աւանդութիւնեն մնացեալ, ինչ տեղ մեր Թագաւորների առաջին իշխանագները ձի կխաղացնէին, ուր այծեամը պարանը շլինքումը կարձակէին և Թագաւորները հեռակ կամ ձիաւորված նետով լարէով կամ նիզակով կզարկէին, ուր է եղած Թագաւորների կամ երեելի նախարարների, իշխանների պալատները անուն անուն, կամ նրանց զաւակների վրանների տեղը, ուր Լուսաւորչայ յղութիւնն, Սանդուխտ կուսի նահատակութիւնն և այլն. և այլն. որոնց շատը ախտս մոռացել եմ։

Մերձ մին ու կէս ժամ գնալէն յետոյ, հասանք լեռների տակը, բարձրացանք դէպ ի վեր մին ոչ բարձր լեռն, շուռ եկանք միւս երեսը, անջրդի մանր հովիտների, ձորերի միջովն, բլուրների կողքովն, անբանած երդիմն, ոչխարի հետքի ճանապարհներով երթեմն, երկու ժամէն, թերևս աւելի և այ, յետոյ հասանք Կարայ-Զիաղին գեղն, որի արեւմտեան կողմէն անց է կենում Ակ-սու գետն, որ գալիս է Զօրատոյ գեղէն, և Խոյէն գացողն պէտք է անց կենայ էս գետն ու մանէ Կարայ-Զիաղին։ Գետակի ափումը այս ինքն սրա աջակողմանը կայ մին ընդարձակ դաշտ չէին ասացեալ խոտաւէտ ճախին, բաղկացած սև կաւից, տղմուտ քարքարոտ, և ըստ ասութեան Սիմէօն Վարդապետի

լճակի տեղ եղած, քանի մի հարիւր տարի յառաջ սրա ելքէն քարհիղ է տարած էս տեղից դէպ ի Զօրս, վասն որոյ և սկսել է փոքր առ փոքր չորանալ։ Նոյն Վարդապետան Հաստատում էր ինձ, Տղմուտ դաշտն սկսում է էս գեղի առաջէն գառ ի վայր դաշտն արևելեան կողմէն մինչև Փառնակ, և Հարաւային կողմէն մինչև Զօրսի գաշտն, և Կարայ-Զիաղինէն նայում ես դէպ ի հարաւ, տեսնում ես բացի էս գեղի դաշտէն, այլ ևս խառն էս դաշտի հետ երկար պաղ ջրվէժ, որ է Զօրսի դաշտ այժմ կոչեցեալն, այս ինքն Աւարայրն, և ինձ, ի հնուց աւանդութիւն ունինք Կարայ-Զիաղինէն դուրս գալիս, միաբանքս եղէ՛ք ձեր մահմետական լինի մեզ հետ, գոնէ լուռ մնալով պէտք է Վարդանանց նահատակութեան շարականն երգենք էտեղ, ինչպէս էլ մեզ մօտ երգից և Հոգւոց ասեց։ Երևում է Փարպեցիի ասածէն, որ ոչ միայն գետն, այլ և դաշտն ևս Տղմուտ էր կոչվում։ Զօրսի դաշտ ասացեալ գիրքն ասինք հասառօտ։ Կարայ-Զիաղինի կողմէն այս ինքն հիւսիսի կողմէն փակած է Զօրսի դաշտն կէս մասով, եթէ չասենք երրորդն, ըլուրներով, ինացեալն տափարակ Մակուի և Փառնակ գեղի դաշտի հետ խառն դաշտով։ Էս վերջին գեղն ընկած է դէպ ի արևելք, փոսի մէջ տափարակ տեղում, Կարայ-Զիաղինէն մին ժամաչափ հեռի, հողն է սև կաւ, ուր զարմանալի ցեխ է լինում, ինչպէս ինքս տեսած եմ։ Զօրսի արևմտեան կողմն է փակած, երկար ընկած, ինչպէս զօտի, լեռներ էն, որի լանջի վերայ ընկած է Զօրս գիւղաքաղաքն, և վերջանում է հարաւային կողմի լեռների մօտը։ Հարաւային կողմի բարձրագոյն լեռները հուի նկած, գնում է մինչև Մառական աւանի կիրճն, ուր եթէ հարիւրական զօրական կանգնի պատերազմի ժամանակին, անհնար է թշնամւոյն Զօրսէն Մառական, Մառականէն Զօրս անցանել։ Դաշտի արևելեան կողմի լեռներն Մառականի կիրճէն գնում է գծած մինչև Փառնակ գեղի մօտն, ուր սկսում է հուի գալ Կարայ-Զիաղինի մօտը։ Ուրեմն որպէս ասացի, Փառնակ գեղէն մինչև Կարայ-Զիաղին է ջրվէժակ պաղուկ դուռն, ուր է և Տղմուտ գետն կամ դաշտն, ուստի և Հայերի գունդն կառոզ էր յարձակուիլ Պարսիկների բանակի վերայ, և ուր կարող էր Պենտեկոստէի Ուրբաթ օրը հանգչել Արտաշատ գիւղաքաղաքէն ու հասնել։ «Իսկ ի յաւուր ուրբաթու մեծի տօնին Պենտեկոստէին գիմեալ, հասանէին մերձ ի նոյն տեղին զօրքն Հայոց, գտեալ անպատրաստագոյն զզօրսն Պարսից»։ Ղազար Փարպեցի, երես 8։

Կարայ-Զիաղինէն գետն ընթանալով դէպ ի հարաւ ժամաչափ, բաժանվում է երկք յառաջ կամ առուս։ Էս առուների մինը գնում է արևմտեան կողմէն Զօրսի մօտովը ըստանց հողքովը անցկենում ոռոգելով էն կողմի գեղերի հանգերը, հասնում է Մառականի կիրճն։ Երկրորդ առուն, որի սաստիկ ցեխոտ լինելոյ համար, կարաւանների անց կենալու հողմի թումբերը զգուշութեան համար, շատ բարձրացած է առուի մէջի ցեխովը ու քարերով. գնում է մինչև Մառականի կիրճն։ Երրորդ յառաջն, կամ լաւ ևս ասած, իսկական գետն կամ վտակն, որ դաշտը կէս է անում, մէջ տեղովը գնում է ևս մինչև Մառականի կիրճն ու ընդունում իւրեան մէջն արևմտեան ու արևելեան կողմերի առուները, ամառն աւելորդ, և ձմեռն բոլոր ջրերն, և մտնում կիրճն, գնում Մառականի մէջովը, խառնվում Կարմիր գետին, որին Հ. Ինճիճեանն Աշխարհագրութեան Հայաստան հատորի մէջն երես 251, Խոյէն հոսվելոյ համար գարձնալ սխալմամբ Կօտօլ է անուանում, ինչպէս որ և երես 250։ Անձահոյ ձորն անուանում է Կօտօլայ ձոր։ Զօրսի դաշտի երկարութիւնը պէտք է երկու մղոնէն աւելի լինի, և լայնութիւնը մին ու կէս մղոն։ Տասնէն աւելի գեղեր կան էս դաշտի և լեռների լանջերի վերայ։ Երկք յառաջն վտակների վերայ հարիւրէն աւելի նեղ ու լէն փայտէ կամուրջներ կան շինած։ Ամեն առուները տղմուտ լինելոյ համար, հեռւակ մարդն անգամ չէ կարող անցկենալ որքան և ջուրը ծանծաղ լինի, անջուր ժամանակն էլ տղմերին նայելիս մարդ սարսափում է. վասն որոյ և շատ անգամ (ինչպէս պատմեցին (ինձէ չպատմէին, ինքն ինքեան երևում էր) ոչ միայն անասուններ, այլ և օտար մարդն անծանօթ գոլով կարմնջի, ոչ միայն ամառն, այլ և ձմեռն անգամ, անցկենալիս, խեղդուած է էս առուների մէջին, այն ինչ

սառուցը կոտրվել է նրա ոտի տակին։ Եւ թէ երբեմն գրսի էծերի ձագերը լէն առուներէն մայրերը թռչելէն յետոյ, անկարող գոլով թռչիլ, ընկնում են առուների մէջ ցցվում ցեխուտը։ Էն երկու մեծ առուները չեն լնական, այլ երեւում է, որ յետոյ են վերաուած իսկական գետէն։ Էս դաշտի վերայ ընկած գեղերումն ուղիղ օր հիւրընկալուած լինելով գիւղատէրերէն այծեմի, գրսի էծի և կաքաւի որսորդութեան համար, մնացած է մտքումն ամեն նրա դրութիւնն։ Երեւելի է Մառականի քամակի դէպ ի նրա հիւսիս ընկած սարերի վերայ այծեմի պորտիցը հանած մուշկ ասուած քարացեալ արիւնն, որ գեղի հայմար թանգ է վաճառվում Ասիայումը։ Սրա վերայ շատ առասպելներ կան հնարած, շատից միտը ասենք։ Ըստ որում Վարդանանց պատերազմից յետոյ է յայտնուած, ասում են, էս քարացած արիւնը այծեմների պորտի վերայ, վասն որոյ և ի շնորհս էն սուրբներին է էս յատակ ընկած, այս ինքն ինչ այծեամն երկը օր արածել է (ըստ այլոց 7 օր) էն տեղ՝ ուր նահատակուել են Վարդանանք, նրանց արիւնի շնորհքովն է բաղկանում այծեմի պորտի վերայ էն արիւնը ու լինում բուժշկութիւն անասնոց ևն. ևն։

Պատերազմական արհեստին անտեղեակ մարդն անգամ նկատելիս էս Զօրսի և Կարայ-Զիաղինի դաշտերն, իսկ և իսկ կհամղուի, որ էստունք են Աւարայրի և Տղմուտ դաշտերը, և շատ յարմար են թշնամիներէն պատսպարուելոյ համար։ Մամիկոնեայ Սամուէլ խանը Ռուսաստանէն փախած ու Պարսկաստան երևելի զօրավար եղած, պատմեց ինձ ականատես գոլով թէ, Ռուսների և Պարսիկների վերջին պատերազմի ժամանակին, երբ Աբբաս Միրզայ թագաժառանգն յաղթուեցաւ Ռուսներէն Արարատեան դաշտի վերայ, անցանելով Երասխն և Մակուայ դաշտն, հէնց ուղիղ չդիմեց դէպ ի Խոյ, էս Զօրսի դաշտը Խոյի բերդէն դերազանց համարելով, մնաւ էստեղ ամբացաւ և Մառականի կիրճն էլ զօրքով կապեց, կասկածելով կնեալ Էրիստով զօրավարէն որ չլինի թէ Գերգերի կամ Մարանդի կողմէն յարձակուի իւրեան վրէն։ Երբ Ռուսները որոնք հետևում էին Աբբաս Միրզային, Կարայ-Զիաղինի դաշտն, տեսնելով տեղի անյարմարութիւնը պատերազմելոյ համար, մանաւանդ որ Պարսիկները էս գեղի գետ Ակ-սուն թողել էին դաշտի վերայ, սաստիկ ցեխ էր եղել, ուստի Ռուսների զօրքին չուելն անկարելի էր, վասն որոյ անցկացան գնացին դէպ ի Խոյ, էն ժամանակն էլ Արքայարդին բանակով չուում է անցկենում Մառականի կիրճը և Կարմիր գետը, բանակվում Եկան (Թեւրևս Նկան) բերդի առաջին, էստեղացի Մարանդ և Թավրէզ։

Ղազար Փարպեցին զարմանալի համառօտ և ճիշդ է նկարագրում էս նուիրական Աւարայրի կամ Զօրսի դաշտն, և որպէս երևում է՝ տեսած է եղած. վասն որոյ և կլինին էստեղ նրա բառերն աւելորդ չեմ համարում։ Երես 118 ասում է. «Սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին (ի Հեր և Զարևանդէն) գունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գիւղն որ կոչի Աւարայր, է ընդ-ի-ակ դեղն Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց (Մուշկանիւսալաւարդ) յաղագս երկիւղի Հայոց, ապա-թէ ապաստանիկ անձանց համարէին պատշաճ, և է դիւղ նորա ածեալ դժնի բանակէին»։

Էս ևս չէ պէտք մոռանալ, որ Կարայ-Զիաղինը ու Փառնակ գեղերը մինչև ցայսօր Արտազ գաւառի այս ինքն Մակուայ խանութեան վիճակն են։ Արտազ գաւառէն դէպ ի Հեր և Զարևանդ ճանապարհորդելոյ համար բաց ի Կարայ-Զիաղինի և Մակուայ դաշտէն ուրիշ տեղ էնպիսի ընդարձակ դաշտ չկայ, ուր միմիայն մին կողմէն, այս ինքն Հայերի, վաճառն և մնց զարեայ բանակ կարողանար զետեղվիլ, ուր մնաց Պարսիկներէն։ Ի վերջոյ էս ևս ասեմ, որ մեր պատմիչներն յայտնի ասում են թէ պենդեկոստէի ծե պօնէ ու-բջաղ օրը Արտաշատ քաղաքէն այս ինքն Խոր-վիրապէն (Զամչ. հատ. Բ. երես 67) սուրբ Վարդանը վեր առաւ Հայերի գունդն ու հասաւ Արտազ գաւառի Աւարայր վիւղը կամ դաշտը, և շաբաթի օրը պատերազմն արին, այս ինքն մին օրվան ճանապարհ, այն ինչ մինչև Խոյի հարաւակողմն ցղալանջարը հարկաւոր էր երկը ու կէս, թերևս չորս օրվան ճանապարհ։ Մի մեծ բանակի համար էսպիսի ճանապարհորդութիւնն ան

կարելի և մարդկային ֆիզիքական կարողութենէ վեր բան է։

Ահա պատճառն, որ ոչ թէ միայն Սիմէօն Վարդապետի ապացուցանելովը, իմ ականատես լինելովը, այլ ինքն պատմութիւնն և այժմեան էս դաշտերի դրութիւններն և Հայերի գնդի Խոր-վիրապէն ուղղորդին ցոյց են տալիս, որ էս տեղրանքն ունէին էն ամէն պայմաններն, որոնք մեր ականատես նախնիքն ընծայում են նրան։ Հաստատուն է յայտ, որ պարոն Րաֆֆին համաձայնվի ինձ հետ և չասէ Մահուն ոչ մի ընդարձակ դաշտ չէ յիշում մեզ Աւարայրին և մի գետ Տղմուտը, ընդհակառակն, ուրախ կլինէի թէ նա իւր կարծիքը հաղորդէր ինձ միջոցաւ և կամենար, միայն թէ ինձպէս մին անդրադէտ ուղեցոյցի կամ Մահմետական պատառ կնկայ խօսքերը, նոյնպէս էլ քարաժայռի վերայ ծակերն, որ Պարսիկներն Մահամետ Հանըֆիէին են ընծայում և որոց նմանը շատ տեղ կպատահիս Ասիայումը, ներս չբերէր որպէս ապացուցութիւններ, աւ ի ջրել մեր ստուգապատում երանելի նախնիքներուն ասածը։

Գալուստ Հ. Ջէրմպանեան.

Սեպտեմբեր 1872.

ի Թիֆլիզ։

ՁՈՂՈՎԱՐՉՈՐԴՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Քաջածանօթն ուսումնական աշխարհին, ընդ երկար ճանապարհորդութեամբն որ Արևելս մանաւանդ ի կողմանս Հարաւային Արարիոյ, Ա. Փոն Վրիդ, հաղորդեաց ինձ ջնեաւելով տեղեկութիւնս զարևելեան առասպելացն ջրաջաց և ջնդական ուսմանց. ,, Անոտիոպաշտութիւնն գտանի յամենայն ազգս երկրի, սկսեալ ի լուսաւորեալ Եւրոպացւոյն ցոկաւրամիան Նեմովպացի. այն և զարմանալի նմանութիւնք և համաձայնութիւնք տեսանին ի նոսա. ո՞ր ոչ յիշեսցէ զառասպելսն որք զրաւէին զմտաղ միտս մանկական հասակի մերոյ ի զարմանս և յերկիւղ. ո՞ր մուտացի զժամանակն, յորում տղայական երևակայութիւնն ցնորական ձևս և կերպարանս յօրինէր ի պահպանել գանձն քաջաց, ի սորա բնակ ոգիսն, ի ձիւաղսն, ի մարգագետինս առ առուակօք տայր կաքաւել Եղիանց 24) և յանտառս թագաւորել շահապետ ոգւոյն։ Այսպիսի տղայական կարծիք և սնահաւատութիւնք անթիւք են առ Արաբացիս և առ ազգս Արևելեանս. ուստի և չանդստին ի գնաւահաս տիոցն խանգարեն շփոթեն զբոցավառ երևակայութիւն և լըսատակութիւն մտաց. այսպիսեօք ծանրացեալ երևակայութիւնք զաւերական ի բնակութիւն տան քաջաց, և զդանձս գտեալս յայնպիսի տեղիս ի պահպանութիւն նոցա հաւատան. յիւրաքանչիւրում լերին ասեն լինել յիշատակեալ ճիւաղացդ և հսկել ի վերայ ծանրագին ականց և ոսկւոյ, և ըստ կարծեաց նոցա ոգիքդ թափառին ի բազմամարդ փողոցս, յանապատս, յանտառս, ի ջուրս, մինչև անգամ ի տղմային և ծածուկ տեղիս ընակարանաց. համարին լինել և յամենայն ընական երևոյթս, ի կայծակն, ի շրջմոլիկ հուն, և՛ն. համաձայնութիւնս այս՝ պարզապէս ցուցանէ թէ հաւատան յայսպիսի գերագոյն էակս (յորոց ցուցանին լուսեայն բնութեանն զօրութիւնք, և տալն նոցա գինքնակամ՝ կառավարութիւն և զուղղակի ազգմունք ի վերայ մարդկան) անկեն ի սկզբանն արմատացեալ է միանգամ՝ ի խորս հոգւոյ մարդկային. և գաստիարակութիւնն տակաւին չվսեաց զարմատս նորա ,, ։

,, Աւ Մահմետականս հաւատան այսպիսի գոյութեանց սուրբ է ըստ Ալուրանին. և զմտացածին աւանդութիւնս 22) և առասպելս իւրեանց ի վերայ քաջաց ի կարգս որոշեալ ունին. ըստ այնմ՝ ոգիք կամ՝ քաջք առ նոսա բաժանեն հնտևեալ կարգաւ. բարձր քան զամենեսեան են քաջք (ճէնք), որք են ընդ մէջ մարդկան և հրեշտակաց. և բաժանեն յերկուս կարգս. Մահմետա-

---

(21) Լէխ, Անդղնաբեն Լէվի, սպի փոքրկի, ի սոցանէ ըստ առասպելաց որ բարին է և տպնիս, բնակի յերկինս, որ չար և զղուելի, ի ներքոյ երկրի։

(22) Տրատիտանիա, ցուցարեն. ի բառիցս դէմոն, ոգի, քաջ, և մանիա, երկիւղ։

կանք (բարիք), և անհատաք (չարք), ամենևքին զի ծագումն ունին այս ինքն ստեղծան ի հրոյ նախ քան զԱդամ. պլնատոր կայան նոցա է ի լերինն Կովկասու։ Մինչև յարարչագործութիւն մարդոյն կառավարէին զնոսա իշխանք մի զկնի միոյ թուով 72. և ի բուց առնալ զվերջինն ամենևքեան անուանեցան Սիւէյման (Սողոմոն), իսկ վերջինն՝ Հան, յորմէ նոքա առին զանունս Հին կամ Ճին, սմա և ցեղն նորա տան Արարացիք զամենայն մեծամեծ շինուածս զօ. զբրգունս ևլն. որոց շինութիւնն ըստ նոցա թուի անհաս մարդկային զօրութեան. թէ հարցցէ ոք զԱրարացին, ոմ է հիմնագիր հոյակապ շինուածոցս, պատասխանէ իսկոյն, Հան - ին - Հան, այս ինքն Հան որդի Հանայ. քաջք ոտանն ըմպեն և ծնանին որպէս ի մէջ համասեռիցն իւրեանց նոյնպէս և յարակցութենէ ընդ մարդկան. ի սոյն միտս ուստմիջք Արարաց զնոսն թէ Բալքիս մեծ թագուհին Սաբայի՝ որ ի տես եղ Սողոմոնի՝ ծնեալ է ի քաջէ. յորմէ առնալ և զհմաստութիւնն. ընդ որ զարմացաւ Սողոմոն։ Ասեն Արարացիք թէ քաջք կարող են առնուլ զամենայն կերպարանս գազանաց, ծառոց, սեանց, քարանց, կայծականց, և շքեղամոլիկ հրոյ. մեծ թշնամի նոցա երկաթն է, ուստի Արարք յորժամ տեսանեն զսիւնաձև բարձրացեալ փոթորիկս, և փայլատակունս կայծականց, աղաղակեն "el hadid,, (էլ Հատիտ) ոմ երկաթ, յուսալով պակուցանել զքաջն և անշնաս զերծանիլ։ Ի միջոցս ամսոյն պահոց (Բամազանայ), Առտուած փակէ զքաջս առհասարակ զբարիս և չարս՝ զի մի վտանգեսին զուղղահաւատս յամսոյն սրբութեան. յայժ զիւրագրգիռք են քաջք և վրէժխնդիր. ուստի պարտ է զգուշանալ յընկենլոյ ի վերայ նոցա իրս, կամ ի հեղլիւ զսրբօք ջուրս և այլ ինչ այսպիսիս. վասն զի ի վրէժ անարգանացն հարուածովք պատժեն զդպիսին, մահու չափ. նաև ըստ կարծեաց Արարաց սքաս գոանին յամենայն տեղիս. ուստի յընկենուլ կամ ի հեղուլ ինչ ասեն (Թէսղիւր, Թէսղիւր), որ է զգուշացարուք. և այս կարծիք պնդացի հաստարակեալ է ի նոսա, զի Թէ զիսնացի ումիք խեղութիւն կամ յանկարծական մահ, քաջաց գրեն զդդն պատիժ։ — Հարցին ցկին ոմն, որ ունէր զմանուկ տապատողն, զպատճառ վնասու որդւոյն, և լուայ պատասխանի Թէ՝ յաւուր միում մանուկն ի ձեռացս յերկիր անկաւ, և շիոթհալ մնացայ ասել Թէսմիւր, վասն որոյ քաջն՝ յորոյ վերայ անկաւ, եհար զնա և վնասեաց։

«Երկրորդ տեսակն խօլականաց՝ են չարագործք. վասն այնորիկ ի նոցանէ առաւել երկնչին. սոքա որպէս և առաջինքն, կարեն փոխել ի վնասական կերպարանս և բնակին յառանձինս և յանշէն վայրս, առաւելապէս ի գերեզմանս, և ի դաշտս պատերազմականս, ուր կորզեն զմեռեալս և ուտեն. բազում անգամ և զկենդանին. սոքա ևս ծնունդք են հրոյ, ծնանին նաև ի յարակցութենէ ընդ իրեարս և ընդ մարդիկ առ ի տկարացուցանել զզօրութիւն նոցա և առաջնոց. ի կիր առնուն ըղձմայկ (ледовъ). յայտցանէ ընտիր համարի այն՝ որ պարունակէ չինքեանն զննուսն և զննն առնանս աստուածոյ կամ մարգարէին (Մահմեթի). զայսպիսի ագատարար գիրս կարեն գրել և քրիստոնեայք՝ որպէս տեսի ես զոմանս, զի ազատէին զքրիստոնեայս և պէրէքայս գրել վասն նոցա ըղձմայկ. և հաւատային զմի և նոյն զօրութիւն և ազդեցութիւն ունել նոցա, որպէս գրեալքն ի Մահմետականաց. բազում անգամ և զայնպիսի իրս ի կիր առնուն, որ ամենևին ի տարբեր միտս է շինեալ յայլոց տեսի ես զԱրար ումն Թաթարական (Բեդուին) որ կախեալ էր զպարանոցէն ծածկոյթ տփոյ ծխախոտոյ շինեալ ի Նիւրեմբերգ. յորում նկարեալ կայր փունջ վարդի և մըկնականջ 23) մակագրեալ վայելուչ իմն, և հաւատայր աներկբայ, փրկիլ նմանէ ի հարուածոց վիրաց. ՅԱրարիա ի հայրենիս գիւղիցն և կաթարտաց ջեր հագոյնս հաւատան յայսպիսիս. անդ են և գազանի արհեստք, յորմէ ամենևքին երկնչին, և ոչ ոք կարէ հասու լինել բաժանին յերկուս կարգս. ի բարիս և ի չարս. բարի ասի՝ որ զօրութեամբ և ազդեցութեամբ բարեաց քաջացն գործի, ուղղեալ ի նպատակ բարի. իսկ չար՝ որ ներհակ առաջնոյն՝ ծառայէ ախտից, վրիժու, սպանութեան, ևլն. և լինի զօրութեամբ չարաց.

(23) Ջեզապուտաքա, կամ Օրկյլ որ առլին։

այլ աննկրկիլ և զատապարտելի համարի վերջինս։ Բոլոր զիտուքիւնն Արարիոյ կայանայ ի գիտելն զկախարդական երևելի հնարս. որոց զօրութիւն հարկաւ ներգործել տայ խաւարային ոգւոց. իսկ շատակերդդ որ բարին է, և անմեղապղծի կացուցանէ զմարդ ի խնդրելն զօգնութիւն քաջաց, են։

,, Ա. Ի՞նչ-էր-Բահմանէ, զիտութիւն վերաբերեալ ի բարին, որ և ասի զիտութիւն ոգւոց. սակաւ մարթի է փարատել զչիւանդութիւնս, զտանել զկորուսեալ կամ գողացեալ իրս, իմացանել զանձրևւ, և լն։ Ականատես եղէ և ես զօրութենէ զիտութեանս յարևելս. այլ անգամօր կամակատար ոգի, խիղճն էր անանդորր. մեծագին իր ինչ գողացեալ էր ի տանէ տաճկի դնդապետի ումեմն և ամենայն հանգամանք կարծիս տային լինել միոյն ի ծառայից. կոչէլ նա զնպատեան գտերվիշ մի Արաբ, որ ճանաչիւր քաջահմուտ զիտութեանս. կալան յառաձին տեղւոջ զծառայս, տերվիշն առեալ ի ձեռն զսեաւ ագաղաղ եղևն, և աղօթս արարեալ զանազանս ի զէմն հրեշտակաց և քաջաց՝ հրամայեաց ծառայից ծակել սաղաւ զմիս նորա, պնդելով թէ յորժամ ձեռն յանցաւորին մխեսցի ի նա, իսկոյն հաւ խօսեսցի. մի զկնի միոյ նկին ծառայք մատչել անդէն ի փորձ. և տերվիշն զդուշութեամբ զիտէր զնոսա. յայնժամ գողացողն՝ որ աներկմիտն էր ի զօրութիւնս քաջաց, և ի զիտութիւնն տերվիշի, զուշակելով գմօտալուտ վտանգն, զդոզի հարաւ. և տերվիշն յայտ է թէ չկամեցեալ թոյլ տալ նմա զալ և ի փորձ, զյանցանս եղ ի վերայ նորա. և նա անդէն խոստովանեցաւ։

Էլ-Ռ՞ոբբդ, զիտութիւն գրելոյ զբազմազօր մրկարար հմայիկ. արգելեալքն և պատապարտելիքն, որք և անուանին զիտութիւն սատանայի, են։

Է՞-Սէմայէ՞. ունելով զայս զիտութիւն՝ կարէ մարդ նիզակաւ կամ վաղակաւորաւ ծակել և հատանել ըստ կամս ղմանն մարմնոյ, առանց վէրքս և սպիս թողլոյ. այս զիտութիւն տայ կոչել և զքաջս։

Էլ-Ռեմլէ, զիտութիւն աւազահմայութեան. տալ ի զրութենէ անկանելոյ քարանց և խեցեմորթից ի վերայ աւազոյ, գուշակեն զապագայ բաղդ մարդոյ։

Է՞-Սէէ, զիտութիւն փոխակոյ զմարդի կենդանիս և յայլ իրս. պարսաւին առաւելապէս բնակիչք Մասկաթոյ հարաւային արևելեան Արաբիոյ, իրրև առաջինք և կիրառուք այսպիսի անարգ զիտութեան։ Սոքա՝ թուի թէ փոխանակ յանձանց ի բաց մերժելոյ զայդ նախատանաց անուն, չանան ևս քան զևս հմտաւ հանել ի նմին, առ ի երկնեղուկս արկանել ի զրացիս իւրեանց, Հարցի ևս զայսմանէ ցՄասկաթայի վաճառական ումն, որ հաստատեալ զլուեալս իմ, սկսաւ պատմել ինձ զհետևեալսդ։ Վաճառական ումն ի Մասկատ խոստանայ այրի կնոջ միում ամուսնանալ ընդ նմա. այլ զկնի զղջացաւ. և առ ի խոյս տալ ի նմանէ եղ ի մտի գնալ ի Բասսորայ, ասելով կընոջն թէ երթամ զործով, և յետ այսչափ ժամանակի դարձայց կատարել զնոստուքն իմ. իսկ այրին՝ որ յառաջագոյն զգացեալ էր զառն սիրոյ նուաղումն, ոչ պատրեցաւ ընդ բանս նորա. զիտաց զպատճառ մեկնելոյն, և իրր զրաւական խնդրեաց զքանի մի հերս գլխոյ նորա. ուրախացաւ այրն ի միտս իւր, զի դիւրաւ կարաց բաժանել ի նմանէ. ուստի աճապարեալ առ վարսավիրայն, պատուիրեաց հատանել զհերս գլխոյ իւրոյ և ծարկել ի թղթի. իսկ վարսավիրայն, գմտաւ ամենայն կախարդական արհեստից քաղաքին, զիտաց զվան էրն և զվնասակարութիւն իրին. և հարց ցայրն զպատճառ խնդրելոյ հերացդ, և նա պատմեաց նմա մի առ մի. յայնժամ խորհուրդ տայ նմա չարկանել ընաւ ի ձեռն կնոջն զհերս գլխոյն, այլ հատանել փոքր ինչ ի հերաց սեաւ այծու և տալ յայտնելով և զպատճառն. զի թէ ոչ դարձցիս ասէ ի ժամանակակէտն, փոփոխութիւն լինի ընդ այծն. լուեալ զայս առն, արար ըստ խորհրդոյ նորա և զայծն տարաւ ընդ իւր ի Բասսորայ. անցին քանի մի շաբաթք ի վերայ կէտ եղեալ ժամանակին, և ահա ի միում առաւօտու փոխանակ ըսկզբ առն զսովորական ձայնն այծու, լսէ վհանչ անախորժ. և երթեալ տեսանէ զգլուխ կենդանւոյն ի խոզնին փոխեալ։ ,,

Ի՞նչ-էր-Ռ՞եշէմ, մանն զիտութեանս Է՞-Սէէ, ի կիր առնուն զլսաւերագոյս կանայք ի գերել զմիտս արանց կամ յառնուլ զվճիռ յանհաւատարիմն սիրելեացն մահուամբ կամ այլով

պատուհասիւ. Պատմէին թէ, կին ոմն բարձի թո-
ղի լեալ ի հոմանւոցն, էառ զօձառ, և ասացեալ ի
վերայ բանս ինչ ընկէց ի ջուր. որչափ լուծանէր
օձառն ի ջուրն, և այրն ընդ նմին երթալով հր-
թայր և տկարանայր. մինչև ի սպառն, սպառե-
ցան և աւուրք կենդանութեան նորա ,, :

Ի-ւ-ն-նէ-պ-ի, աստղաբաշխական գիտու-
թիւն. յոյժ յարգէր մինչ ցարդ առ Արաբացիս և
առ արեւելեանս առհասարակ. նոյն՝ որ ինչ գիտու-
թիւն գուշակելոյ զապագայն երկուց անձանց ըստ
նշանակութեան թուոյ տարւոյ անուանց իւրա-
քանչիւրոց. զայս գիտութիւն ծածկեալ պահեն
խնամով յոյժ, որում չկարացի բնաւ ես հասու
լինել ,, :

Ի-ւ-ֆ-էլ-ֆ-ի-ա. տեսի ես զերկուս հետևողս
այսր գիտութեան. յորոց մին պնդէր, թէ
կարող է յօրինել զօսկի. իբրև հարցի քնա
զպատճառ աղքատութեանն իւրոյ, կրկինաց, թէ
,, քաջք հնազանդին ինձ առնել միայն զայնչափ,
որ ընդ զառօրեայ պիտոյս իմ. առաւել ինչ ոչ
կարեմ ,, . իսկ միւսն, որ թուէր պարզախօս ոք,
խոստովանեցաւ, թէ ,, վասնեցի զամենայն ինչս
իմ, և մինչև ցարդ ընդ վայր էանոյ ճիպն անձին
իմոյ. թերևս հնոյց նպատակի իմոյ այլ սա ոչ
խոստովանէր զօգնութիւն քաջաց ի գործս իւր ,, :

Բայց յայսմանէ, այս ինքն ի հաւատալոյ դա-
ջարձակ իշխանութեան գերբնական զօրութենանց
ի վերայ մարդկային բազդի և գործոց, հաւատան
Արաբացիք և ի կորստաբեր ազդեցութիւնս չար
աչաց, որ գտանի և Եւրոպա, առաւելապէս ի
հարաւային կողմանս նորա. բայց առաջինքն գի-
տեն ի կիր առնուլ զղանագան եղանակս՝ ի փըր-
կել զանձինս և զընտանիս ի չար աչաց որպէս
կապել ղմնայնկ ընդ շղեղս (կռճակ) մանկանց
կամ զկապոց ինչ լցեալ սոխով, աղիւ, ևս և
հողով գերեզմանի մարդարէին, որ առաւել ըս-
քանչելագործ համարի ի նոսա. իսկ ի վերայ զը-
րանց առկախեն սովորաբար զսոխ և զպարկս
պաղեղի, աղի, ևլն. Թափառող Արաբացիք (Պե-
տէվին) 24) առ ի պահպանել զուխտս իւրեանց ի
վնասակար աչաց՝ զոր ինչ միանգամ գտանեն ի
ճանապարհին արկանեն ի պարանոցս նոցա, որ-
պէս ղհին մուճակս, հանդերձս, պայտս ևլն. բայ
ասի եթէ զոր յԱրաբաց կասկած էառ թէ չար
ակն հայեցաւ մահանօք ի վերայ իւր կամ որդւոց
իւրոց, ի զարնուցանել կամ տկարացուցանել
զվնասն, առնու կտոր մի պաղեղի ըստ մեծու-
թեան ընկուզոյ, արկանէ ի հուր, ասացեալ երից
զառաջին և զվերջին զլուխս Ղուրանին. իբրև
պաղեղն այրեցեալ դառնայ ի փոշի, խառնեալ
ընդ կերակուր ինչ տան սեաւ շանն յուտէ. այլ-
ևիսկանակ պաղեղի այրեն զմահ ինչ հանդերձի
նորա որ անկաւ ընդ ազդեցութեամբ չար աչաց.
և ասեն երից զառաջին զլուխ Ղուրանին. իսկ
կանայք նոցա առնուն զթուղթ և ծակեալ զայն
ասեալ, ասեն. սա է ակն այս ուրուք, որ մահա-
նեք ակնարկեաց յիս. և յորժամ մեկնի ի տանէ
նոցա այս ոք կամ կին, զորմէ կասկածին լինել
չարակն, բնականն զանօթ ինչ կաւեղէն զկնի նո-
րա ,, :

,, Ոչ սակաւ ազդեցութիւնս ունի ի վերայ
կենաց նոցա և հրաղն 25) եթէ հրաղեաց ոք ի
դիշերի և մեկնեցին զայն ի վնաս, թողու զամե-
նայն գործս իւր և դառնայ իսկոյն ի խորհրդոցն,
չգործել զկամեցեալն՝ թէև կարէր լինել նմա օգ-
տակար զամենայն աւուրս կենաց. Պատմիչք Ա-
րաբացոց այսպիսեացս բազում՝ ունին օրինակս.

(24) Բեդուին (պետեվի), թափառական Արաբ, որ կեայ աւազակութեամբ։

(25) Դժբազդաբար այս ամենայն նախապաշարմունք Ա-
րաբացւոց անտի ի մեզ սրտմտա սրձակեալ մինչ ցարդ մնան
անջնջելիս։ Ո՛ր անգիտանայ ասել, թէ նֆիմէբոյի ասացեալ
երազահանն որչափ յարգ և վնն գտանի ի ժողովուրդս մեր.
նա թէ առաւել քան զբազում օգտակար գրեանս. մնաս ի
տուն գիւղացի զահանայից և տիրացուաց, ոչ այլ ինչ գերա
գտանես անգամօր, բայց թէ նֆիմէբոյի, և առ գրան նոցա
քանի քանի անձինս, զոյգ գուբպայ կամ հաս ընդ անթովք
եկեալ ի խնդրել զմեկնութիւն երազոյն, և զգուշակութիւն
աւուրց, զի յիրաւի «աւազ եաես», զինչ է արգիօք, — «հալալ
ուոճիկ է». «ի բաղանիս լուացաւ», — «չարչարանօք ուոճիկ
է». «գոմէշ եաես», — «չահէ և ուրախութիւն», էր վանդ
զի գոմէշ է. «գդում եկեր», — հիւանդութիւն է», «նախիր
եաես, — աւազ է» որ յարաբերութեամբ. «վանք և աբեղայ
եաես» — նեղութեան ամբոխ է», էր վասն . . . . . համ
թէ բարի է, ասէ, արդեօք օրն թէ վատ, «սերմանել տնկել ի
ճանապարհ երթալ, հիմն արկանել յաջողեսցէ, թէ ոչ». հե-

եմէ ոք պատմէ այլում զանուրջս զիշերոյ՝ որ ունկնդիրն կայ՝ պարտի ասել անշուշտ ,, Քէյֆ ինչպէս՞ ,, (տացէ տէր զբարին). յորժամ ըսեմ՝ փի ոք յաղվկաձից տեսլենէ՝ հարկ է նմա երից ձեռանել ընդ ձախն կողս, և երից ասել զառաջին և զվերջին գրեսս Ալուրանին, զի զերծցի ի փորձանաց։ — Առ Թափառական բնակիչս Հայաստանեայց հարաւային մասին Արարիոյ գոյ և այս նախապաշարումն, զոր ահաւասիկ ի մէջ բերեմք. եթէ ոք, ասեն, ի մէջ քայլից առնէ զայլ ոք ընկերանեալ. ոչ միայն զվիւանդութիւնս զոր ունէր, այլ և զոր ունելոցն է յապայս՝ թափէ ի վերայ նորա։ Վէպ եղև երբեմն զի ուղղեցոյցն իմ՝ լուցեալ էր խարոյկս, և թափառական Արաբացիք նստէին շուրջ զնովաւ. ես անտեղեակ սնոտիապաշտութեան նոցա՝ քայլս առի զմիոջ ի նոցանէ առ ի վառել զգլանակ իմ. յարեաւ անպէն յանկարծակի այրն, և սկսաւ հայհոյել զնս, նոյնպէս և ուղեկիցն իմ. և ի հարցանել իմ զպատճառն՝ իբրև լուայ թէ վասն ածանցելոյ ի նա զնևրկայ և զապագայ հիւանդութիւնս իմ, առ ի անդորրել զվըդովեալն յանձն առի ընկողմանել ի վերայ գետնոյ և նա ընդ իս զնոյնն առնել, որ ինչ յառաջն ես. և ապա սկսաւ ուրախանալ յոյժ, զի ոչ միայն ըստ կարծեաց իւրոց գարձոյց ի պղտս իմ զպատս իմ, այլ և զնեբսն, զնկճալսն և զդալկացն ,, ։

,, Ըստ օրինաց Մահմետականաց անմաքուրք, այս ինքն անընդունակք աղօթից համարին՝ որք ունին զբօրատուրիւն կամ զայլ ախտ այսպիսիս, գարձեալ որք հպեցան ի դէզ անասնոյ և որք ընդ կանայս անկան, մինչև առաջինքն չգտցին զառողջութիւն և վերջինքն չկատարեցան զօրինաւոր հաճոյութիւն, չկարեն աղօթս (նամազ) մատուցանել. եթէ ունայ զմի ի վերոգրեալ ապրատոցդ զատաչինն յառաւօտս ողջոյն ետ ուրեք, անբաղդութիւն առթիցց նմա. և եթէ և մնայ ի տան հիւանդի, վատթարագոյն գտանի հիւանդն ,, ։

,, Արարացիք յամենայնի զիպաց անգամ հանին մեծ ինչ նախագուշակութիւնս՝ որ ունի միշտ աղեղնաւորութիւն ի վերայ ամենայն ձեռնարկութեանց նոցա, տեսի ես զգունդս Թափառական Արաբաց (պէդէյ) որք երթեալ յառաջագնել, գարձան յետ քառորդ ժամու. ըստ որում տեսեալ էին օձ սողուն ի ճանապարհին. վատ գուշակ է գարձեալ յորժամ յառաւօտուն մինչև ցլուացուիլն խորտակի կամ բնկանի ինչ, կամ թէ իակոյն ընդ արտաքս կանգնի ի տանէ, երևեցցի վայրենի թռչուն 26). իսկ թէ թռչուն կամ օձ ի բաց գնան ի ճանապարհէ, բարկացողք իրաց առիթք վարկանին. ևս և ըստ անհաւատարութեան մերթոց թիւկանց ուղտոց և ոչխարաց հմայեն գարձեալ բարի կամ չար հիւանդութեան հետեւումն ,, ։

,, Որպէս Ն. թուրքացիք, նոյնպէս և Արաբացիք՝ նշանաւոր աւուրց տան բարկացող կամ ինաաւթի ազդեցութիւն ի վերայ գործոց. միայն վերջինքն ինչ ինչ տարբերութեամբ անդարևելս հասմարին, կիւրակէ օր մահուան մարգարէին. երկու-

---

ունգն սղջանայ թէ ոչ. կորուստ գառնի թէ ոչ. որ ծնանի, հզի և խոնարհ լինի թէ ոչ. կամ չնորհաւոր և պատերազմող. վոյ այնմիկ, ում պատահմ տեսա. Դեղչեան թէ ոչ օրն չէ բարի, մի գներ, մի վաճառեր, մի ի դուռս ելաներ ս, եր վասն, ոչ դի այսօր քակուց Նարաբեգովնասոր գտատարն. մնգգ այսօր բերքն ղընծայան, Հերովդես այսօր խաբեցաւ ի մոգսն ս. աչն. եւլն

Որչափ արդեօք գովաբեան արժանաւոր լինիին սրբազան քարոզիչք մեր, եթէ փոխանակ ամենեցուն յայտնի և դարաւոր ժամանակաց հետէ կրկնեալ և քրքրեալ նիւթոց, երբեմն յանձն առնուին հաճախութեամբ զայսպիսեացս տատրակութիւնս ապրեալ ծանուցանել ողորմելի ժողովրդեանն զնաւթիւնս և սրմտաչարանց հանելով զնախապաշարմունս և ամէնզրպտագոյնս թիւնս, անկել ի տեղի նոցա յանգտաւանիկ մտաց սերմունս ապաչինական ազգասիրական և հոգեշահ խրատուց բարեաց։

(26) Ի մէջ անաւտմն մասին հասարակութեան (խաւսց) նախապաշարմունս ձախորդ իրաց տալիս տայ կարծել, յորժամ յերևնեն ի տանէ, կամ յերթալն զձանապարհայն հանդիպեսցի ուստիք հոգևորական, ուստի բազում անգամ պատահի, զի տեսեալ զհոգևորական թշնամեն ի գիտին զի զերծցին ի ձախորդութենէ. կամ տեսեալ զի յառաջագ գայ, ինքեանք վերադառնան, մինչև նա անցցէ. օրինիք սերտութեանն պատճեն զայսպիսիս, ըստ որում մեզանէն ընդ դեմ պատահ այլոց։

Առ մեզ չարագուշակ է, յորժամ աք մատրուկ եյնանել ի ճանապարհ կամ ձեռն արկանել ի գործ ինչ անգէն ինքն կամ այլ աք փախցնայ մեանգամ, — հատկիչ ասեն, (ապրը եկաւ). իսկ եթէ երկից փախցնայ, սրբանան զի յաջողութիւն

շաբաթի և Հոգեքշաբաթի, յորս չարչարեցան բաղումք ի սրբոց նոցա, բայց գլխաւորապէս Հաբաթ օրն և վերջին Հոգեքշաբաթին Սաֆվեր ամսոյն. ի սոյն աւուրցս են և բարկացողք, վասն սահմանեալ գործոց. որպէս Կիւրակէ վասն պըռակակատարութեան, և Հինգշաբաթի, վասն Հոդոյ ջարիւն. եթէ տօնախմբութիւն Բայրամին անկանի ի վճռաժողովիկ աւուրս՝ բարի է յայնժամ օրն. բարի են և առաջին օր ամսոյն որ և իցէ, և Ուրբաթն վերջինս, զի նոցին Կիւրակէն է. ուստի և անուանի Էլ-ֆաթիլ (ընտիր), այլ աւուրք չունին զնշանակութիւն ,, : —

Տեսի ի Վորի զԵկեղեցին Հայոց նորակառոյց, ոչ այնչափ շքեղաշէն. յարևմտից էր պատկեր Աստուածածնօրն, և քարկոծման սրբոյն Ստեփաննոսի, ոչ ի Հռոմ ըստ Ճունական ախտրժի, այլ ի սպիտակ գէմս նկարեալ. Եկեղեցին չունէր ըզքանդակս և նկարս. էր շինեալ ի քարանց և յաղիւսոյ. ըստ օրինակի այլոց շինուածոց և եկեղեցեաց Վրաստանի:

Վորի՝ ի լերդս տեղական, նշանակէ լեառն. սա իցէ Հերևս Քորզենային Ստրաբոնի. Առ քաղաքաւն՝ ի վերայ առանձնացեալ բլրոյրակ ըզոյ միում գոանին աւերակք բերդի. ի ստորոտ լերինս ընթանայ գետ սրաւազ. մերձակայ սահմանք բնդմէնաւրք են և զարդարուն բուսականօք. աւերեալ ամրոցն ունի զկերկուս անցս. մի ի քաղաքին կուսէ՝ ուստի և ես մտի, միւսն ջրոյ, ուստի տանէ ճանապարհ դաշտնի յառնուլ զջուր. ի վեր անդր երկու որմունք և աշտարակք կանգուն կային, այլքն յատեր. նկատեաց յատերսն ճնացորդք կամարաց, ներքնատանց, ջրհորոց, և արգելարանաց. յերկիւղալից ժամանակս բնակիչք Վորւոյ աստ փոխադրէին զինչս իւրեանց. շատք ունէին և սեպհական փոքրիկ տունս, զորս տային ի բնակութիւն այլոց կարի սուղ գնոյ.

Առաջնորդողն զիս ի Վորի տեղացի Հայ ոմն պատմեաց ինձ զՀետագայ ժողովրդական աւանդութիւնն, ոչ սակաւ հետաքրքրական. Հաղար ամաք յառաջ բոլոր երես դաշտիս ծածկեալ էր ջրով մեծատարած լճի միոյ. ի միջի լճին կղզեակեալ կայր այս լեառն, յորոյ վերայ շինեալ է յիշատակեալս ամրոց. դեպ լինի երբեմն Թագուհւոյն (Վրաց) Թամարայ գալ աստանօր ի զբօսանս որսոյ, ունելով ի ձեռին բազէ ընտիր նմա սիրելի. որ զհետ պնդեալ ագաւնւոյ չհեռաս նմա, այլ անցեալ ընդ լիճն հանգեաւ ի վերայ կղզւոյն, կամ լաւ ևս ասել ի վերայ լերին, գարձ չարաբեալ ընդ այնչափ կոչ և աղաղակ Թագուհւոյն. ուստի խոստանայ Թագուհին տալ զկէս Թագաւորութեան իւրոյ այնմ որ գարձուսցէ զբազէն. անկէն քաջասիրտ ոմն յառագանդն մտեալ երիվարաւն ընդ լիճն ի լողս, հասս կալաւ զբազէն. այլ ի գարձին հեղձան ի ծփանս ալեաց ջրոյց և ինքն, և ձին և բազէն. յայնժամ հրամայէ Թագուհին բանալ անցս և ածել զջուր լճին ի Կուր գետ, իսկ ի վերայ լերինն կանգնել զայս ամրոց, ուր անցոյց զմնացուածս կենացն ի տխուր առանձնութեան.

Աւանդութիւնս այս յուշ առնէ զաւանդութիւնս Եւրոպականս ընդհանրապէս. այլ ի մասնաւորի զՎերմանականս ժողովեալս եղբարքդ Գրիմմ: — Ժողովրդական աւանդութիւնք և ասացք հնագոյն են քան զայժմեան ազգս. պատկանին միայն նախնեաց ազգի, սկզբան նաև մարդկութեան, յորմէ յառաջ եկին սրիշ սրիշ ազգք և պահպանեցին զայսոսիկ հարստութիւնս ի գանձարանի յիշողութեան հազարաւոր ամաք. աւանդութիւնք փոփոխին միայն ըստ անձանց և տեղեաց, այլ գլխաւոր մասունքն և բովանդա-

---

սպասէ նմա. գարձեալ, եթէ գանի մի վայրկեան անթարթ պահեցան աչքին արեւանուագք ալոց ուրուն, (սովորական ինչ է մարդոյ որ ի խոկմունս մտաց ընկղմի) նշան է թէ հիւր գայ, եթէ ի թիեղն գնայ, պատառ խմորոյ թուխաւ է բաց, հիւր գայ. եթէ կատուն լռանայ թաթիւք գերեսս իւր, հիւր գայ ևլն. ևլն.

Որչափ շատ և շատ են այսօրինակ աւանդութիւնք և նախապաշարմունք ի գեղջուկս և ի գաւառաբնակ ժողովուրդս մեր, (եթէ չասեմք և ի քաղաքս). այս և ընդ այն մի երկուացել թէ ճիշդ խուզարկութիւնն կարէ նշմարել ի նոսա ոչ սակաւս մնացեալս ի նախնի կռապաշտական դարուց անտի, յորս անսովապաշտութիւնն ի մէն մի գիպուց և գայլից հանէը հեաւանս. բայց ախտս զի ի մեղ ցարդ ոչ ևս փոթ յանձին կալաւ հետազօտութեան դոցին յիշատակելոցդ և նմանեաց, որք ի գաւառս գաւառս տմմագրութեանն և քանասիրութեանն. պատկ գպնին հիւսելն ի գլուխ այնր, որ գանձն ի դոցին տայր փննութիւն և ի գէր

կուքիւն իմաստից կան մնան Նոյն. Ինն վերոյիշեալ հետի ի հետևեալ Զալի իշխանէն բոստի ի ձախակողմն Ճանապարհին տեսի մեծադիր աւերակ՝ մերձ աննշան գիւղ միւռ՝. բարձրաբերձ որմունք գրաւեալ ունէին զընդարձակ տարածուքիւն. դուռն անկանէր ի հիւսիսակողմն և ի վերայ նոցա աշտարակ. ի նկրքս աւերակք մանուանց և մեծաց շինուածոց. պատմեցին ինձ, թէ էր սա երբեմն նշանաւոր վանք անուամբ Սանթ-վարվաղ, (զոր Ֆլաւիրոն անուանէ ,, Ցամիամվիսի ,, վանք՝ այս ինքն վանք երից գլխոց). ի միջակիտի շինուածոցն գտանիւր նկեղեցին անվնաս կացեալ բաց ի քանի մի խախտուածոց տանեաց. այս նկեղեցի մի է յամենաչքնաղ և հոյակապ շինուածոց տէրութեանն Ռուսիոյ. արտաքին տեսք սորա և ներքին կազմուածն են ըստ Բիւզանդեան ախորժի. չորս մեծամեծ սիւնք պահպանեն զբարձր կամարուղկէն Տրապղի 27) որ ունի զձև քառակուսի, վասն զի զմասն երկայնութեան նորա հատեալ ունի բեմն. — Եթէ շինուած տաճարին ամբողջապէս առեալ Բիւզանդեան ճարտարապետական արհեստին գործ համարեսցի, դարձեալ ինչ ինչ մասունք նորա առաջի առնեն մնալոյ խառնուրդս ճարտարապետութեան Ցունացւոց, Գոթացւոց, Մալթիտանացւոց. չորս հոյակապ սիւնքն են ի ճաշակ Գոթացւոց, կամարքն Բիւզանդեան, լուսամուտք քանդակք և նկարք Մալթիտանացւոց. ի մէջ կամարուղկէին որպէս ընդհանրապէս ի Ցունական եկեղեցիս է տեսանել՝ նկատեալ է Փրկչական պատկեր օրհնող աշխարհի. նկարչութիւնն չերևի հնագոյն քան զվիրջ ԺԵ. դարու, և է գործ Իտալացի արհեստաւորաց, որք պատահմամբ անկան ի Վիրս. այլ եկեղեցին անշուշտ հնագոյն է, և թերևս հիմնարկեալ յայնմ ժամանակի յորժամ Վրաստան սերտ յարաբերութիւն ունէր ընդ արևմուտս, գուցէ և ընդ Հռոմ. Ես համարիմ նա և թէ այս եկեղեցի որպէս և այլ բազումք որք ի սահմանս տարածեալս ընդ մէջ Սեաւ ծովու և Կասպից, են գործք վախճանի միջին դարուց, յորս Գենուացիք իշխէին ափանց Սեաւ ծովու։

Ցայսոսիկ կողմանս առ Ճանապարհաւ Տփղեաց և յամենայն ուրեք տեսանին անհամար աւերակք բերդից, ամրոցաց, մեացորդք պատերազմական, և ըստ պատմականին նշանաւոր ժամանակաց, միջնոցն ի նմա դարուց. ասիւնք Կուր գետոյն ըստ յիշատակելոցդ նոյն են որ ինչ ասիւնք Բնկն գետոյն. այլ այս ինչ է զանազանութիւն՝ զի զտեղեացս պատմութիւնն լուէ, չէք հիմնաւոր տեղեկութիւն, կամ թէ մնան տակաւին ասանց հետազօտութեանց. —

Զուղի կալեալ ի 10-ն Օգոստոսի եկաք ի Մցխէթ, որ էր ի հնումն արքայանիստ քաղաք Վրաց մինչև 1489 ամն, յորում աթոռ թագաւորութեան փոխադրեցաւ ի Տփղիս, իսկ այժմ աննշան և փոքրիկ ասան. աւերակք եկեղեցեաց ոմանց վկայք են նախկին մեծութեան նորա. ըստ աւանդութեան զայս քաղաք հիմնեաց Սկիթոս որդի Քարթլոսի, թոռնորդին Նոյի. Մցխէթ անկանի առ Կուր և Արաւ գետովք։

Ատ է մայր Եկեղեցին Վրաց, յորում ղօծումն ընդունէին կաթուղիկոսք նոցա, իսկ ի հնումն թագաւորք. յորոց բազմաց մարմինք ամփոփին ի նմա։ Ի սմին եկեղեցւոյ որպէս առանձին սրբութիւն պահպանի մասն հանդերձի Փրկչին *)։

Այս Եկեղեցի հիմնեալ որպէս աւանդի ի Ժ. դարու, աւերեալ է ի Լանկթամուրայ, ապա կրկին նորոգեալ ի 1414 ամէ 1424 ամն, կանաչագոյն քարամբք, մի և նոյն ճարտարապետութեամբ՝ որպէս է եկեղեցին Սանթա-վարվաղայ. շուրջ զնովաւ գոյ պարիսպ և հնոտի տունք բնակարանք քահանայից. որմունք ծածկեալք են միջակարհեստ նկարուք. և որպէս ինձ թուի

(27) Տրապղի, բառ Յունական, որ ըստ նոցա հնչի Տրապիզայ, սեղան, կերակուր. յայսմանէ առեալ, Տրապիզ կոչի սեղանատուն կրօնաւորաց, դարձեալ մասն տաճարին, յորում յատկին չորս դաս Քրիստոնէից յետ պատարագի ուտելին ղնաչն։

(*) Ի վերափոխման մայր եկեղեցին Մոսկուայի և յեկեղեցւոյն արքունի դրան Պետերբուրգոյ գտանին նոյնպէս մասունք Փրկչական հանդերձի, զոր Աբբաս Միրզայ արքայ Պարսից ի սիրելն իւր Վրաստանի ընծայեաց կայսերն Ռուսաց Միքայէլ Թեոդորեան։ Հեղինակն։

դործք են Եւրոպացի արհեստաւորաց վերջին ժամանակաց. Ռուս ճաշակ զառաջինն մուծաւ ի Վիրս միայն յամի 1750· յորմէ տաճարին հաստատեալ կայր բոլորակ քար մի՝ որ ունէր մերձ երեք ոտնաչափ տրամագիծ, ի միջի նորա խաչ մի կորնթարդ քանդակեալ։ — Խաչք արևելեան եկեղեցւոյ ունին զառանձին ձև ինչ։

Ի թագաւորութենէ Բագրատայ երրորդի՝ որ տիրեաց ոչ միայն Վրաց՝ այլ և Աբխազաց (1000)՝ սկսանի նշանաւոր ժամանակ պատմութեան Վրաց. որ յամի 1206 յաւուրս թագուհւոյն Թամարայ (զոր Վիրք միշտ թագաւոր անուանեն) առաւել պանծալի հանդիսացաւ. սա է զարագլուխ ազգային լուսաւորութեան նոցա. (յամի 1064 դրուածք Պղատոնի և Արիստոտելի փոխեցան ի լեզու Վրաց). զկնի յառաջ դայ Վրաց ճարտարապետութեան ծնունդ առեալ ի Բիւզանդիականէն։ Մայր Եկեղեցին Մցխեթի կառուցեալ ի սմին ժամանակի, աւերեալ է ի ԺԵ. դարու ի Թամրլանայ, և նորոգեալ դարձեալ ըստ առաջնոյ ձևոյն։ Ըստ աւանդութեան, այս Եկեղեցի շինեալ է յօտարաշխարհիկ առնէ ումեմնէ. իսկ Եկեղեցին Սահմանոսի Քիմիթիոսի, յաշակերտէ Նորին. ճարտարապետն տեսեալ զի աշակերտն գերազանցեաց զան զինքն, հատանէ զձեռն իւր. միւս ևս աւանդութիւն ոամիկ հաստատութեան ասէ, թէ կաթուղիկեայք երկուց եկեղեցեացդ Մցխեթի և Սահմանոսի Քիմիթեայ միացեալք են ընդ իրեարս անտեսանելի երկաթի շղթայիւ, յորոյ վերայ սուրբք երկուց եկեղեցեացն անցեալ յայց երթան միմեանց։ Աւանդի գարձեալ, թէ այսպիսի շղթայ մի միացուցանէ զվանքն Գերգետայ որ ի վերայ Քվիմիշ-մթա լերին ընդ վրանին Աբրահամու ի վերայ Կազբեկի, և ընդ այն միանձնուք առնեն ճանապարհորդութիւն։

— Ամենայն ուժք բացերև է Նմանութիւն սոցա ընդ Եւրոպական աւանդութեանցն։ —

Ի մետասաներորդ ժամուն մուտ կալաք ի Տբլիսիս (Թիֆլիզ), որ յետ Մցխեթայ մայրաքաղաք եղև Վրաց, իսկ այժմ Համարէն երկրի որ յայնկոյս Կովկասու։ Թիֆլիզդ անուն յառաջ եկեալ է ի բառէս Փիլիս (оплись). զայս անուն էառ այս քաղաք ի մերձակայ ջերմաջրից. ըստ որում արմատ բառիս ѳль (ֆլ) և тепль (ԹԵՓԼ) ի լեզու Վրաց նշանակեն ջերմ. և ի բառէս теплицъ (ԹԵՓԼԻՑԽՕ) եւրևի յառաջ եկեալ ի լեզու Սլաւոնացւոց առնուդ տեպլօ (теплов). ոչ այս ձայն Լատինականն հյէ Tepidus (ԹԵՓԻԴՈՍ)։ Տիփխիս՝ յայնմ կուսէ ուստի է սկիզբն մերից ճանապարհին ի նմա, եւրևի քաղաք Եւրոպական. ուղղաձիգ փողոցք, միակարգ նորաշէն տունք, ակնախտիղ մշեմնոցք, դրամաճառանոց, դեղարան, սրբճարանք, արքունի շէնք բազումք, հոյաշէն ընակարան կառավարչի կողմանցն, գմբեթաւոր եկեղեցիք, զանազանատարազ Եւրոպացի զգեստի, որք տեսանին ի փողոցս, և այլ այսպիսիք, ի միտս այցելու Եւրոպացւոյն զՀայրենի երկրին իւրեանց զարթուցանեն յիշատակ, զնմանութիւն նորա բերելով։ Զայս ման հիմնեցին Ռուսք. իսկ միւս ման քաղաքիս Ասիական ճարտարապետութեամբ և ձևով, ունի կրպակս, երկայն փողոցս, դարբնոցս, և շուկայս գերձակաց և կօշկակարաց։ — Որպիսի՞ զանազանութիւն յայդս և ի կերպարանս։ Աստ խոնին բազմութիւնք զանազան ազգաց և ամենեքին զգենուն զանազանս. Թամարն զկուր զգեստ՝ յորմէ յառաջ եկեալ տեսանի յայտնի ածրագն անուանեալ Լեհացի զգեստ. Նիհարադէմ և Թուխ Պարսիկն զերկայն և զլայնն, արիասիրտ և համարձակ Քիւրդն զլայնազգեստ կարմիր և սպիտակ, Լեզգին և Չերքեզն զերեսնանց. և այսպէս անձնիւր յիւր տարազ և կերպարան տեսարան կազմեն գեղեցիկ, այս ինքն է աստ միայն ի հանդէս բերեալ լինին տիպք կերպարանաց և զգեստուց Ասիոյ և Եւրոպիոյ միանգամայն, զոր անհնար է գտանել այլուր։

Բնակարան իմ եղև աստ առ Ֆավթեցի զաղթական ոմն Զայման անուն ի ձախակողմն Կուր գետոյ։ Էր սա այր ընդունակ, հանճարեղ, առողջարար, յոյժ տեղեակ բարուց ազգաց և հանգամանաց կողմանցն, ըստ որում անձամբ շրջեալ էր ի տեղիս բազումս և տեսեալ զամենայն. ուստի ինձ պիտանի ի մասին տեղեկութեանց։ Ետան ինձ և այլ պիտանի ծանօթք ի Տփխիս. Պ. Կոցեբու, որ քաջահմուտ ոք էր, այլ ոչ սիրէր հաղորդել այլոց զոր գիտէին. Նահանգապետ Պ. Գուրկս,

այր մեծարոյ և սիրելի, որ ոչ սակաւ տեղեկութիւնս ետ ինձ, և օգնեաց ի բազում դէպս. կօշկակար Պետրոս . . . ուղեցոյցն և թարգմանն իմ Վիրգինբերգի, որ ի մանկական հասակի իւրում եթող զհայրենիս և ընդ աղտկեցաց իւրոց և հաւատակիցս հայոց եկն բնակեցաւ նախ մերձ յՕտեսսա, անտի ի գիւղ մի ոչ հեռի ի Տփղիսեաց. եւ ուրախութիւն որ զոլով սորա և անհնդիստ բարուք՝ ոչ սիրէր ի միում տեղւոջ կալ. ճանապարհորդեալ էր ի համօրէն Ասիա, և ի Պարսս թարգման կացեալ առ Աբբաս Միրզա արքայորդին Պարսից զամս ուրեմն, և յետ մեռանելոյ նորա դարձ արարեալ առ հայրենակիցս. Գիտէր զքանի մի լեզուս Եւրոպացւոց և Ասիացւոց. Գերմաներէն, Գաղղիարէն, Ռուսերէն, Հնդիկերէն, Տաճկերէն, Հայերէն, Վրացերէն, Պարսկերէն, Քիւրդերէն և այլն. վասն որոյ անսպառ գանձ էր վասն իմ. — Զարմանալի թափանձիկ և սուր միտս ունէր մինչ զի յընթացս վեց շաբաթու ուսաւ անթերի զլեզու մի՝ որում անտեղեակ էր միանգամայն. ընդ այսպիսի հանճարոյ, միացեալ էր և բանաստեղծական աշխոյժ. գիտէր զանթիւ աւանդութիւնս, երգս և վէպս (մասալ, հէքեաթ) ազգաց, որոց ի տես չզքաւ, ուստի թէ դէպ լինէր մեզ ի միասին ննջել, երթալ ուրեք, ի տուէ կամ ի գիշերի զուարճացուցանէր զմեզ թէ և իսկզբանն անդ ժժաւարանայր յամօթոյ ասելով, թէ առասպելաբանութիւնք և վեպկական զրոյցք չեն արժան ընկենաց ուսեալ ճանապարհորդի. այլ իբրև յետ ի աւուրց մտերմացաք, ի միասին ուսանելով, զմեզ պերով, ննջելոյ ևն, մերկացաւ ինձ զոր գիտէր։

Ի Տփղիսեաց դէմ եգեալ եկաք ի մերձակայ գեօղ մի Գերմանացի գաղթականաց, ուր տնաւք զմեծահոչակ Գերմանացի բնախոյզն Դոկտոր Մոլիկ Վագներ, զբաղեալ ի կարգաւորել գինագործական և գինագործիւտ իրս երկրին. զորս ժողովեալ էր ի ճանապարհորդութիւնն իւրում. Սա այդ աւարտեալ զուղևորութիւնն դառնայ յԵւրոպա յերևան հանել զվաստակս իւր զնդտուղն հետազօտութեանցն։

(Շարունակելի)։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԶՄՈՒԻԼ ԿԱՄ ԲԱՂԿԱՆԱԼ.

«Ներկայ տարւոյս Ընտրատ ամսագրոյդ Ե-դ Զ-դ և Ը-դ թուոց մէջ Հայր Վահան Խաստամեանցը իւր հրատարակած յօդուածովը աշխատասիրած է ցոյց տալ, թէ՝ ի՞նչ ազգերից, որպիսի անձինք գաղթելով Հայոց մէջ և ընդունելով նոցա կրօնքն և լեզուն՝ միացած են նոցա հետ ազգութեամբ։

Նա իւր յօդուածոյն մակագիր դրած է այս խօսքը «Թէ՝ ինչպէս կազմուեցաւ Հայոց Ազգը», և հետևաբար յիշելով նոյն ցեղերի Հայութեան ենթարկուելը և հետևելով իւր յօդուածոյ մակագրութեանը ասում է՝ «Մեր ազգը նոյնպէս բաղկացաւ զանազան մասներից, իսկ գլխաւորապէս երկու հետաւոր և օտար ցեղերից», իւր այս համոզմունքը հիմնելով հայկական պատմագրի հետև եալ խօսքերի վերայ, զոր ասէ նա «Յիշէ և ամենայն պատմութիւնս, հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միով լերամբ բնակեալ Յառաջագոյն արք սակաւք ինքնակամ հնազանդել դիւցազնին»։ Խոր. գիրք Ե. եր. 22-23։

Հ. Խաստամեանցի սոյն մակագրութիւնը և հետևընթաց կարծիքը ըստ բովանդակութեան յօդուածոյն պարունակելով իւրեանց մէջ հակադրութիւն և երկբայութիւն մեր նահապետական ծագման և հարազատութեան մասին՝ պատճառում են ինձ յայտնել համառօտութեամբ իմ կարծիքս դորա համար, խնդիրն ազգային ըլլալով։

Որպէս յայտ է կալ՞նել կամ քաղկեդ՞ալ կ'նշանակեն միոյ ամբողջութեան զանազան մասներէ միանալը և գոյանալը, և հետևաբար, եթէ նոյն կազմեալ կամ բաղկացեալ մարմնոյ կազմող մասունքը անջատենք յիրերաց՝ նորա ամբողջութիւնն ևս կ'ապրի և կ'անհետանայ։ Եւ համեմատաբար, եթէ՝ Հայոց ազգը համարինք կազմեալ և բաղկացեալ ի զանազան մասանց, եկամուտ ցեղերով, ըստ ասութեան Խ. Խաստամեանցի, և կամենանք որոշել և բաժանել նորանից այդ միացեալ եկամուտ ցեղերը, մանաւանդ նորան նոցա մէջ՝ պիտի կորուսանէ նա իւր ամբողջութիւնը և անհետանայ այդ բաժանման մէջ. սակայն Հայոց պատմագիրը յիշելով այլ և այլ ազգերէն Հայոց մէջ դաղթելը և նոցա հետ միանալը՝ երբէք չէ տալիս մեզ իրաւունք համարել Հայոց ազգը կազմեալ և բաղկացեալ, տարրեր ցեղերով, կամ թէ՝ նոյն է ասել, ժողովածու այլատեսակ բազմութիւն, որով կարողանայինք նորան դատել այդու մակաբերութեամբ, այլ ընդհակառակն՝ այդ եկամուտ ցեղերը թուելովն ևս, նոյն պատմիչն՝ հայկական հարազատութեան իրաւունքը և ճշմարտութիւնը դուրձեալ ճանաչում է իսկական և անհերքելի, ցոյց տալով որ, Հայոց ազգը սերեալ է և յառաջացեալ է միմիայն մէկ նախահօրից, մէկ անհատից, այն է՝ բարեպաշտ և քաջ և վեհմտուտ Հայկից, և ոչ թէ՝ մէկ քանի նախահօրերից, որով և նորանից սերեալ՝ թէ անցեալ և թէ ներկայ ժողովուրդն ժառանգում են նորա հարազատ որդիք լինելու փառքը, ոչ երբէք կազմեալ և բաղկացեալ համարուելով։ Եւ նոյն պատմագրին համաձայն կ'դառնանք, համարելով որ, Հայոց ազգը նոյն կ'մնար եթէ յիշեալ ցեղերը նորա հետ միանային և եթէ չ'միանային, և կամ թէ միանալուց յետոյ դարձեալ անջատուէին կամ թէ չ'անջատուէին. օրինակի աղագաւ՝ մէկ հօր բազմազաւակ զերդաստանն, թէև կրէ իւր մէջ նա ևս՝ զանազան յարեալ որդեգիրներ, դարձեալ համարուելոյ է նա միատարմատ և անբազադիր։ Կամ այլ ևս՝ ծովը իւր որակութեան մէջ նոյն է, թէ և միանում են նորա հետ զանազան գետեր. և այդու պատճառաւ ևս Հայկայ սերնդոց հետ զանազան ցեղերից եղբայրացեալ անձինքը և նոցա սերունդները համարելու ենք, իսկապէս Հայկական հարազատութիւն և համարիւն զերդաստանի՝ նոցա՝ Հայոց հետ հոգւով և արեամբ և կրօնիւ և լեզուաւ միանալու անբաժանելի շաղկապը և ընտանեկան կեանքը ընդհանուր և կեդրոնական համեմատութեամբ առաջի աչաց ունենալով և ընդ դատողութեամբ արկանելով։

Ուրեմն՝ ըստ իս, Խ. Խաստամեանցը իւր յօդուածոյ նորագիրը գրելով ''թէ ի՞նչպէս կազմուեցաւ Հայոց ազգը,, և հետևաբար ասելով թէ ''Մեր ազգը նոյնպէս բաղկացաւ զանազան մասներից կամ ցեղերից, իսկ գլխաւորապէս երկու հետաւոր և օտար ցեղերից,,՝ իւր խօսքը և միտքը հետացնում է մեր պատմագրի ենթադասութենէն՝ և որպէս կարծեմ, փոխանակ կազմեալ և բաղկացեալ համարելու հայկական սերունդը՝ նորա հետ միացեալ ցեղերը յիշելու պատճառաւ՝ պատշաճ կ'լինէր եթէ անուանէր նոյն ցեղերը միացեալ ցեղեր կամ մասունք, և ոչ թէ՝ կազմող կամ բաղկացուցիչ ցե-

ղեր կամ մասունք. և հասկանալի է թէ ի՞նչ կ'նշանակէ միացեալ ասելը, և ի՞նչ կ'նշանակէ կազմող կամ բաղկացուցիչ ասելը, նկատմամբ սոյն խնդրոյս։

Ելից ի պղպեղոյ յալեկանոյ.

Ի ք. շուշ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՊՆ ՄՈՎՍԻՍԻ

ԾԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՊԱՏՏԱՌԻ ԵՒ ԿԱՐԿԱՏԻ ՉՓՈՎՆ ԿԱՐՄԻՐ։

(Ժ. ԴԱՐԻ Ծագումէ)։

Բայց այս՝ ժողովուրդ է Երբայեցւոց,
Որ կողոպտեալ է զգանձ Եգիպտացւոց,
Զոսկի և զարծաթ, զանօթ պատուական,
Մրմներեալ, կազմեալ է զայս կարաւան։
Ճգնի Փարաւոն սանձել զայն խուժան,
Որ չորս հարիւր ամ կայր ի ստրկութեան,
Արդ ի բաց բառնին վանդակ զարաւորք,
Ի փախուստ ճեպեն խարկանք ըիւրաւորք։
Նախնիք այս աղգի անասնապարման,
Եւ ծանասուն Թուով աստ պանդխտեցան,
Վանեալ ի սովէ յերկրէն Քանանու,
Գրտին զապաւէն ի տան Յովսեփու։
Իսկ Յովսէփ ծառայ էր արծաթային,
Վաճառեալ յեղբարց ի Դոթեայմ դաշտին,
Եւ հասեալ ի ծայր աւագ պետութեան,
Եղև Համազգեաց ապաստանարան։
Եւ Եգիպտացիք ո՛չ մոռանային,
Զի մինչ բուն բնակք տնանկանային,
Արհամարհ Հովիւք գոեալ հացալից,
Էին երջանկին աւուրց բերկրակից։
Վասն այն Թագաւորք հիւրընկալ երկրին,
Տեսեալ Թէ այս ահք յանդաւս ստեղնին,
Կամելով կոպար զընել այն ածմանն,
Պարաւանդեցին լարիւք գերութեան։

Զարմանալի էր վիճակ այս տոհմին,
Որում ետ Որ Էն զանուն իւր Հօտին.
Սա էր սերունդ տան Աբրահամ Ծերոյն,
Հօրն Իսահակայ միամօր որդւոյն։
Թէ հայրն Աբրահամ և Թէ Իսահակ
Եղեն Յեզիպտոս երբեմն գաղթակ.
Ա՛յլ եղեն կրկին յօտար յայն երկրէն,
Եւ ի Պաղեստին գտին դարձ անդրէն։
Սոքա էին աթք արդարակորով,
Վայելեալ ի Տեառն հայրախնամ գորով,
Վասն այն նա լինէր միշտ նոցա պաշտպան,
Եւ նոքա ի նա Թէ և ապաստան։
Եւ Իսահակայն իսկ Յակոբ որդին,
Էր աւանդապահ իւրոց Արարչին,
Ա՛յլ երկոտասան որդիք սուրբ Ծերոյն,
Ոչ համայնք արժան տիրական սիրոյն,
Նա ի մղեգնիլ սովուն ի Քանան,
Ած Յեզիպտոս զայս տուն Եբրայական,
Ցորևան ետ նոցա զիւր պարարտութիւն,
Եւ մեղր ի յագուրդ զանլուր քաղցրութիւն։
Ա՛յլ նոքա փոխան Տեառն այս երախտեաց,
Մոռացան զնա, ուրացան զԱստուած,
Նախընտիր վարկան զպաշտօն երկնուց,
Հեթանոսական խաւարին զլուց։
Զօրս որպէս անզօր տղայս ստնդեաց,
Երիք հարիւր ամ զգուեաց, փայփայեաց.
Հարիւրամեակ մի մերժեալ ի ննամից,
Ետ երկրպագուաց օտար աստուծոց։
Ծանեան խղրատեալք զԱջն ամենազօր,
Գարձուցին առ նա զիւրեանց սիրտ բոլոր,
Եւ նա զՄովսէս ետ նոցա պաշտպան,
Խղել զերկաթի շղթայս գերութեան։
Ցաղագս միոյ յանդուգն բանի,
Ո՞վ նտ քեղ զաթոռ կամ ցուպ իշխանի,
Ամն քառասուն յամեաց փրկութիւն,
Մովսիսի տուաւ խաչանց տեսչութիւն։
Ա՛յն ցուպ զոր Մովսէս առ ընդ Հովութեան,
Արհաւրօք եղից զտուն Եգիպտեան՝
Մինչ ի գալ ի զերդ խնդտ Փարաւոնի,
Եւ տալ արձակուրդ տան Իսրայելի։
Ելեր Իսրայէլ զպատէք փրկական,
Եւ յուղի շարժեաց զիւր մեծ կարաւան,
Անցեալ ընդ երիս կէտս իջաւանաց,

Ետես ի յետուստ զփոշին թանձրամած։
Այս էր համախուռմն ոյժ Եգիպտական,
Կառք մահաձիեալք, հնծեալք սոսկական,
Զորս ածէր բռնի Աջն յարձրացեալ,
Խրատել նաքօք զազգն սարտուցեալ։
Ետես Իսրայէլ զի դայր Փարաւոն,
Մեծամիտ, գոռոզ, սէգ և բարձրայօն,
Ետես Իսրայէլ՝ զի ո՛չ գոյր փախուստ,
Ծով, սուր, գերուելիւն՝ սպառնան կորուստ։
Տէր՝ ի մրրնուզ անկէզ հրացեալ,
Եւ սիւն ամպեղէն աստ հրաշացեալ,
Զայնեաց առ Մովսէս՝ հարկանել ցգուվ,
Պատառել բանալ ճանապարհ ընդ ծով։
Եւ Մովսէս ևհար զծով տեղատեալ,
Մինչ մակընթացից վայրկեան էր հասեալ,
Գայր ի հարաւոյ ծով բաղմակոհակ,
Գայր գարիւ գարիւ կայր կուտակ կուտակ։
Ո՛չ բարդք ցորենոյ կամ լորձունք խոտոյ,
Այսպէս զիշացեալ կան յիրես գետնոյ.
Եւ ո՛չ հողակոյտ բլուրք որմանման,
Կարեն բարձրանալ զըրիւք ուղղանկեան։
Լերինք կազդուրին ի պատուանդանի,
Ի տարածատիւռ լայն սոորոտի.
Պարևանդք նոցա՝ զառի վայրք վախից,
Մանցոյց յաւեր մակերևուելից։
Ասա հարուած ցպոյ սանձեաց գՀոսանա,
Լուեցոյց, կարկեաց զանդուլ խոխոջանա,
Ալիք բարձրացեալ առ ընթեր ալեաց,
Բարդին բարձրանան պնդին ըստ վիմաց։
Ո՛վ՝ զիարդ արագ լայնի, երկայնի,
Այս նորացամաք արահետ ուղի,
Եւ որ ի բնէ չէր առեալ դշունչ,
Արդ նոր հաստոի ի սիւգ քաղցրաշունչ։
Լայնի, երկայնի ոտն արքունական,
Ուստի ծովածին հերիշք տեղի տան,
Տարրն բնական՝ եղեալ նոր պատուար,
Ցետս ընկրկէ ղլուղակ թևապար։
Ուր ջրակենցաղ կայտառք ճնճղին,
Անդ տուան ազատ անցք փախստէին,
Եւ որ յաւիտեան էր սահման եղեալ,
Արդ տայ ճանապարհ աղղին ճողոպրեալ։
Տե՛ս՝ զիարդ գառինք ուղիկից ուղտուց,
Եւ ծերք ընթանան հաւասար պըստուց։

Թևեվ ի գնացս արք ծանրամարմին,
Ոստոստեն մանկունք, վազէ յերդի կին։
Տղայք ստնդեաց ի գիրկս ծնողաց,
Եւ պլք պարկախուիք զոսոց մորց քաջաց,
Երեց ք զկրտսերս ի քերց և յեղբարց՝
Ուսարարձ տանին հանգոյն մարց և հարց։
Իսրայէլ ահիւ և սիրտ ի բերան,
Ճեպէր վազվազէր ի հուն գերհան,
Այր, կին, ծեր, մանուկ, հնծեալ և հետի
Լնուն զյատակ մերկեալ ցամաքի։
Անցեալ էր վաղ քաջ կիսով չափ գիշեր,
Մինչ յետին ծայր չուզն ի հունն իջանէր,
Վերջին էր Մովսէս և ցուպ ի ձեռին՝
Երթայր յառաջդ սեանն լուսածին։
Հասեալ էր արդէն ի կէս նոր ուղեյն,
Զոր այն ինչ հարթեաց. հարթեաց իւր ցպոյն,
Եւ ահա հասին զօրք Փարաւոնի,
Միլամուխ եղեն նորաստանչ յուղի։
Կամէր Փարաւոն զօրութեամբ սրոյն,
Ապաստ ցուցանել զարգասիս ցպոյն,
Եւ յանապատէ նոր աղատութեան,
Դարձուցանել զազգն յանուր գերութեան։
Զայս սայրէր նմա սիւնն լուսեղէն,
Ցորում տաւաղէր Հզօրն այն Որ Էն,
Որ յառաջադոյն ուխտեաց Մովսիսի,
Խստութիւն ի սիրտ տալ Փարաւոնի։
Ասէր՝ արդ հասից, հարից զԻսրայէլ,
Եւ տայ Եգիպտոս կրկին գարձ առնել,
Անբաւ ճոխութեամբ զոր ընդ իւր տանի,
Լցից զվերս իմ դանձարանի։
Այլ անգիտանայր զԱջն Հզօրին,
Որ զայն շնորհեալ վարձ տանջեալ աղին,
Ցօգուտ իւր յուսայր զայն բառնալ ի բաց,
Ո՛չ գարձուցանել բնիկ փոխատուաց։
Անգիտանայր զԱմենազօրին,
Որ գաղտ սերմանէր զայն ի սիրտ նորին։
Ո՞չ այս արգասիք զօշաքաղութեան,
Հան զնա ի ծագ կամակորութեան։
Աջն բարձրացեալ անդ ի պատուհան,
Հանդերձի հեղուլ վրէժ արագահաս,
Կալեալ զսանձ ձիոց և գանդանաւանդ,
Հանէ զմահապարտն յայս նոր գահաւանդ։
Երիվարք ընթացք ի կատս արքունի,

Կամ յոյս հնծեալ կան զօրք Փարաւոնի,
Հնազանդին կամաց՝ որ վարէ ընդ հուն,
Եւ անիւք գլխոց ուժգնութեամբ աջոյն
Ծագեաց առաւօտ զուարթ երեսօք,
Զարդարեաց զերկիր էքնազ երանգօք,
Եհաս և Մովսէս, եդ զօտն ի ցամաք,
Ետես նոր հօտին քանակ զանբանակ,
Արդէն Փարաւոն, կառք իւր և հնծեալք,
Խմբին ի կեդրօն ծովուն հալածեալք,
Վանէր զնոսա Աքն Ամենազօր,
Եւ յետս նահանջէր օդաձեմ գինուր։
Հայեցաւ Որ Էն Եգիպտեան կաճառ,
Բարկացեալ յաչաց ոստեան նետք անճառ,
Աղմուկ և շփոթ գՀետ սլաքաց՝
Շրոտոյց զերիվարս հնծելոց, կառաց,
Զայն ահեղ, հնչեաց սիւնն հրեղէն,
Խրամատեա՛ ցպովդ զօրմդ ջրեղէն,
Որ ի կոհակաց է զդիշերն ողջոյն,
Աստ պատուաստեցան ուժով իմ Աջոյն։
Մովսէս՝ որ յերկինն պատառեաց զծով,
Հար զկարկառ ջուրց վերստին ցպով,
Խոխոջացին ջուրք ի ներքուստ որմոց,
Տամկացեալ թացան սմբակք հնծելոց։
Ետես Փարաւոն զի սահանք բացան,
Վտակք ի յատակ ծովուն լճացան,
Ասէ. փախիցուք փոյթ Իսրայէլէ,
Զի ընդդէմ մեր արդ մարտնչող Տէր է։
Ա՛լ ո՞ւր փախիցես՝ այր ամբարտաւան,
Որ զերինջ Ապիղ ունիս օգնական,
Քեզ ընդդիմամարտ աղջամուղջ խաւար,
Տե՛ս՝ զիարդ կանգնեաց խուճ խումբ անհամար։
Տեսանե՞ս արդիօք զսիւնն երկնահաս,
Որ քեզ սատարէ զիշեր վերահաս,
Նոյն տարածէ լոյս պայծառ քան զարփւոյն,
Ի քէն ճողոպրեալ գարաւոր դերւոյն։
Մովսէս որ յերկինն պատառեաց զծով,
Հար զկարկառ ջուրց վերստին ցպով,
Սասանեցաւ ջուրն ի մնհու պղտոյն,
Որ անշարժ կառչէր զդիշերն ի բուն։
Զիջաւ լուռացեալ ամբարտակ ջրոյն։
Ծածկեաց զՓարաւոն զօրօք իւր ողջոյն,
Եւ աստ մենամարտք անհուն խմբեցան,
Ընդ ամենակուլ աղետից մահուան։

Ո՛չ էր այս Հանդէպ յարձակմանց գորտանց,
Որովք Եգիպտեան լցան խորշք անկեանց,
Ո՛չ խաւար, մռայլ մէգ շօշափելի,
Տարածեալ Հանգոյն մըթան գիշերի։
Ո՛չ յարիւն նենգեալ փոխարկիլ ջրոյն,
Զկնամահ ի գետս ի հարուած ցպոյն,
Ո՛չ խոյք, խաղաւարտք, խաշնամահ, մըժեղ,
Ո՛չ մուն, չանաճանճ, կարկուտ հրահղիղ,
Ո՛չ աղեխորով անդրանկաց վախճան,
Որ Թողոյր Թևրևս յոյս սփոփական,
Ա՛լ ծովահեղձոյց մահ համատարած,
Անվրէպ իջոյց զահեղ իւր հարուած։
Ոգորին համայնք ի խորս յորձանին,
Ընդ մահագրաւեր մագլօք ճիրանին,
Զոր ուղղէր առ այնս մահն անողոք,
Անտես արարեալ զաղերս և զողոք։
Կնաք և երիվարք լուզան յալիս անդ,
Կառավարք Թողուն զդանդաւանդ,
Ո՛՛՛ զի՞ նչ երեսցի ի մէջ անդնդոց,
Զի՞ նչ ի մակարդակ, զի՛ նչ յալուց խորոց։
Հնծեալք սահէին յոտս երիվարաց,
Երիվարք խնդրեն նպաստ ի կառաց,
Զօրականք հարեալ բուռն զրաշից,
Զանան ճողոպրիլ մահուան ի հաղբից։
Ա՛լ ձիք ամենից ի բաց Թօթափեալ,
Զանախորժ բեռինս զինոքօք շուրջ պատեալ,
Դափր հարկանեն, սուզանին, պուղեն,
Զկաուս ընդ մարդկան տապալ կործանեն։
Բաղում կառք, հնծեալք կան ի յատակին,
Ուր ձիք, կառապետք հեղձեալ սատակին,
Երիվարք, հնծեալք սուզանին տակաւ,
Ի խորս ծովուն ի վտանգս անբաւ։
Զկունք ամենից բացեալ զբերան,
Ցո՛րս պատրաստական Թևարձակ սուրան,
Մին զիոզոյ ունի զէր երիվարին,
Միւսն ընդ քարշ տանի զհնծեալ նորին։
Զաղաղակ նոցին փոյթ հեղձուցանեն,
Զուրք՝ որ ընդ ունդունս յալիս սպրդեն.
Մահ ի պատրաստի կայ վարմ ի ձեռին,
Անկանին հնձայնք ի Թակարդ նորին։
Ոմն դեռ կառօք կայ յերես ծովուն,
Զալիս պատառէ ոգորմամբ ձիոյն։
Ա՛լ զօրականք քաջք զանուոց լուռն հարեալ

Տանին ի յատակ զկառն ծանրեալ.
Միթէ՞ ո՛չ կային ի մէջ հաղարաց,
Զրասոյղ լուղըրք լաղդայոյզք փառաց,
Որք արհամարհեալ զվտանգ կոտտեան,
Նպաստ կարկառել արքային վտռմեան.
Զրարբի գաւառք Նեղոսեան գաշտաց,
Ունէին անթիւ զուպարս լողդդաց,
Եւ սոքա վարձուց ակնկալութեամբ,
Առ կառս արքունի ձգտին բազմութեամբ.
Բայց ո՛չ նշմարեն ղի անդ հաւաքին,
Եւ անթիւ հրթիռք ծովու յատակին,
Տիտուռնք, բեհեմոթք, կէտք, դրիւնք, հիդրայք,
Օձք, ձիագետիք, վիշապք գաղտակրայք.
Այս գաղանք ահեղք՝ կենսախոյզք մարդկան,
Որ ի ծովեղերս կան միշտ ի դարան,
Թէ ո՛չ գտանեն անձանց կերակուր,
Տկարք՝ հզօրաց սատարին ի կռիւ.
Զեռն Ամենաղօր զոսոխ խմրեաց,
Ցայն սեզան ղոր յայգ ղուարթ հանդերձեաց,
Ճարպովք և ամճովք աւազորերին,
Տալ նախաճաշիկ յայնմ առաւօտին.
Է՞ր է ձեզ ճեպել ծովաւեր կայտառք,
Ո՛չ փոյթ սպառին երկնաձիր պատառք,
Կերա՛յք, յագեսջիք պարարտ դիակամբք,
Զորս պարգևեն ձեզ արարչական կամբք.
Լու՛ր՝ զինչ և գաղանք առնեն պատանման,
Մի՞թէ Խորակէ չէր ի դերութեան,
Ի՞նչ և ե՞րբ սոքա տային դուլ ձգանց,
Ցորս մատնեալ կային ծերբք ընդ պար մանկանց,
Մեք անօթի ընտիր նմբ Հաղր ձեռին,
Որ զմեզ ժողովեաց յայս յատակ խորին,
Զի երկրպագուք ոսկի երնջուն,
Տեսցեն՝ զի՞նչ պահել կայ Եգիպտացւոյն.
Ահա նախարարք արքունի զրան,
Որք ի մէջ ալեաց մրցին դէմ մահաւան,
Առ մեզ իջանին հանդոյն կապարի,
Ի նոսին արդար վըճիռ կատարի.
Սոքա մընացորդք անդրանկածախ սրոյն,
Որք ածան ի զոհ վիրջին պիշերոյն,
Եւ սոքօք ծանոյց գերամբարձ Որ Էն,
Ո՛չ սոսկ սուր, հուր են իւր վըրիժալէն.
Այս Փարաւոնի զպիր խորհրդական,
Այդ արդ շնչասպառ ի ճանկս մահաւան,
Եւ մատակարարք մատուռնակ դինւոյ,
Ցարեան գոյն ներկին զհոսանս յորդ ջրոյ.
Պահերէց աւագ ծերոց դիւանի,
Ի ժանիս ձկանց ծուատեալ մեռանի,
Քրմապետ անկեալ ընդ զահճապետաց,
Մանրին յատամունս անթիւ լուղակաց.
Զօրավարք գինեալք ի զրահ երկաթի,
Անմատոյց մերոց կնռեաց ծընօտի,
Միայն թարմ արեամբ զմեզ կերակրեն,
Զոր մեք քաջ պետեմք ծծել ի մարմնէն.
Կմախք ընդ անգիծ վառապանակաց,
Ընդ փոյթ մատնոցին բռնութեան ալեաց,
Եւ իբրև տերև ցամաքեալ ծառոց,
Հանցին ի ծովեզը կերակուր ձուկնոց.
Զէնք և սաղաւարտք և զարդք սաղարաց,
Լիցին կողոպուտ հանդոյն աւարաց.
Զեզ մեան բաժին՝ գի՛րիք փախստեայք,
Երկրին աւետեաց այս առհաւատեայք.
Տե՛ս զիարդ դրին բուռն եհար զոտից,
Որպէս արքայի որ կայր բերկրալից,
Մինչ գերանդազէն կառք զնա բարձեալ,
Տանէին ընդ հուն պատառեալ, բացեալ.
Ալ յորժամ յորձանք անդրադարձ ծովուն,
Մատնեցին զնա կոհակաց ջրոյն,
Անկանէր ի պիրկս հօր իւր արքային,
Ի բազկաց նորա սպասեալ նպաստու.
Բայց արքան ինքն ևս կարօտ օգնութեան,
Որդոյն ընդդէմ վերահաս մահուան.
Մինչ եհաս դլխին առ արքայորդին,
Արար զնա կուռ իւրոյ կոկորդին.
Լայն և ընդարձակ էր վայր ճակատուն,
Ցորում մարտնչէր կեանք ընդդէմ մահուն,
Մահն կատաղի՝ զոհս յափշտակէր,
Անխտիր՝ ո՞րչափ և զո՞րն նախընտրէր.
Իշխանք, մեծամեծք, հարուստք և աղքատք,
Ծերք, երիտասարդք, արիք և տկարք,
Զօրաղլուխք, սպայք, զինուորք սոսկական,
Խառն ի խուռն մատնին մահուն ի բերան.
Զի՞ անգութ յամիք հրեշք ծովային,
Գաղտ զձեզ մղէ ճեպ անհնարին.
Զի՞ նչ խնդրէք ի մէջ անհուն դիականց,
Ի մէջ ճարպալիր կերակրոց որդանց.
Ահա Փարաւոն սահի ի կառաց,

Բայց մնայ կախեալ ի մէջ յորձանաց,
Կատաք նորա Թևեա որպէս լաստափայտ,
Մնան ի վերայ մկանանց անգայթ.
Ալ կօշկաց ոտից ճարմանդք խրացից,
Կռուին ընդ անուրս սամտանաց սանձից,
Պլխիվայր ի կախ խաղալիկ ալեաց,
Հըրապոյր անյագ ժանեաց լուզակաց,
Նմա ընդ առաջ արագին կայտառք,
Ճախուռն խիզախին ճիւաղաց կաճառք.
Ծաղր այգորին լուզակք զառամեալք,
Որք քան զՄովսէս էին նախ ծնեալք.
Բարեաւ ակիր արդ մեր բարեկամ հին,
Որ մեզ ջամբէիր զմանկանց մարմին,
Ո՛չ խնայէիր ի կհանս անմեզաց,
Ո՛չ յարտասուս կամ մորմոք ծնողաց.
Ալ մին ի նոցունց զոր ո՛չ մարեցար,
Կազմել կլափանց մեր ուռեստ յարմար.
Արդ զմորմին դէր եկինդ պարարակ,
Տայ յայս առաւօտ մեր ժանեաց ճարակ.
Բե՛ հևմոթ՝ մատի՛ր՝ բո՛ւռն հար զաջդին,
Բայց ձղեալ ընդ քարշ մի՛ տանիր իսկոյն.
Եւ զօս պալենայ՝ զահեկէն կալցիս,
Եւ ալոց մասանց մի՛ ակնկալցիս.
Կէ՛տք, ձիագետիք՝ ղոտից արքայի,
Առնուցու ճաշակ այժ ձեր ծնօտի,
Օձք, վիշապք, կրիայք՝ դուք ի փորոտիս,
Արդ սևեռեսջիք սպրասուր ժանիս.
Իսկ գերամեծար դու կոկորդիլոս,
Որուվ է ահեղ թագապանծ նեղոս,
Բաց զանտառախիտ կլափն սլաքաւոր,
Ի գլխոյն զոկեա՛ զարքայս յանցաւոր.
Ապա մեն մի մասն՝ ուր կայ յատամունս,
Քարշեալ պիշատակ լուծցեն ի յօշմունս.
Տարցին ի ծուվ անդր՝ ուստի էք եկեալ,
Ցայս արքայական սեղան հրաւիրեալ.
Դիակունք մարդկան և երիվարաց,
Մնասցեն ի ճաշ և ի սեղան ընթրեաց.
Ալ զայս գարշելի ժամանց կերակուր,
Ո՛չ յաւէժ պահէ ծուվս ի ծոց լուր.
Զայս տեսեալ Մովսէս՝ եթաց զբերան,
Զոր աղեսէր ցայն վայր վիսկանք տրտմութեան,
Եւ որպ ի սիրտ լուր ցայոն հարուած,
Արար հետ ընդ հետ կրկին պատառուած.

Նախկինն Թախծական ընդ կորուստ մարդկան,
Ցերկրորդն բերկրանք յարդար դատաստան.
Զիւր քոյր Մարիամ՝ ձայնակից գտեալ,
Երգեաց զօրհնութիւն յայոց կրից սպրեալ.
Դու եւ մեր Մովսէս՝ ով Սուրբ Հայրապետ,
Զի զքեզ Որ էն աղիս Փրկիչ հատ,
Իսկ մեք Իսրայէլ Եգիպտոս գերեալ,
Դատաւոք մեղաց . . . ձրի վաճառեալ.
Անանց յորձանուտք մեր հին գերութեան,
Են ժանտ ժահահոտ ծովք տրիտութեան.
Զորս միայն Դու կարես հերձանել,
Ցխմաստից լոյս զազդդ հայեցուցանել.
Ահա կամք հասեալ յաւին կոյս վհին,
Անցեալք ընդ պատուար Եգիպտեան բանտին,
Եւ ընդ անջրպետս պշնութք անձկայրեաց,
Ի խանդակաթեալ երկիրն աւետեաց.
Ցերկիր կաթնաբեր լուսաւորութեան,
Ի մեղրածորանն ազգասիրութեան.
Ի ցօղոյ երկնից սուրբ հըրահանգաց,
Առող ջուր մաքուր յուղումն այդեաց.
Բարձրացո՛ զգուպզ՝ Տէրամբ քեզ յանձնեալ,
Հար զղուխդ հանդէպ ազգիդ լճացեալ,
Զոր հօմնապղուխ վիշապ օձն ահեղ,
Ցիւր ի մահաշունչ կոկորդէն եհեղ.
Գուշակեմ՝ զի այդ ցպղդ նոր հարուած,
Բացցէ ի սրտիդ կրկին պատառուած,
Որոց մին թախիծ ընդ յամել լուսոյն,
Երկրորդն բերկրանք ի ծագել յուսոյն.
Այո՛, յամէ լոյս ազգիդ կրթութեան,
Ընդ մութ խարխափէ ծընունդ Հայկազեան.
Ալ միթէ չէ է Պանդորայ հասեալ,
Եւ զիւր մազթեղէն կափարիչ բացեալ.
Միթէ յոյս և ցարդ կայ ի յատակի,
Եւ ո՛չ այց առնէ լըուրեան ազգի.
Զի սոխ և սխտոր կրկին կոծեսցին,
Ըստ հին ցանկութեան կոյր Եգիպտոսին.
Միթէ զիւցախառ արծաթ և ոսկին,
Եւ փայտ և խեցիք գարձեալ պաշտեսցին.
Եւ կամ կոնք ոսկի լոգարան ոտից,
Զուլեալ յերինջ նոր գիմ ի կարդ գից.
Կամ քերթողահօր փիշին պաշտելի,
Կորդեալ ի շերմակ ի բաց ցնդեսցի.
Կամ դարձեալ արիւն անբիծ զառարակին,

Հեղյո՛ւ ի սեղան զոհ աւանակին։
Օր տարաժամեալ մերձ ի մուտս արփին,
Ցամեցէ՛ պիշեր պարզ, լեալուսին.
Ո՞չ փայլէ ուստեք կայծ քաղցրիկ յուսոյ,
Տալ հրաւանդաց նըշան ինչ լուսոյ,
Սիւնն ամպղնձէն կազմեալ ի տուէ,
Սոսկ քող սեւաթոյր շուրջ զմեզ սփռէ.
Եւ ի շամանդաղ, ի մռայլ տուրերի,
Բո՞ղ ցայտեն յաչաց գայլ և բորենի,
Իսկ հետապնդեալ մեր հին Փարաւոն,
Բռնի՛ տայ մղոն դէպ ի Բաբիլոն.
Խելամուտ զոլով ընաբոյս բերմանց,
Բարձրայոն ախտից սնափառ սիրելհանց,
Որ ցաւուրս մեր զերկս սուրբ նախնեաց,
Անպատկառ դիմօք առ ոտն կոխեաց,
Մատնեալ Արդէայն ի մոռացութիւն,
Ոսկւո՞վ գուն գործի գնել փրկութիւն։
Տուր ժողովրդեան քում յաղաւթութիւն,
Անցիւք ընդ այս ծով նոր մկրտութիւն.
Ուր զաղտ զաղթալի՝ կնդ եգիպտական,
Կյցէ փրկարար աննիւթոս աւազան.
Բայց և ընդ նմին հսկեա՛ հովւաբար,
Զի որ ի Նեղոս տանջի վայրապար,
Մի՛ ի Տիգրիսին հուն ցնորական,
Գահավիժեսցի հոգւով գժտութեան։

Հեղինակ Հրաժեշտին Ս. Աստուածայ։

ԱԶԳԱՅԻՆ

ՈԻԽՏ.

Մեծ. Պարոնայք Սարգիս Գալստեան և Ընտօն Մելքոնեան Թամբլանց՝ ինչպէս ի բազմաց հետէ ուխտ արած և ամ ըստ ամէ նուիրած են երկու ձիոց գները ի նպաստ պիտոյից Մայր Եկեղեցոյս, այս վերջին երկու տարուան ի հաշիւ չորս ձիոց գներն ևս ամենն ի հարիւր վաթսուն և երկու ռբլ. (162) 62 կպ. ընծայեցին և հասուցին ի դանձարան Եկեղեցոյս ներկայ ամսոյս մէջ։

Գովելով յիշեալ Պարոնայից հոգեւոր եռանդը և բարեպաշտական ուխտից անթերի կատարումը, կխնդրեմք ընդունել մեր երախտագէտ և սրտաբուղխ շնորհակալութիւնքը ամենազրոյս միջոցաւ։

ԱՒԱԶԱՆ ՀՐՕՐՀՆԵԱՑ.

Տփխիսեցի Մեծապատիւ Գէորգ Ե. Պ. արաձեանց և իւր ամուսին բարեպաշտուհի և Համեստ, Նատալիա տիկին՝ պատուական և նորահաս կիսարծաթեայ մի Աւազան Հրօրհնեաց նուիրեցին Մայր Եկեղեցոյս Ս. Էջմիածնի՝ յաւուր ծննդի Ս. Յովհաննէսեան և Մկրտութեան հանդիսաւոր դործածելոյ համար ի յիշատակ իւրեանց։

Վասնի փափաքելի և անձկալի պէտք է լինի իւրաքանչիւր Աստուածասէր և կրօնասէր Հայկազնոյ՝ մէն մի յիշատակ ունենալ ի նոր Սիոն ի Ս. Տաճար Մայր Եկեղեցոյս, և որպիսի փառք և պատիւ և միխիթարութիւն է որոյ յաջողի այսպիսի մի զեղեցիկ բարեպաշտական նուէր ընծայել, ինչպէս վերոյիշեալ երկու բարեպաշտ ամուսնոց արժանացոյց Տէր արդեամբք իւրեանց ընծայաբեր լինել Ս. Տաճարիս Էջմիածնի, և երանիլ ըստ այնմ թէ ''Երանի՛ որ ունիցի զաւակ այս ինքն յիշատակ ի Սիոն,,. և այսպիսիք ո՞չ ապաքէն առաւել մեծ գովեստից արժանի են՝ որ մահկանացու գոլով և յաւիտենականին ցանկալով՝ միանգամայն լցին զպէտս Ս. Էջմիածնի Տաճարիս։

Իսկ մեք հրապարակաւ կիսուիմք յայտնել յիշեալ ազնիւ նուիրատուաց մեր խորին ղդացմանց եւ շնորհակալեաց հաւաստիքը։

Գ. ԱՂԱՑ ԱՂԱՑԵԱՆՑ.

Ի նպաստ պիտոյից նորակառոյց Ա՛ւետարանի Մայր Եկեղեցոյս Ճ հարիւր ռուբլի նուիրեց Ա՛ւԾ. Պարոն Աղայ Աղայեանց գանձակեցի ի ձեռն Երժ. Գրիգոր Վ. արքեպիսկ. Տէր-Սահակեանց փոխանորդի գանձակայ։

Ոգեւորեմք յիշեալ բարեպաշտի ուսումնասիրական խանդը եւ եռանդը, եւ մեր հրապարակական շնորհակալութեանց հաւաստիքը կմատուցանեմք նմին։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՃԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՍ,

(Շարունակութիւն)

Ի ԴԱՐԲԱՆԴ

	Ռ.	Կ.
Շակումեանց	3	
Գէորգ Շահնազարեանց Դէ Շափուր Երեւանցի	10	
Ղուկաս Առաքելեան	1	
Պարիսէզ Արտէմեան Իշխանեանց . .	1	
Ստեփան Գիւլնազարեան	1	
Գալուստ Միրանցեանց		40
Եղիսաբէթ Սպանդունեան	1	
Աբրահամ Յովհաննայ Սպանդունեանց	1	
Մարկոս Գիւլնազարեան	1	

Ի ՂՕՇԱՆԴ ՓՈՒՌԱՒՔ

Հասարակութիւն Ալիսուտ գեղջ .		40
Հասարակութիւն Քեալեսի գեղջ .		50
Հասարակութիւն Խանի-չէն գեղջ .	1	
Հասարակութիւն Տարաքարքանջ գեղջ	1	
Հասարակութիւն Մատրասայ գեղջ .	2	
Հասարակութիւն Գիւրջեվան գեղջ .	1	17
Հասարակութիւն Հնդար գեղջ . . .	1	
Հասարակութիւն Կիւրտայ գեղջ . .		40
Բիւլիստանցի Օհան Տօսիեանց . . .		20
Հասարակութիւն Բիւլիստան գեղջ .	1	
Զարկարանեցի Աղասի Ծատուրեան .	1	

Ի ԼՈՌԻ ՓՈՒՌՔԱՒ

Հասարակութիւն Գակմատաղու գեղջ		20
Բաբի շինացի Հայրապետ Աւագեան .		40
,, Մարտիրոս Գրիգորեան .		20
,, Պետրոս Խաչատրեան . .		20
,, Ցարութիւն Խաչատրեան .		20
,, Հայրապետ Պլահվերտեան		20
,, Ռուստամ Սարգսեան . .		20
Գանձակեցի Պաղտասար Պետրոսեան .		20
,, Միքայէլ Պետրոսեան . .		20
,, Ցարութիւն Պաղտասարեան		10
,, Դաւիթ Գասպարեան . .		10
,, Յովհաննէս Արզանեանց .		10
,, Գրիգոր Դաւթեան . . .		10
,, Գէորգ Յովսէփեան . .		5
Հասարակութիւն Քեշխուրդ գեղջ .	2	
Հասարակութիւն Քեալբանդ գեղջ .	1	
Հասարակութիւն Գիրք գեղջ . . .	1	
Հասարակութիւն Կիւրջևան գեղջ .		50
Հասարակութիւն Փամպաքու գեղջ .		60
Հասարակութիւն Շիւքիւրչի գեղջ .		40
Հասարակութիւն Աշղ-բարամ գեղջ		60
Հասարակութիւն Ուչտալ գեղջ . .		50
Հասարակութիւն Ռուշանաշէն գեղջ .	1	60
Վանքաշէնացի Սարգիս Ցարութիւնեան		30
,, Խաչատուր Մարութեան .		20
,, Խաչատուր Գալստեան .		20
,, Ստեփան Յովսէփեան . .		20
,, Պուտաղ Գրիգորեան . .		20
,, Աբրահամ Հայրապետեան		20
,, Ցարութիւն Սահակեան .		20
,, Ցարութիւն Գէորգեան .		20
Բողաւանգեցի Բաղտի Աւետիսեան .		10

ԳԷՈՐԳԵՍԿԻ

Նախիջևանցի Էմմանուէլ Պօղոսիկեանց	5
Յովհաննէս Պապովեանց	2
Նիկողայոս Դաւշանեանց	5
Յովհաննէս Թամանցեան	2
Յովհաննէս Յակոբճանեանց	3
Ղազարոս Քուշնառեանց	2
Սարգիս Պապովեան	2
Ստեփան Մարգարեանց	2
Գէորգ Տիրկեւեան	1
Լուսեղէն Մամիկոնեանց	2
Բարսեղ Չեսլիովեանց	1
Յովհաննէս Թեոքեան	1
Յովհաննէս Խաչատեանց	3
Մկրտչէ Մարտիրոսեանց	5
Աբրահամ Սեդրոսեանց	2
Գրիգոր Զորչուհեանց	2
Աստուածատուր Չերքեսեան	10
Մարտիրոս Քասդանեան	5
Ստեփան Մուրատչեան	10
Կարապետ Մինժանեան	10
Ոմն	3
Սարգիս Թամբեան	50
Մակար Թամբեան	5
Անտօն Թամբեան	25
Յովակիմ Ջամամեանց	5
Թովմաս Զարիֆեանց	5
Յակոբ Սուլուեան	2
Կարապետ Բարիկեան	3
Կարապետ Եաբայճեանց	3
Մարգար Դաւթեան Թամբեանց	2
Սարգիս Յարութիւնեան Թամբեանց	5
Վարդան Մահտեսեան	1
Յովհաննէս Թորոսեան Թամբեանց	1
Յովհաննէս Պապասենեանց	3
Վարդերես Եսկէեան	1
Գէորգ Քամիանակեանց	1
Մարգար Յօնանեան	1
Խաչատուր Խաչատրեան	1
Խաչակ Խլղեանց	3
Յարութիւն Աստեմեանց	3
Սերովբէ Աստեմեանց	3
Մկրտչ Էղիկեան	3
Յովհան Լազոնկիրեան	1
Ղուկաս Աֆգանտիլեան	1
Սարգիս Յեսպեան	1
Լուսպարեն Տապախեան	2
Բաղդասար Կեօկչայեանց	1
Մովսէս Ալֆերտեանց	1
Պետրոս Մուրատեան	1
Մակար Կեօկչայեան	1
Աւետիք Ուսեան	1
Կարապետ Արարատեանց	3
Խրիստափոր Վառաքեան	1
Գրիգոր Նասիպեան	3
Պօղոս Տապախեան	1
Լուսպարոն Մուրատչեանց	1
Մարգար Տհաչքեան	1
Եղիա Խուդեան	2

(Շարունակելի)։

ՇԻՐԱԿԱՑ ԳԻՒՂՕՐԱՑՔ.

(Ժ. ԴԱՐԻ ՏԱՏՈՒՐ)։

1869 Թուականին ես զարձեալ Խիչաղ էի. այդ տարի ևս երաշտութեան պատճառաւ հացը սուղ էր եկած, և սարի գիւղերում մինները՝ որոնք գուցէ չորութեան պատճառով կրազմանան, բաւական շատ ձլաս տուին արտերուն, ինչպէս և այս տարի. Խիչաղն էլ այդ դառն վիճակի մէջ լինելով գիւղի ժողովուրդը որպէս այն ժամանակը նոյնպէս և այս տարի դժգոհ իւր բաղդից անդադար կենսամաշ հոգացողութեան մէջ էր ապագայի մասին, ինչարկէ սորան բաղդակից գիւղերն էլ միևնոյն զրութեան մէջ լինելու են անշուշտ, վասն զի ինչպէս կկարծեմ Շիրակայ բազմաթիւ գիւղօրէից մէջ շատ քիչ գտնուելու են այնպիսի տներ, որոնք նախորդ երկու առատ տարիներու բերքից դէմ այս տարուայ համար թէ ուտելիքի և թէ ցանելիքի պակասորդի չափով ամպարած ցորեան կամ գարի ունենան, այլ խիստ մեծ մասը այդ ամենակարևոր և կենսապահ զգուշութիւնից զուրկ են։

ծողովուրդը առհասարակ այսպիսի սղութեանց առիթ կտայ. իւր մեղքը ասելով թէ «մեր մեղացէն է որ այս նեղութիւնը կ'քարշենք», որպէս թէ Նախախնամութիւնը յատկապէս պատժոյ համար է տուել այդ սղութիւնը, և ո՛չ թէ բնութեան Արարչագիր. սահմանի և անսխալ կանոնի հետևանք է այդ. բայց եթէ հարցանող լինի թէ Հիրակայ ժողովո՛ւրդ, առաջին առատ տարիներում ի՞նչ չքնաղ և Աստուածահաճոյ առաքինութիւններով զարդարուած էիր, որ արժանացար արդարատատ Արարչից առատ հունձքերով վարձատրութեան. և այս տարի ի՞նչ նորանոր մեղքերու մէջ գլորուեցար, որ նոյն Արարիչը զրկեց քեզ այդ վարձատրութիւնից. կարծեմ յարմարաւոր պատասխան չունին տալու. վասն զի մի և նոյն ընթացքի մէջ կտեսնուին բարոյական գործոց վերաբերութեամբ թէ այն տարիները, և թէ այս. ուրեմն մեղացէն է ասելով ու անցնելով քեզ փրկութիւն չի լինիր. պէտք է խելքդ գլուխդ ժողովես ու լաւապէս քննես իմանաս քո մեղքդ. իմ կարծիքով այս բանի մէջ քոյ մեղքը ուրիշ բան չէ, բայց եթէ անցեալ դառն փորձերուց չը խրատուիլդ. եթէ այնուհետև խրատուեցար, և հասարակական միաբանութեամբ ապագային համար հոգացիր որպէս չանական և խորհուն էակ, այլ ևս մեղքից կամ լաւ ևս ասել ապագային մասին անհոգութիւնից յառաջացած դառնութին ապաշխարանքը կրելու չես դատապարտուիր. Իրաւ է Աւետարանական սուրբը հրամանը կատարուիրէ «Մի հոգար վասն վաղուն, զի վաղիւն վասն իւր հոգասցէ և այլն», այս բանը գուցէ ոմանց տկարախիղճ մարդկանց կարծիք տայ, թէ այդ Փրկչական պատուէրը բոլորովին կարգիլէ ապագայի համար հոգալը. բայց այդպէս չէ. իմ կարծիքով այդ պատուէրը առաջին լոկ անգործ հոգալոյն կ'վերաբերի, որից հոգացողին ոչ մի իրական օգուտ չծըննանելուց զկնի՝ վնաս ևս կծնանի. և երկրորդ՝ մի միայն անձնական հոգացողութեան կը պատշաճի, վասն զի այդպիսի հոգացողութիւնը ըստէպ ստէպ կրկնուելով՝ ունակութեան կամ առվորութեան օրէնքի զօրութեամբ շատ անգամ մարդուս անձնական շահասիրութեան և ընչաքաղցութեան ախտի մէջ կգլորէ, և արդկաւոր կլինի նորան իւր պէտ բարոյական պարտքերը կատարելուն, որից կհետևի և անշուշտ նորա տկար ընկերներուն հարստահարութեան վնաս ընդ դէմ մարդասիրական օրինաց, իսկ հասարակութեամբ հասարակական ապագայ բարեաց համար նախապէս հոգալը միշտ օգտաւէտ է և հարկաւոր իւրաքանչիւր անգամից ո և իցէ հասարակութեան, ուստի և Աստուածահաճոյ. ուրեմն առատ տարիներու մէջ սուղ տարիներու համար հասարակական ամբարներու մէջ պաշար ժողովելը Աւետարանի պատուէրին հետևաբար Աստուծոյ կամքին հակառակ բան չէ, այլ հաճոյական. վասն որոյ ամենեցունցս պարտքըն է այս բարի և օգտաւէտ սովորութիւնը հետ գհետէ մեր հասարակութեանց մէջ մտցնելու ջանալ որքան կարելին է փութով և անձանձիր աշխատութեամբ՝ օրինակ առնելով մեզ ուրիշ երկիրներու լուսաւորեալ ժողովրդոց այս մասով բըռնած խոհեմ ընթացքները, և յիշելով ողջախոհ Ցովսէփի գեղեցկի իմաստուն գործը որ արձանագրուած է Աստուածաշունչ սուրբ գրքի մէջ։

Ինչպէս վերևը գրուած է՝ Հիրակայ հացի սղութիւնը գլխաւորապէս անձրևի սուղ գալած տարիներում կպատահի. ուստի այս հասարակական վնասի առաջը առնելու համար շատ կարևոր է և օգտաւէտ դաշտի և գիւղօրէից, եթէ հնար ձեռք բերուն ուստի և արժանն է իրաւունք ստանալ, և Ռահ կամ Գարեգետի (Արփաչայ) ջրի մէկ մասը Թողնելով նորա վերայ շինուած ջրաղացներու հարկաւորութեան համար՝ մեացեալ մասը մի յարմարաւոր տեղից ջրանցք բանալ տալով բերել դաշտային գիւղօրէից արտերն կարելի եղածին չափ ջրելու նպատակաւ, և այս տարուայ այն ժամանակներում երբ արտերը պէտք կունենան ջրի, իսկ միւս ժամանակներում կարելի է դարձեալ Թողտալ ջուրը գնալու իւր սովորական ճանապարհով՝ Այս գործը ի հարկէ շատ դժուարին է և մեծագումար փոզի և աշխատութեան կարօտութիւն ունի, բայց հասարակական եռանդուն ջանքով, և ընկերական միասիրտ աշխատակցութեամբ և հաստատամտութեամբ յուսալի է գլուխ բերել. վասն զի ինչ որ անհնար է գործել մի կամ երկու ձեռքերու, հնարաւոր կլինի տասն ձեռքերու, տասին անհնարը՝ հնարաւոր կլինի հարիւրին, և հարիւրին

անհնարը՝ հաղարին և այլն. զոր օրինակ եթէ դաշտային գիւղերը մի ընկերութիւն կազմեն կամ իւրաքանչիւր տուն առհասարակ իւր կարողութեան չափով փող կամ թէ ցորեան և կամ թէ միակ տալով գործի սկսուելուց յետոյ շարունակ մինչև աւարտը և կամ բերելու ջրից օգտուող ամեն մի գիւղ՝ որ իցէ թէ քսանից աւելի լինին, գտնուած հարուստ տները, որ յուսալի է թէ քսան գիւղի մէջ տաս տաս հատ հաշուելով՝ մ'ջին թուով երկու հարիւր տուն բաղկացնեն, տարեկան իւրաքանչիւրը երեսնական մանէթի չափով փող կամ հաց տալու պայմանաւ մի ընկերութիւն հիմնեն, և այս գումարը որ տարին վեց հազար մանէթ կբաղկացնէ, իւրեանց մէջէն ընտրած բարեխիղճ մի մանաժողովի ձեռքով շահեցնեն մինչև չորս տարու չափ, յետոյ սկսեն գործը տարուց տարի տալով նաև երեսունական մանէթը մինչև գործի աւարտը. և կամ ուրիշ մի աւելի յարմարաւոր պայմանաւ կազմուի այդպիսի մի ընկերութիւն, որոյ օգուտը և շահմունքը անընդհատ մեծ և արդիւնաւոր լինելու է մինչև անգամ հարիւրաւոր տարիներ, վասն զի այդ ընկերութեան անգամից տները ջուրը բերելուց յետոյ կարող են երկու պլսաւոր կողմով օգուտ վաստակել, առաջին՝ իւրեանց արտերը ինչպէս կարգն է հարկաւոր եղած ժամանակները ջրելով տարաժամ չորացնելու վտանգից ազատել, և երկրորդ՝ ուրիշ օգտուողներուց ըստ պատշաճին բահրայ առնելով շահուիլ։

Թէ ի՞նչ քան մեծ օգուտ պիտի տայ մեր հասարակութեանը այս յառաջարկուած գործի գլուխ գալը՝ այն պարզապէս յայտնի է ամենքին. բայց որովհետև ինչպէս ասացինք բաւական դժուարութիւն կայ սորա առաջ տանելուն յարակից, ուստի այս մասին այսքան գրելը եթէ առայժմ գործի ձեռնարկութեանը չնպաստէ, գէթ յուսամ թէ գոնա վերաբերութեամբ մեր գաւառացւոց շահերու մտքի մէջ մի գաղափար ծնուցանել կարող է. վասն զի շատեր կան որ այս բանը մտքերնին անգամ անցուցած չեն, թող թէ պատշաճաւոր կերպով գործ վերայ ուշադրութիւն դարձուցած։ Ընդհակայ դաւառի գիւղականաց կեանքի մի քանի պակասաւոր կէտերու վերայ կարկղին չափ խօսեցանք, և այս ոչ թէ այն պատճառաւ՝ որ մեր սիրելի գաւառացւոց սրտերը վիրաւորինք նոցա պակասութիւնները իւրեանց երեսներին տալով, այլ միայն առիթ տանք նոցա իւրեանց ուշադրութիւնները գարձնելու դոյն պակասութեանց վերայ, և հեզհետէ ջանալու թեթեւացնել գորանց թիւը և վերջապէս իսպառ ոչնչացնելով բարւոքել իւրեանց կեցուածքն և ապրուստի եղանակները. վասն որոյ և մեծապոյս եմ՝ թէ ինչպէս մեր սիրելի գաւառացիք ներողամիտ սրտով պիտի նային սոյն յօդուածոյ վերայ՝ քաջ կշռելով, որ առանց կեանքի թերի կողմերը նախապէս իմանալու և լաւապէս ճանաչելու՝ անհնար է նորանց անհետացնելու մասամբ պատշաճաւոր կերպով հոգ տանել՝ որպէս առանց հայելոյ վերայ նայելու դէմքի բծերը նկատել ու սրբելը, և առանց թագուցեալ վէրքերը բժշկին ցոյց տալու, պեղօրէից ձեռքով ապաքինութիւն գտնելը, նոյնպէս և օտարազաւառացի աղջկայինք, որոց իցէ թէ շատերը իւրեանց կեցուածքի վերաբերութեամբ անմխիթար դրութեան մէջ լինին, գոնէ փոքր ի շատէ օգտակար խրատներ կարող են քաղել սոյն յօդուածիցդ, որոյ մէջ դեռ ևս կայ մի ամենակարևոր կէտի վերայ ևս խօսելու՝ այն է մտաւոր և բարոյական կրթութեանց պակասութեան վերայ, որից աղբերաբար դուրս կըղնին հասարակական կեանքի վերոյ գրեալ թերութիւնները և անհոգութիւնները ապահով և վայելուչ կերպով կենցաղավարելու մասամբ։

Ամենքին պարզ յայտնի է, որ մարդկային մտաց սերնդոց մտաց և սրտից գլխաւոր կրթարան բարեկարգ ուսումնարաններն են, որոց կարևորութեան մասին անգադար կ'քարոզեն խոհական և բարեհոգ անձինք թէ բանաւոր և թէ գրաւոր եղանակաւ լրագրաց, մատենագրութեանց և այլ հրատարակութեանց միջոցաւ, և մեր ուսումնասէր Վեհափառ Հայրապետը իւր սիրելի հօտի այս ամենակարևոր պիտոյից վերայ ուղղելով բարեմիտ ուշադրութիւն, թէև Հայրապետական սուրբ Աթոռակաւ քանի տարուց յետոյ պատուիրել է որոց որ պատշաճն է՝ հոգ տանել ամեն Հայաբնակ քաղաք և գիւղ սկզբնական ուսումնարաններ բանալու և առաջուց բացածներու հետ ի միասին բարեկարգ նշանակաւ կառավարելու. բայց գէթ մեր

գաւառի վերաբերութեամբ կարելի է ասել, որ Վանհայեաց Հօր ուսումնասիրասէր սուրբ փափագը, և բարեմիտ պատուէրը ինչպէս որ պարտն է դեռ իրագործուած չէ. վասն զի կան գիւղեր, որոց մէջ տակաւին ուսումնարաններու նշոյլ երբէք չկայ. կան գիւղեր էլ՝ որոց մէջ թէև մի երկու սենեակ ուսումնարանի համար ձեռնարկած են պատրաստելու, բայց կամ դեռ թերակատար են նոցա շինութիւնները, և կամ որոնք որ աւարտուած են՝ նոցա մէջ էլ ըստ մեծի մասին պատշաճաւոր կերպով դաստուրմիւն չէ շարունակուած, հետևաբար դեռ ապարդիւն վիճակի մէջ են. դուցէ ժողովուրդը չէ կարող բարեկարգ ուսումնարաններ պահպանել, քանի որ դեռ իր օրական ապրուստը հոգալու հազիւ չաղ ձեռնտու կգտուի իր նիւթական միջոցը. սակայն այսու ամենայնիւ ըստ իս բողոքին չէ կարող արդարանալ այս բանի մէջ, և ապագայ սերունդին պարտական մնալու պատասխանատուութիւնից ազատ մնալ. վասն զի իւր չքաւոր կարծած դրութեան մէջ գարձեալ կանէ շատ աւելորդ ծախսեր ինչպէս նշանադրութեանց, հարսնատեսի, փեսատեսի, հարսանիքի, պատարագ առնելոյ և ննջեցելոյ մասին հացկերոյթի և այլ անտեղի սովորութեանց համար գործադրելով քսան թումնկուց սկսեալ մինչև քառասուն թումնկիից աւելի արաղ և գինի՝ նոյնչափ ևս խորակներ, նաև բաւականին չայ, շաքար, որոց գործադրութիւնը այս վերջին տարիներս մտած է մեր գիւղաքաղաքներու ժողովրդոց մէջ ուրախութեան հանդիսակատարութեանց ժամանակ բոլորովին անկանոն և անչափաւոր կերպով. օրինակ՝ և վայրենաբարոյ Քրտաց սովորութեան հետևելով բաշխուղ և խառնեղ տղով հարսնացուի ծնողաց և մերձաւոր ազգականներուն, որոց արգելելու մասին թէև ինչպէս առ Տէր Հանդուցեալ Մատթէոս Կաթուղիկոսը նոյնպէս և այժմեան Վեհափառ Հայրապետը յատկապէս կոնդակներ գրած են, բայց ինչպէս կըսուի՝ դեռ բոլորովին այդ հնութեանսական անկարգ և վնասակար սովորութիւնը անհետացած չէ ժողովրդի միջից. ահա այսպիսի ծախսերը եթէ չլինին աւելորդ տեղը, որոց մասին և շատեր կան որ պարտուց տակ կճնշուին, և այս ծախսերը անելու կարող անձինք որքան որ կլինին իւրաքանչիւր գիւղի մէջ՝ եթէ ծախուց կիսով չափը իւրեանց և ղրացեաց որդւոց կրթութեանը դոհեն բարեսրտաբար, հարկաւ կարող են փորը ի շատէ բարեկարգ ուսումնարաններ ունենալ, և նոցա պղտուղները վայելելով մխիթարուել՝ և հայրենական բարելաւութեան պատճառ դառնալ. ո՜հ, հազար երանի էր եթէ այսպիսի օգտաւէտ բաներու վերայ ուշադրութիւն դարձնողներ և հաստատակամութեամբ աշխատողներ դուրս գային մեր գիւղական հասարակութեանց մէջ, ինչքան պիտի նեղութիւններ և տառապանքներ անհետանային նոցա խղճալի կենցաղավարութեան տխուր հորիզոնից և ինչքան պիտի ապահովուէր և բարւոքանար նոցա ապրուստի և կեցութեան վիճակը, որուն և կամ ջերմագին սրտիւ փափագող

Մ. Ալթաճլեան

Ի 12-ն Սեպտեմբերի 1872 ամի
Յ.Պ.Ք.ասնդրապոլ։

ՊԱՏԱՍԽԱՆ

«Խրկմո՝ և Ըհասաբաբէյ բանի մ՝ Հոգևոր Ծխական Դպրոցայ Ներկայ դպո՝ընական վայ պեսո՝ընե՝, կողմաե յօդուածին։

Թէոդոսիոյ Հոգևոր Ծխական Դպրոցաց Հոգարարձութիւնը, ինչպէս նաև առ Հաստրակ բարեպաշտ Հայոց Հասարակութիւնը տարեցս Արարատ ամսագրոյն Սեպտեմբերի թերթին մէջ քաղաքիս ժողովրդական Դպրոցայց վրայ տեսութիւն կոչուած յօդուածը կարդալով ցաւով սրտի զարմացաւ. և տեսնելով որ այդ դրողը ստոյգ տեղեկութիւն չունի, հարկ կսպասինք այս պատասխանը հրատարակել. որպէս զի ոչ թէ միայն իւր սխալ կարծիքները ուղղենք, այլ նաև ճշմարտութիւնը յայտնած լինինք մեր Հոգևոր իշխանութեանը և հասարակաց առջև։

Քաղաքիս բարեպաշտ Հայոց հասարակութիւնը յատկապէս խնամք և հոգ ունեցեր է միշտ բարեկարգութեան մէջ պահել Հոգևոր Ծխական երկսեռ դպրոցները ըստ իւր կարեաց։ Այս գոհալի

եւանդը երբէք ժողովրդեան սրտին մէջ մարած չէ, ուստի երբոր Սրբազան Եղիազար Աբբեպիս-կոպոսը Նախիջեւանի և Բեսսարաբիոյ առաջնորդ նշանակուեցաւ հազար ուրախութիւն և յոյս ներշնչեցին, և իւր ուղեւորութեան մէջ այցելութեան գալով ի Թէոդոսիա տեսաւ և լսեց ժողովրդեան եռանդը, մանաւանդ թէ ինքը ժողովուրդը դիմեց նորա՝ որ քաղաքիս Հոգեւոր Ծխական դպրոցները բարեկարգէ և ապահովցնէ, նոցա խնդիրը և աղերսը լսելով Սրբազան Հովիւը՝ երկար անձինքը ընտրել տուաւ, և Հոգաբարձու հաստատեց ժողովրդական երկսեռ դպրոցաց. յորոց մին Մեծարգոյ Յովսէփ Ալթունճին էր, միւսը Վարդերէս Զէմ-պէրճին, և երրորդը Մկրտիչ Արութեանը։

Ինչպէս որ ժողովուրդը իւր Հոգաբարձուց ընտրութիւնը ըստ արժանւոյն արած էր, նոյնպէս նոքա ևս անձնանուէր աշխատասիրութեամբ ձեռք զարկին դպրոցները բարեկարգել։ Հոգաբարձուց առաջին գործը եղաւ նորաշէն դպրոց մի կանգնել աղջին մանկանց համար՝ որոյ մեծ կարեւորութիւն կար. ժողովուրդը հետերնին միակամ և միասորուրդ էր. ուստի Ս. Սարգիս Եկեղեցւոյն շրջապատին մէկ կողմը հազար ռուբլիի բաւականաչափ հող գնելով նուիրեց որ Ազգին մանկանց դպրոցը շինուի. և շինութեան գրամք և ղանազան օգնութիւններով ևս ձեռնտու եղաւ։

Թէպէտ և երեք Հոգաբարձուք ևս մանկակից հաղորդ էին այս գովելի աշխատասիրութեան, բայց գլխաւորապէս դպրոցին շինութիւնը և բարեկարգութիւնը յանձնել էին Հոգաբարձու Յովսէփ Ալթունճիին. որ աղգասիրական ոգւով աշխատեցաւ անխոնջ, միտց և հնարք դտաւ, և յաջողութեամբ աւարտեց, ուր աղջին մանկունքը կգետեղին այժմ և կսորուին, որոյ համար Ազգը կօրհնէ և պիտի օրհնէ միշտ իւր հաւատարիմ աշխատաւորը։

Երբ որ մանկանց դպրոցը աւարտեցաւ՝ սկսաւ Հոգաբարձուն Օրիորդաց դպրոցին շինութիւնը մտածել, որովհետև յատուկ դպրոց չկար, և օրիորդք վարձու կքալէին. որ դպրոցաց տնտեսական հաւասարութեան բաւական նեղութիւն կուտար։ Այս խորհրդին հետզհետէ համեղուելով, երեք տարի վերջը ընկերակից Հոգաբարձուց հետ խորհրդակցելով դեղեցիկ հնարք մի գտաւ իւր խորհուրդը ի գլուխ հանել։ Ցայտնի էր որ դպրոցները յատուկ դրամագլուխ և կամ յատուկ գումար չունէին, հարկ էր ինչպէս մանկանց նոյնպէս նաև Օրիորդաց դպրոցին շինութեան ժողովուրդը ձեռնտու լինէր։

Ուստի Հոգաբարձուն պաշտօնակցօք ի միասին հրաւիրեց ժողովուրդը ի խորհուրդ. յայտնեց այն մեծ նեղութիւնը որ Օրիորդք վարձու կքալէին, և առաջարկեց որ Օրիորդաց դպրոցը կանգնելու մի միայն հնարքն է՝ եթէ յօժարի ժողովուրդը՝ իւրաքանչիւր որ հարիւրական և կամ յիսնական ռուբլի փոխ տալ. որով բաւական գումար կլինէր, և կարելի էր դպրոցին հիմը ձգել. և կխոստանայր Հոգաբարձութիւնը ժողովրդէն փոխ առած դրամը չորս տարիէն հատուցանել տարուէ տարի քսանհնգական ռուբլի։

Միաբերան ժողովուրդը Հոգաբարձուին առաջարկութիւնը գովեց, ընդունեցաւ և անմիջապէս ի գործ դրաւ. ժողովրդեան եռանդը ևս աւելցաւ քաջալերեց զՀոգաբարձուն, ուստի իսկոյն սկսաւ դպրոցին հիմը ձգել Ս. Սարգիս Եկեղեցւոյն շրջապատին միւս երեսը։ Իսկ դպրոցը վեց ամսուան մէջ յաջողութեամբ աւարտեցաւ, և թէպէտ դրամին պակասութիւնը արդիլք էր՝ բայց Հոգաբարձուն յաղթեց ամենայն դժուարութեանց բաւական գումար առժամանակ իրմէ նուիրելով։

Վեց տարի անընկճատ յիշեալ Հոգաբարձուք խոհեմ և բարեկարգ կառավարութեամբ պաշտօնին վարեցին, բայց որովհետև անձնական այլ և այլ գործոց զբաղմունքներին արգելք էր, այս պատճառաւ հրաժարեցան ի պաշտօնէ տարւոյս Հոկտեմբեր ամսոյն երկուքին, որոց հաւատարիմ ծառայութիւնը ժողովուրդը երախտագիտութեան շնորհակալութեամբ պսակելով՝ նոցա տեղ ուրիշ երեք Հոգաբարձու ընտրեց քաղաքիս ժողովրդական երկսեռ դպրոցաց։

Մխիթարեան ճշմարտութիւնը յայտնելու դիտաւորութեամբ հարկ համարեցանք մանրամասնաբար այս տեղեկութիւններս գրել, և ոչ թէ մեք մեզ այդ անձին առջև արդարացնելու համար. ուստի սկսինք արդ այն յօդուածին դլխաւոր խօսքերը քննել և պատասխանել։ Խիղճ բան է, մանա-

ւանդ թէ անհիմն սկզբանց վրայ դատողութիւնը հիմնած սխալելով վհէ ի վիհ պիտի գլորի եթէ մէկը գործ գրէ, և գործոյն վրայ կատարեալ և ստոյգ տեղեկութիւն չունենայ։ Ուստի առաջին սխալը այս է որ ասեր է թէ «Եկեղեցւոյ կրպակաց արդիւնքն ալ՝ որ է ի տարին եօթը հարիւր ռուբլի՝ յատկացուցեր է դպրոցաց. և այսպէս կըսեմ իբրև թէ ցորենի շտեմարաններէն շատ կրպակները այսչափ արդիւնք կրնային։—Ճշմարտութեան և գրուածին մէջ մեծ զանազանութիւն կայ. որովհետև ոչ թէ հոգաբարձուն այդ արդիւնքը յատկացուցեր է դպրոցաց, այլ նախկին առաջնորդք, տեսնելով որ ժողովրդական դպրոցները կարօտ են, և առանց այդ արդեանց անհնարին է մատակարարել նոցա տնտեսական հոգը։ Բայց երբ որ ժողովուրդը իրաւունք և հրաման ստացաւ այդ կրպակաց արդիւնքը դպրոցաց մատակարարել, տեսաւ որ մեծամեծ նորոգութիւնց կարօտ անհնամ թողուած՝ հիմակուան երիք բաժինին մէկը հազիւ արդիւնք կրնէր։ Ժողովուրդը պատշաճ տեսաւ իւր կողմանէ գումար մի նուիրելով այն քայքայեալ կրպակաց հիմունքը և հարկաւոր տեղերը նորոգել, որպէս զի կարող լինի առաւել արդիւնք ստանալ, և պատշաճ համարածին պէս ալ արաւ. որով կըրնայ արդ չորս հարիւր յիսուն ռուբլի արդիւնք ստանալ, և ոչ թէ եօթը հարիւր, ինչպէս որ յօդուած գրողը տեղեակ չլինելով գրեր է։

Ա յս սխալմունքը բաւական չէ, այլ երկրորդ անգամ ևս կսխալի, մանաւանդ թէ դայթակղութեան որոմ ցաներ է ասելով թէ, «Դպրոցը եկեղեցւոյ կրպակաց արդիւնքին փոխարէն տեղւոյն Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն պայծառութեան օգնութիւն մի չտար։—Հոգաբարձութիւնը հաւանութեամբ ժողովրդեան մանկանց դպրոցին մէջ յատուկ անձն մի վերակացու նշանակած է. որոյ պարտքն է միանգամայն եկեղեցւոյ մէջ գըլխորութիւն անել, և աշակերտաց երգեցողութիւն տորուհցնել։ Իսկ եկեղեցին ըստ օրինի ունի նաև սեփական տիրացու մ՝ալ. բայց առջի տիրացուն երբ որ Վեհափառ Կաթուղիկոսին հրամանաւ Քահանայական աստիճան առնելով իւր վիճակը գնաց, թէ հոգևոր իշխանութիւնը և թէ ժողովուրդը անմիջապէս տիրացու փնտռել սկսան, գտնուեցան այնպիսիք որ ոչ եկեղեցին և ոչ իսկ ժողովուրդը կրնար նոցա տարեկան պահանջմունքը կատարել, մինչև ըստ արժանւոյն գտաւ մէկը և սեփական տիրացու նշանակեց։ Իսկ յօդուածին տերը իրաւունք չունէր սեփական տիրացուն պահարակել, չափաղանցական և նկարագրական ձևերը փաստի տեղ գործածելով ճգնէր և տքնէր խօսքը հաստատել։

Երրորդ սխալմունքը և ճշմարտութեան հակառակ խօսածը այս է որ կասէ թէ «Տեղւոյն քահանայն գիր և կամ երդիչ չեղածին պատճառաւ առանց ժամասացութեան կտիպարւի եկեղեցիէն ելլել։—Մենք առանց յօդուածը թաւիւանձելու այս միայն հարկ կսեպնենք ասել, որ այսպիսի առիթ մի երբէք պատահած չէ, և մանկանց դպրոցին վկրակացուն՝ որոյ պարտքն է ևս դպրութիւն անել եկեղեցւոյ մէջ, կամ՝ պատարագի և կամ ժամասացութեան առաւօտ և երեկոյ և կամ որ և իցէ առթի ներկայ գտնուէր է հանդերձ երգեցող աշակերտօք։

Ոչ միայն այս խնդրոյ՝ այլ ժողովրդական դպրոցաց ներքին ընթացքին վրայ ստոյգ տեղեկութիւն չունեցածը կ՝յայտնէ ասելով թէ, «Դպրոցները ոչ Փրոկրամմա, այս ինքն Ծուցակ ունին, ոչ ուսմանց առարկայ կայ, և ոչ նաև Հայկաբանութեան ուսուցիչը գիտէ դասախօսութիւն անել։ Պատասխան. դպրոցները ունին այն Փրոկրամման հանդերձ կանոններով, զոր Հոգաբարձութիւնը շատ անգամ քննած է ժողովրդով իմացուն։ Իսկ Հոգաբարձութիւնը դպրոցաց բարեկարգութեան համար արած ժողովքներուն մէջ քննած, տեսած լինելով որ աշակերտք եօթը կամ ութը տարիքէն դպրոց գալով, և տասը մէկը հազիւ աւարտած կելլէին, երեք մասը աղքատութեան պատճառաւ, և կերթային ծառայել այլոց քով, որ իւրեանց ծնողաց աղքատութեան օգնեն, և մէկ մասն ալ տէրութեան ուսումնարանները կմտնէին, պատշաճ սեպեց տնօրինել՝ որ ինչպէս Ռուսերէն լեզուին, նոյնպէս նաև Հայերէն լեզուին սկզբունքը աշխատին աղեկ հաղորդել ուսուցիչք աշակերտաց՝ որ կարենան դուռ խօսիլ, գրել և իմանալ. ուստի այս կարգադրութեան համաձայն

Հայկաբանութեան ուսուցչին ալ կաշխատի, գիտէ հին և նոր ձեռները, քիչ մ՚ալ լեզուաց հըմտութիւն ունի, և պաշտօնին մէջ հաւատարիմ կծառայէ։

Հարկաւ այսչափ գտնելէն վերջը՝ վճիռ մի պէտք էր տալ. ուստի կարծիքը կ՚յայտնէ և կասէ թէ, աւելի լաւ կլինէր ըստ իմ՝ կարծեաց նեմէ հոգաբարձուաց գլխաւորը՝ Ցովսէփ Ալթունճին՝ վերակացուին և գեղագրութեան ուսուցչին ոճիները միացնելով առարկայից ուսուցիչ մի վարձէր։—Հոգաբարձութիւնը իւր կարգադրութեանց համար այդ անձին պատասխան չէ պատասխանել, սակայն այսչափս միայն ասինք որ, թէ վերակացուն և թէ գեղագրութեան ուսուցիչը շատ փորձերով վասն հարկաւորութեան նշանակուած են, Իսկ մեք չհասկացանք թէ ի՞նչ առարկաներ կպահանջէ, որովհետև արդէն դպրոցաց մէջ պլհաւորները կան, ինչպես ինքն ալ հասկացած չէ, որ նեմէ ժողովուրդը միջոց ունենար՝ առանց իրեն պէս Ֆրէնկոյ մի վարձուց ամենայն բարեկարգութեանց ձեռնամուխ եղած էր։

Բայց այդ անձը որ կարացեր է սուր տեսնել թեամբը թափանձել, վարժապետները տեսնել և չափել, ի՞նչպէս տեսութիւնը զօրած և տեսած չէ որ արգելք դպրոցաց մէջ աշակերտք Կրօնագիտութիւն կսորուի՞ն թէ ոչ. հարկաւ կսորուին, և սուցիչը քահանայն է. ուրեմն ի՞նչպէս մտցեր է և պատասխանութեան կերպին վրայ յիշատակութիւն մի արած չէ։

Մի և նոյն խնամքը և հսկողութիւնը ունի Հոգաբարձութիւնը Օրիորդաց դպրոցին վերայ ևս, և երկու դպրոցաց մէջ մի և նոյն ուսուցիչք դասախօսութիւն կանեն, բայց մանաւանդ վարժուհի մ՚ալ նշանակած է որ նախակրթարանի մէջ Հայերէն դասերէն զատ ձեռագործ ևս կսորուեցնէ. որոյ առած վարձը ոչ սովորական խոշոր է. այլ աշխատութեանը համար է։

Կվերջացնէ խօսքը ասելով թէ, ազգը կարող է պահանջել Հոգաբարձուներէն որ Ս. Սարգիս եկեղեցւոյն կրպակացմէ ստացած հօգը Տարեւր ռուբլի արդեանց փոխարէն մինչև չորս Տարեւր ռուբլիի երաժշտութեան վարժապետ մի վարձեն։—Ս. Սարգիս եկեղեցւոյն կրպակաց հաշուին մէջն եղած սխալը արդէն յայտնեցինք, և որովհետև ինքը Ազգն է իւր դպրոցաց տնտեսական հոգը ըստ կարեաց մտածակարող, ուստի ինքն իրմէ ալ չկրնար պահանջել այնչափ որ չկրնար անել և արած չէ. և միայն այն ատեն կարող է աւելի բարեկարգութեանց վերայ մտածել երբ որ ձեռքը միջոց կունենայ։ Իսկ թէ որ իրեն անիմաստալի առաջարկութեանց ձեռնամուխ եղած լինէր, ոչ մեծապոյնը և ոչ իսկ փոքրագոյնը կատարել կարենալով՝ երկուքէն ևս վրիպած խայտառակ էր։

ԵՒս այժմ մեք ևս համառօտ պատասխանելով կվերջացնենք խօսքերնիս, խրատելով և յորդորելով զինքը՝ որ չհամարձակի այնպիսի պատուական լրագրի մի մէջ զըպարտութիւնները տեսութիւն անուանելով հրատարակել։

Ա.

1872 Նոյեմբերի 22
ի Թէոդոսիա։

ԲԻԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՐ.

ՀԱՑԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՔ

Ի ԼԵՒՌՆ ՋԻԹԵՆԵԱՑ.

Ասկէ յառաջ Սիոնի միջոցաւ ծանուցինք թէ՝ Զիթենեաց լերան արեւելեան կողմն Ռուսաց աղգին գնած արտին մէջ Հայկական հնութիւններ կըյայտնուին, և խոստացած էինք յայտնուածներըը հետզհետէ ծանուցանել ի պիտութիւն հետաքննող հնասիրաց Ազգիս։ Ահաւասիկ բացուած տեղերուն նկարագրութիւնը, զոր աստ մանրամասըն կ՚ստորագրեմք։ Ռուսաց նոր շէնքին փոքրիկ դահլիճն ամրող յատակը մանր և գունդգոյն մոզայքներով և պանչելի պատկերներով զարդարուած է, այնքան պանչելի, որ զգայուն սիրտ կըլսող ճշմարիտ Հայ մի տեսնելով, առանց արտասուաց կաթիլներ աչքէն թորեցնելու կարող չէ անցնիլ. մանաւանդ եթէ փոքր ինչ ճաշակ ունեցած լինի իւր նախնեաց փառաց և պերճութեանց վրայ։ Այս մանր և գունդգոյն մոզայիք վեմ նըկարները այնպիսի գեղեցիկ յարմարութեամբ և

ձարտարագործ արհեստիւ շարուած են, որ գոյնե-
րը և տառերները կարծեմ՝ թէ դարուս անուանի
պատկերհաններն իրենց վրձիններով և նկրկերով
չպիտի կարողանան այնպէս յօրինել թող թէ
մանր քարերով շարել այլ աւաղ, դարուց և ժա-
մանակաց ողբալի դառնութիւնը հազիւ թէ յի-
շեալ տխղջ սեռնկին նկարներուն քառորդ մասը
թողուցած է։ Տարակոյս չկայ թէ նոյն ամբողջ
քառակուսի ընդարձակ սեռնկի նկարոց մէջ, ար-
դի տեսնուածներուն հետ, կային նաև այլ և այլ
նկարներ և պատկերներ և արձանագրութիւններ,
այլ դժբաղդ եմք որ քանդեալ և ապականեալ է,
թէ և անկեալ և խախտեալ բեկորները Ռուսաց
վանահայրը ժողովելով իրար յարմարցնել կուզէ,
սակայն բան մի չը գուշակուիր։ Մնայ մեզ արդ
յայտնի տեսնուածները ըստ կարի նկարագրել։
Այս ամբողջ մնացած մասին հիւսիսային կողմն,
մէջ տեղը ճերմակ քարնո-ւ մի կանգնած է և գը-
լուխը դէպ ի վեր բռնած, գլխոյն վերի կողմը հոյա-
կապ շինուածքի մի կամար կըտեսնուի սքանչելի
յօրինուածներով, նոյնպէս ոտքերուն ներքև, բո-
ղոքակի մի մէջ կանգնած և թևերը ամփոփած դե-
ղեցիկ աղջ- մի, բոլորակի մի մէջ սիրուն քոյր մի,
որուն մաշկապատ ոտից յարմարումը հիանալի է։
Երեք շրջանակի մէջ երեք հատ մեծամեծ յիսո-ն +
իւրաքանչիւր շրջանակի մէջ մէկ մէկ հատ, թէ,
մեծութեամբ և թէ ձևով իրարմէ տարբեր, որոց
թեւերը, թևերը և կազմուածոց ամեն պարագա-
ները ամբողջ կը տեսնուին։ Շրջանակի մի մէջ
երկու «աղաչ խաղողոյ մէկ մէկ կանանչ տերևնե-
րով։ Մէկ շրջանակի մէջ երկու «սրտաձև պտուղ-
ներ» (մեզ անծանօթ) և այլ մանր և պէս պէս
յօրինուածներ և խաչեր։ Հիւսիսային կողմն լայն
երեսի մէջ հին հայկական երկաթագիր խոշոր տա-
ռերով մի կարգ գրուած է այսպէս. «ԱՅՍ ԴԻՐ
Է ԵՐԱՆԵԼՈՒՀՈՒ ՇՈՒՇԱՆԿԱՆ ՄԱՒՐՆ
ԱՐՏԱՒԱՆԱՑ, ՀՈՌԻՓԼ։ Սոյն սեռնկին ներքև
ուղիղ հատ քարաշէն ստորերկրեայ գերեզմաններ
կան, որ արձակ դռնով մը վար կ'իջնուի, որոց ո-
մանց մէջ տակաւին մեռելոց ոսկորներ կը գտնուին։
Երբ դաշտին հիւսիսային կողմն գտնուած սեռնա-
կը կը մտնես, որուն դարձեալ յատակը մանր մո-
զայքներով յարդարուած կը տեսնուի, բայց ա-
ռանց պատկերի և գրի. աստի կըմտնես արևելեան
կողմը սեռնակ մի, դարձեալ յատակը մոզայք.
բայց տակաւին մաքրուած չէր. սորա ներքև ըս-
տորերկրեայ փոքրիկ քարաշէն այր մի, որ քանի
մը աստիճանաւ վար կիջնայ, նոյնպէս տակաւին
անմաքուր, թէ և բարեւորին վրայ Հայկական
տառեր կնշմարուին՝ բայց չկարդացուիր։ Նոր շի-
նուած շէնքին կից արևելեան կողմն, բաւական
մեծակակ այր մի, որուն հողերը մաքրիկէն յետոյ
վրան ալ քարուկիր շինուածով այժմ ծածկած
են, ուր կը գտնուին տասն և վեց հատ քարաշէն
առանձին առանձին գերեզմաններ, որոց հինգն ի-
րենց միաձոյլ և երկհատոր կափարիչներով տա-
կաւին ծածկուած են. իսկ մնացեալները բաց և
դատարկ, որոց խորտակեալ քարերուն վրայ մէկ
կամ երկու հայկական տառեր կը նշմարուին. իսկ
ամբողջներուն մէկին վրայ փորուած խաչ մի և
քովն ալ գրուած է — ՋՈԶԻԿ, նոյնպէս միւսին
վրայ ալ խաչ մի, և եղծեալ և ժժուար ընթեռ-
նըլի տառեր, զոր հազիւ կարացինք կարդալ.
ԱՅՍ Է ԿԱՓԱՐԻՉ, որ թերևս ուրիշ անուն լի-
նի։ Ասոր դրան առջև բացուած է նաև փոքրիկ
այր մի, որուն հրեք որմոց վրայ երեք մեծամեծ
խաչեր նկարուած են, հարաւային կողմինը ծեփը
թափելով, միայն խաչին պատուանդանը կերևի,
իսկ երկուքն ամբողջ։ Ասկէ քանի մի քայլ հեռի
փոքրիկ այրի մի մէջ (որ այժմ շինուած և ծած-
կուած է) դարձեալ մանր մոզայքներով գեղեցիկ
յօրինուած դամբարան մի բացուած է՝ որ այժմ
մաքրուած է, շէրմին վրայ մոզայիւք արձանագ-
րուած է երկաթագիր տառերով հետևեալը. «ՐԱ-
ԲԵԽԱՅՍ ՈՒՆԵԼՈՑ ԱՒ ԱՍՏՈՒԱԾ ՋՍՈՒՐԲ
ԵՍԱՑԻ ԵՒ ՋԵՐԱՆԵԼԻ ՀԱՐՍՍ ԵՍԱՑԵԱՆՍ
ԱՐԱՐԵԱԼՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ՋՑԻՀԱ-
ՏԱԿԱՐԱՆՍ ՋԱՑՍ»։ Այս անձուկ տեղէն փոքր
դռներով կը մտնես հիւսիսային կողմն եղած մեծ այ-
րըն, որուն մէջ մեռելոց ոսկերք լեցուն են և դեռ
մաքրուած չէ։ Հողերուն և վրատակներուն ներքև
գտնուած մոզայքները հաւաքած են, և բաւակա-
նաչափ կուտած են մի անկեան մէջ. բայց յայս-
մանէ գտնուած են վեց հատ մեծամեծ չքամբարներ,
որ այժմ նորոգուած են։ Առ այժմ այսքանս բա-
ւական համարելով, եթէ դարձեալ նոր բան մի

գանուի, կը խոստանամք հրատարակել, պատմական ծանօթութեամբ հանդերձ։

(Աթոռ) Օրփէր, Նոյ. 22, թ. 862։

Ընդհ. Եպեսք.. Ժողով։ — Ներսէս Եպիսկոպոս։ — Մանդուէմ և Օրագիր։ — Տարաձայնութիւնք— Խորէն Եպիսկոպոս— Գործեալ տարաձայնութիւնք։ — Գերագմանատուն։ — Ցօդուած մը։ — Տեսակցութիւն։ — Խորէն Վարդապետ։

*
* *

Վերջապէս Մայրաքաղաքիս Ընդհ. Եպեսք. Ազգային Ժողովը գումարեցաւ, և դարձեալ Վեհ. Աաթուղիկոսի մերոյ Կոնդակի պատասխանը բաւական երկար վիճաբանութեանց տեղի տուաւ։ Ժողովուրդն ուրախ է նկատելով Ազգիս Հայրապետի բարի նպատակին և ազգօգուտ կամաց ջանադիր եպեսխոսանաց ընտիր և միաձայնամային մեծագոյն մասին ճիգն և յաջողութիւնը ընդդէմ օտարամոլաց, և անտարակոյս կ՚ուսումք բարի վախճան ստանալ՝ եթէ անակնուելի մի օտար դէպք չծնի։

*
* *

Գեր. Ներսէս Ս. Եպիսկոպոս Վարժապետեանի այսպէս անակնկալ կերպիւ շուտ վերադարձը որքան հետաքրքրական եղաւ ժողովրդեան հետաքրքիր մասին, առաւել սիրով ողջունեցաւ նորա վերադարձը մեր սիրելի և նուիրական Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի ուխտիւք Միաբան գրուած լինելով։ Այսուհետև Ազգը առաւել վստահ է նորին Գերապատուութեան վերայ և աւելի Ազգիս օգտին և Եկեղեցւոյ պայծառութեան արդիւնքներ սպասէ։

*
* *

Կրկին սկսեց մեր Ազգ. լրագրաց վերայ հալածմունքներ և չդիտեմ՝ արդեօք՝ ուսկից կոգևորուին։

Մանչոթ մի ամսուան համար, և Օրփէր՝ նախ մի ամսուան համար՝ և ապա դադարման ծանուցման Ճաւելուածին մէջ արդար բողոքին համար ալ երկու՝ ընդդէմ ամսուան՝ դատապարտեցան տարապարտուց։

Ազգ. օգտի և վաղեմի իրաւանց պաշտպանութեան համար զոհուեցան երկուքն ալ, մանաւանդ վերջինը՝ որ խիստ զգկանաց հանդիպեցաւ Ազգիս սիրոյն։ Ուսոի և ժողովրդեան ողջամիտ մասին արդար զայրոյթը շարժեց և ոգևորեալ եռանդ և բարի նախանձով սկսան հանգանակութիւն ընել ի նպաստ Օրփէրոյ, և կարծեմ բաւական գումար կը գոյանայ։

Կը յիշէք անշուշտ՝ որ ասկից յառաջ ալ այսպիսի օժանդակութիւն և համակրութիւն ցոյց մեր Ազգը առ Մանչոթ և առ Օրփէրն, այս անգամ ալ ազնիւ ազգասիրութեան հաւաստիք վառուած և օգնութեան ձեռք կերկնցնէ Օրփէրն։ Տեղւոյս ազգայինք լաւ են հիմայ, կը ճանաչեն ազգի պիտոյից և օգտի արձագանք և փաստաբան հանդիսացողները, և կը տեսնէք՝ թէ ի՛նչպէս կ՚երախտասէ և կոգևորէ ժողովուրդն՝ իւր իրաւանց և շահուց պաշտպան անձնանուէրները։

Այս առթիւ ալ Էջմիածնի վեհապանծ անուն և պաշտելի մայրական սէրը ջերմ համակրութեամբ և խորին յարգանօք ողջագուրեցաւ ի Հայկազանցս, որ ամեն ժամանակ նուիրական և պատկառելի եղած է իւրաքանչիւր ազգասէր և ջերմեռանդ Հայոց սրտերու մէջ։

*
* *

Զգիտեմ ուստի է, որ բաւական ժամանակէ ի վեր տարաձայնութիւն մը կայ Մայրաքաղաքիս մէջ՝ իբր թէ Ղարապաղչին (գուցէ Շուշիէն) և Տփխիսէն թղթակիցք գրած ըլլան՝ թէ Գեր. Սարգիս Արքեպիսկոպոս Հ. Քալէնդարի համար Մետրապոլիտութեան պիտոյս շնորհելու խնդիրներ և առաջարկութիւններ եղած են և բաւական յուզմունք պատճառած։

Այս առթիւ շատ տարակարծիք դատողութիւնք կան բանիմաց անձանց մէջ. ոմանք կըսեն թէ՝ ինքն չափազանց գիշեր և ցերեկ կաշխատի այս բանի համար, ոմանք ալ կըսեն թէ՝ մի քանի Հայեր միայն կաշխատին եղած և Սարգիս Սրբազանը սաստիկ հիւանդ ըլլալով՝ ամենևին տեղեկութիւն չունի եղեր այս անց.քերէն. ոմանք

կըսեն ԹԷ՝ մինչև անդամ կերազեն և կը ջանան եղեր Գանձասարու Կաթողիկոսութիւնը կենդանացնել. բայց Ազգը ամենքը մեկէն կըսեն ԹԷ՝ այս բնչ ազգաւեր և ազգակործան ջանք է՝ որ այսպիսի փափուկ միանգամայն կնճռոտից ժամանակիս մէջ՝ ազգը փոխանակ սերտ սիրոյ միութեան մէջ պահելու և ամբողջութիւնը ապահովելու՝ կուզեն կտոր կտոր պառակտել և բաժանել իրարմէ, և այս դարձեալ մի այնպիսի ժամանակի մէջ՝ որ մի կողմէն Սամոլք՝ միս կողմէն օտարամոլ վարձեալներ ազգիս ամբողջութեան հարուածներ կուտան, Հայաստանեայց եկեղեցեաց Մօր Ս. Էջմիածնի դէմ գործելով։ Ըսողներ ալ կան, ԹԷ տեղւոյս Սահականք յաջողեր են ինչպէս Երուսաղէմ, նոյնպէս ի Շուշի քաղաք ալ մատ տալ, որպէս զի այսպիսի խառնաշփոթութեամբ մի որս ընեն իրենց որկորոյն, և կամ օտարաց միաբանական որոգայթները և իղձերը դիւրացնեն։ Նա և կըսեն ԹԷ, մի քանի շողոքորթաց խանդակաթ ջանքն եղեր է Ղարապաղու վիճակը Էջմիածնէն անկախ ընել։ Վերջապէս շատ մը կէտերով դատողութեանց բաբեղն մի կանգնուած է այս տեղ։

Բայց ես ալ կըսեմ՝ որ, եթէ ստոյգ է այսպիսի մի անցք, ո՛հ՝ ի՞նչպիսի վատութեան ոգւոյ թելադրութիւն և որպիսի գառն վասակութիւն է, որ արդարև ազգը շուտով ի կորուստ մատնելու համար ասկէց աւելի ճարտար ու ճարպիկ հնարք չըլլար. և ասկէց աւելի ինչ տեսակ անեծքներ կարելի է լարել ազգիս ապագայ կորստեան. բաւական է միանգամ զարնել գՀովիւն և Հօտը ցրուել, այնուհետև շատ հեշտ է պառակտեալները շուտով ոչնչացնել. . . .

Իսկ մետրապօլտութիւնը՝ որ Մայրաքաղաքի Եպիսկոպոս կնշանակէ, միթէ մեծ բան է նոյն իսկ Արքեպիսկոպոսութենէն, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ դասակարգութեան մէջ առաւել բարձր նշանակութիւն ունի վերջինը քան զմետրապօլտութիւն։ Ո՛հ, եկեղեցականի մը բարեզգեաց սիրտը և գործերը պէտք է բարձր լինին քան տիտղոսները. . . .

Աստուած տայ՝ սուտ լինին այս տարաձայնութիւնք։

Մոռացայ յիշելու որ Աբշերոնի մէջ ալ հրատարակուած կայ այս բանիս համար, բայց տեղւոյս լրագիրները տակաւին ոչ ինչ չգրեցին։

*
* *

Կհրատարակեն ԹԷ՝ Սարգիս Արքազան իւր սեպհական արդեամբք Շուշւոյ մէջ ուսումնարան և Առաջնորդարան կառուցած է, բայց ըսողներ ալ կան՝ որ նոր քահանայ ձեռնադրուածներէն 5—600 ական ռուբլի հաւաքելով շինած է, և կըսուի նա և ԹԷ՝ Վ. Հ. Կաթողիկոսը յատկապէս քննիչ պիտի խրկէ եղեր ասիկայ ստուգելու համար. ասոնց որը ստոյգ է. Արարատայ մէջ ալ այսպիսի բաներ յայտնի չեն գրուիր՝ որ իմանանք։

*
* *

Գեր. Խորէն Ս. Եպիսկոպոս ընտրեցաւ յԱռաջնորդութիւն վիճակին Ջիւռնիոյ, բայց նա կհրաժարի։

Կըսեն ԹԷ՝ ուրիշ մի քանի վիճակաց պէս Ջիւռնիա ալ Տէրունի վիճակ եղած է Ս. Էջմիածնի, և սորա Առաջնորդք միշտ նուիրակներ եղած են։ — Այս խնդիրը բաւական յուզուած է Ջիւռնեացւոց մէջ ալ։ Լուսահոգի Պօղոս Սրբազանն եղած է առաջին Առաջնորդ։

Ներսէս Կաթողիկոսն ալ այն տեղ առած է վարդապետութեան ձեռնադրութիւնը ի Գալուստ Նուիրակէն։

*
* *

Այս տեղ այլ և այլ և ծանր տարաձայնութիւններ ալ կան, բայց երբ կստուգեմ՝ կգրեմ։

*
* *

Բելոյի Հայոց գերեզմանատունը վտանգի մէջ է, և մեծ յուզմունք կայ ժողովրդեան մէջ ընդդէմ Մէնէնէլիքներէն՝ որ կուզէ գրաւել։

*
* *

Անշուշտ կարդացած կլինիք Մասիսի մէջ վերջին անգամ հրատարակուածը։ Երուսաղէմի միաբաններէն մի քանի վարդապետ Սահակեան

խնդրոյն դործիք ըլլալով, յայտնի բան է՝ որ ըլ-
լողն ալ Երուսաղէմացի է, և իբր թէ իրենց շա-
հերը կպաշտպանեն՝ որ միշտ վտանգողն ալ կոր-
սընցնողն ալ իրենք են իրենց շարժմունքներով։
— Կարևորութիւն տուող չկայ այնպիսի վայրա-
հաչ հրատարակութեանց։

Մասիսի ընթացքին շատերը կզարմանան։

Պատճ առիթ մը բաւական է, և ահա ժո-
ղովուրդը կխուճապ կարևոր դասեր տալ այն սա-
կաւաթիւ հակառակորդաց և խաւարապաշտից։

***

Կըսեմք որ՝ մեր Սրբազան Պատրիարքը քանի մը
անդամ է որ տհասկցութիւն կունենայ առանձինն
հակահասունեանց Պատրիարքին հետ։ Մերաղ-
նէից շատերը մոռատնջութեան մէջ են թէ՝ այս
գաղտնի տեսութիւնները ի՞նչ գործի համար են,
ըլլայ որ վնասակար հետևանքներ ունենայ։

Ատուած ողորմի մեր անօգնական Ազգին։

***

Արժ. Խորէն ուսումնական վարդապետ Աշըղ-
եան Արմաշու Վանահայր ընտրուեցաւ բարե-
յիշատակ Գէորգ Արքեպիսկոպոսի տեղը։

Արժանի է, և կը փափաղիմք տեսնել մեծ ար-
դիւնքներ։

Խ. Ն. Ֆայէ . . . .

1872 Դեկ. 10
Ի Բէրա Պօղոյ։

Ա Զ Դ Ի Ք

Որովհետև որոշեալ է ի նը-
պաստ Հ. ամախուոյ և Պարսկաս-
տանի տառապեալ ազգայնոց
բացուած ժողովարարութեանց
հաշիւներն առաջիկայ փետրվար
ամսոյ Ըրարատ ամսագրոյ մէջ
հրատարակել ի տեղեկութիւն
ազգայնոց, ուստի Սիւնեաց Սրբոյ
Էջմիածնի կըհրաւիրէ զամենայն
վիճակային Առաքևոր ատեանս
և Գործակալս Ըմբոստոյ առա-
քել ի Սիւնեաց միևչև առաջիկայ
Յունվար ամսոյ վերջը յիշեալ
ժողովարարութեանց հաշիւնե-
րը, տօմարները և փողերը։

Ըրարատայ թերթից անձկութենէ և
այլ և այլ պատճառներէ սահիպեալ բա-
ւական յօդուածք և տեղեկութիւնքը
պարտաւորուեցանք յետաձգել և Յուն-
վար ամսագրոյ մէջ տպագրել։

ԿԱՐԵՒՈՐ

Եբ.	Կ.	Տող.	Սխալ	Ո՞ղղեալ.
422.	ա.	22.	Մատենագիրն	Մատենագիրներն։
425.	ա.	33.	որք և անկարելին էր	որքան և կարելին էր.
426.	ա.	7.	անունով դաշտի	անունով էս դաշտի.
,,	բ.	3.	ի դաշտին	ի դաշտին։
,,	ա. 14, 24, 26)		Կարա — Չիադին.	Կարա Չիադին։
	բ. 8. 7 ևլն.)			

Նա և Ամսագրոյս 159 և 400 երեսաց Պատկերաց Սանահնոյ և Հաղպատայ անուանքը պէտք է փո-
խանակել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ·

Ներկայ ԺԲրդ Թուոյս կաւարտի ՈՐԱՐԱՏ *ամսագրոյս և շրջանը, և պարտ կՀամարիմք մեր հնորհակալութիւնը յայտնել առ Համայն բաժանորդս՝ որ պատուեցին զՈրարատ իւրեանց ընթերցասիրութեամբք միանգամայն խրախուսեցին ըղնմբագրութիւն յաճախելով ի բաժանորդագրութիւն և ի ժամանակին գինները վճարելով, մանաւանդ առ Գործակալս որք բարի նախանձով օժանդակեցին Ամսագրոյս թէ բաժանորդներ Հաւաքելով, թէ ամսագիրները ըստ պատկանելոցն ի ժամանակին Հասուցանելոյ աշխատութիւնքը յանձն առնելով, և թէ իկարևոր դէպս Տպ· Յանձնախմբոյ ամեն յանձնարարութիւնքը ըստ կարելոյն կատարելով, և առ այնոսիկ՝ որ չկանացին աշխատակից լինել Տպարանի Մայր Էջմիածնայ և Որարատայ այլ և այլ կարևոր միջոցներով թէ ընծայաբերութեամբք և թէ օգտաւէտ յօդուածովք և նամակագրութեամբք:*

Որարատ յառաջակայ ԺԲրդ շրջանի մէջ կը Հրատարակուի մի և նոյն ծրագրով պարտնակութեանցն և ամսական Հինգ Հինգ թերթով, և երբեմն պատկերազարդ· գինն է տարեկան ՂԲ· ռուբլի Հանդերձ ծախուքն ճանապարհի:

Թող փորձերն գրաւականներ լինին ամսագրոյս ապագային:

Բաժանորդագրուիլ ցանկացողք կարեն դիմել ամսագրոյս գործակալաց կամ ուղղակի գրել այսր Տպ· Յանձնախմբոյ:

Ընդ առթիւ կարևոր է ծանուցանել և զայս, զի Տպարանի գործոց յաճախութիւնք և ծանրութիւնք ստիպեցին զմեզ ի շրջանի բաժանորդաց ցուցակը յետ սակաւ ժամանակի առանձինն տպել և ցրուել բաժանորդաց:

ՌՈՎ ԸՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԻՒԹՈՑ Ի· ՇՐՋԱՆԻ ՈՐԱՐԱՏԱՑ·

1872 Նոր Թուական և Ի· շրջան Որարատ ամսագրոյս . . . . . 3—6·

ԿՐՕՆԱԿԱՆ·—Պատուղ ցանկալի, յերես, 7—15, 45—50, 89—94, 173—181, 221—228, 261—264, 301—305·—Քրիստոս և գեան Յորդանան, 15—17·—Նուէր իմ Նորընծայ ևղբայրներին, 17—18·—Դասատուութիւն կրօնի, 18—20, 50—54, 94—100, 133—139·—Մի քանի

խօսք իմ Աբեղայութեան առիթով, 139–146։—*Ժամակարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ*, 381–387։—*Եօթն Խորհուրդք Եկեղեցւոյ*, 421–423 (*տե՛ս նաեւ էջ ՀԶ*)։—*Ճաղատս թէ պէտք են արտաքին պաշտամունք կրօնի*, 461–463։

ՊԱՏՄԱԿԱՆ։—*Տեղագրութիւն Հիրակայ*, 20–25, 54–57, 100–104, 181–185, 238–244, 273–283, 347–351։—*Տեսարանք Հայրենեաց*։—*Տեղագիծ Ս. Գրիգ. Վան. յԱմարաս և կողմն. երեւոյթն*, 26, *Կարս քաղաք ի Հիրակ*, 58, *Ներքին երեւոյթ արդի շինական տանց Հայաստանի*, 112, *Սանահնոյ Վանք*, 159, *Կովկասեան բնակիչք*, 191, *Անի*, 239, 240, *Ճատակագիծ և ներք. երեւ. Մայր Եկեղ. Անւոյ*, 242, 244, *զարդ և ճակ. և խաչ. Մայր Եկ. Ան.* 271, 272, *զարդք, Եկ. և գիրեղ. Թագ. և խաչաքար յԱնի*, 319, 320, *ներք. և կողմն. երեւ. Եկեղ. յԱնի առ գետեզերբ*, 352, *Հաղպատ*, 400։—*Հնութիւնք Հայրենեաց ի գաւառին Երնջակու*, 105–112, 146–151, 185–191, 228–238, 264–269, 305–312, 341–347, 387–394։—*Հայաստանի նախկին յիշատակարանք*, 152–159, 192–197, 245–248։—*Թէ ի՛նչպէս կազմուեցաւ Հայոց ազգը*, 197–203, 249–251, 312–319։—*Զարեհաւ անապատ*, 269–271։—*Ճանապարհորդութիւն*, 294–400, 427–434, 470–478 (*տե՛ս նաեւ էջ ՀԶ*)։—*Թէ ո՞ւր են Աւարայր և Տղմուտ*, 423–427, 463–470։

ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ։—*Դաստիարակութիւն մանկանց* 27–31, 58–64։—*Պանդուխտ. և Ագռաւն*, 31–32։—*Թղթի ներգործութիւն ոչնչացնող նոր հնար*, 32։—*Օդի մաքրութիւն*, 64–71։—*Զեփիւռ Հայրենի*, 71։—*Քաղաք. Օրէնսգիտութեան նշանակութիւնը* (*Դ էջին վրայ. Ա ընդհատաց*) 113–120։—*Խաղի նշանակութիւնը կրթութեան մէջ*, 283–284, 321–322։—*Հայոց լեզուի և գրականութեան գիտնական նշանակութիւնը*, 322–325, 354–358, 401–404։—*Պատմութիւն և օգուտ նորա*, 404–406, 435–437։—*Սկզբնական բացատրութիւն բնութեան երեւոյթների*, 437–450 (*տե՛ս նաեւ էջ ՀԶ*)։—*Կազմուիլ կամ բաղկանալ*, 478–480։—

ԲԱՐՈՅԱԿԱՆ։—*Վարդան քաջն*, 121։—*Գարնանային արշալոյս*, 121–122։—*Գարուն*, 122։—*Ծուռն Մովսէսի ի նահանջին*, 160։—*Վերջ. հրաժ. ողջոյն*, 160։—*Սանատրուկ Թագաւորի վախճանը*, 204–205, 251–253, 359–360, 406–407։—*Ծուռն Մովսէսի յերկրորդումն* 450–451, 480–485։—*Անի*, 451։

ԱՋԳԱՅԻՆ։—*Պաշտ. Տան.—Մխիթարեան օրհնութիւն*, 33, 72, 123, 161։—*Տիկին Մարիամ Թուշմալեանց*։—*Շուրջառ*։—*Մշակ*։—*Կոնդակ*։—*Ծխական Դպրոցների վիճակը*։—*Մերոնց ամուսնական կենաց նկատմամբ մի քանի խօսք* (41–42, 162–164։—*Երկրաշարժ ի Շամախի*։—*Գրատուն ի Նոր-Նախիջեւան*։—*Տօքթէօր Մորթմանն և Վանայ սեպհական արձանագրութիւնները* (43–44, 81–85), 33–44։—*Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս*։—*Նոր ձեռնադրեալք*։—*Զրկանք Պ Մարկոսի Աղաբէկեանց*։—*Թատրոն մերազնեայ ուսանողաց ի Մոսկուայ*։—*Մարդասիրական Ընկ. Բազուայ և Հրաւէր*։—*Պատասխանի* (77–80, 215–216։—*Սուրհ. Բ–ղ. Կտակ*։—*Զինուորատուութիւն*։—*Սիւ կաթողիկոսութիւն*։—*Կրօն. Ժողով*։—*Ամերստանուհիւն մը* (88, 219–220), 72–88։—*Մովսէս Արքեպիսկոպոսի վախճանիլը*։—*Մեղու*։—*Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս*։—*Օրիորդաց դպրոց Վաղարշապատայ*։—*Գրիգոր վարդապետ Աղաթիրեանց*։—*Նոր ձեռնադրեալ Եպիսկոպոսունք*։—*Նորընտիր Առաջնորդ Հայոց Հնդկաստանի և Պարսկաստանի*։—*Դաղութիւն և պատիժ*։—*Համառօտ հաշուեպատկեր երկսեռ դպրոցաց Հայոց Աստրախանի*։—*Նոր Գուղայ*։—*Հաշուեյուզակ Ազգ. Հոգե. դպր. Հայոց Ղզլարայ*։—*Սուտ փրկիչ և Թշուառ փրկեալք*, 123–132։—*Գեր. Աղաթիրեանց*։—*Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս*։—*Նուէր*։—*Ընծայք*։—*Օրիորդաց Հոգե. դպրոց Երկսնաբաղուկ Արդուեանց Անդրանկապատ օրոց*։—*Թուցատրութիւն*։—*Հաշիւ ուսուման. մանկն Ղզլարայ Հայոց Հոգե. դպրոցի*։—*Սով ի Պարսկաստան*։—*Համառօտ Հաշիւ Մարդասիրական Ընկ. Հայոց Բազուայ*։—*Ողորմութիւնք անպատմապար աղքատաց*, 161–172։—*Տիկին Մարիամ Գ. Իզմիրեան*։—*Նուէր Նախավկայի վանուց*։—

Գեր. Ներսէս Եպիսկոպոս։—Շուրջառ։—Աղաւնի։—Գեր. Մակար Արքեպիսկոպոս և Գրիգոր Եպիսկոպոս Աղաւիրեան։—Հանդէս Ս. Մխիթարեան օրհնութեան։—Համառօտ հաշուեցոյցակ. . դպր. Հայոց Շամախւոյ։—Հաշիւ նախագահի ժող. խորհ. Մարդաս. Ընկեր. (210—215, 255—260)։—Հաշիւ Հոգեբարձութեան հոգև. դպր. Աղէքսանդրապօլոյ։—Գեր. Եպիսկոպոսունք Աղաւիրեան և Սեբովքէ։—Ճովհ. Աւագ քահանայ Տօխսանեանց։—Վ.Հ. Հայրապետ, 205—220։—Վ.Հ. Կաթուղիկոս։—Մակար Արքեպիսկոպոս և Պետրոս Եպիսկոպոս։—Խորէն վարդապետ։—Արիստակէս վարդապետ։—Ս. Գէորգ Եկեղեցի Սամաթիոյ։—Հոգևոր Օրիորդաց դպր. Գօրւոյ (260, 288—89), 253—260։—Դամբարան և Եկեղեցի։—Ձեռնադրութիւն Մանկունւոյ։—Նուէր։—Հաշիւ Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջևանի։—Պատկեր աղքատաց։—Մահացեալ Մուժումարցիք։—Համառօտ տեսութիւն Երիմու և Բեսարապիոյ քանի մի ծխ. դպրոցաց ներկայ դրութիւնը (291—293, 333—336, 371—374, 411—413)։—Տարեդարձի դիշեր։—Հեղեղ ի Սալըի։—Մարաղայ։—Մայրենի լեզու (296—300, 336—340, 413—414։—Սխալ, 285—300։—Մանաւոր իշխանութիւն։—Վ.Հ. Հայրապետ։—Ի Թէհրանէ։—Մովսէս Ներսէսեանցի վախճանիլ։—Մի քանի խօսք։—Հաշիւ ծխ. Հոգև. դպր. Հայոց Մոզդոկայ։—Ողբագործութիւնք ի Գարա—Թաղ, 325—333։—Հաշիւ մեռից և ծախուց Արկեղն աղքատաց Ջուղայ։—Վ.Հ. Հայրապետ։—Բարեյիշատակ Պօղոս Գասպ. Աղէքսանեանց Շուշեցի և կտակ նորին։—Երկրաշարժ։—Վսեմ. Մելքոն խան։—Մեծ. Անտօն Միրզայ։—Հոգևոր դպրոց Հայոց Արցախոյ։—Ի Դավրիժոյ։—Երկրաշարժ ի Գանձակ։—Բարեպ. Մայա Խանումէ։—Գեր. Գրիգոր եպիսկոպոս և Արժ. Սուքիաս վարդապետ։—Հոգաբարձուք Ներսիսեան Ազգ.—Հոգև. դպրոցին։—Բէ—ընդ—էան Սոբհանդակէ.—Արքենեալ.—Խրիմեան։—Կրօն և Քաղ. ժողովներ։—Վ.Հ. Հայրապետի Կոնդակ։—Ազգապետ վարժարան։—Հակահաստատնանք։—Բողոքականք։—Գաւառներէն։—Ազգ. լրագիրք։—Ս. Երուսաղէմի հին խնդիր։—Ի Տէր ննջումն Պօղոս Արքեպիսկոպոսի Զմիւռնիոյ։—Տօնախմբութիւն։—Կանթեղ, 360—382։—Բարեպ. Եղիսաբէթ Գաւթեան։—Նուէր։—Երեմիա նորապսակ Եպիսկոպոս։—Ներսէս Ս. Եպիսկոպոս։—Մ. Կարապետ Առաքելեանի նուէր։—Վսեմ. Ճովհաննէս Մուրատ—Մանուկ—Պէյ։—Ի Նոր—Ջուղայէ։—Ճառք։—Ցեկատարինատարէ։—Սոբհ. Բէ—ղ.։—Պօղոս Արքեպիսկոպոս։—Ուսումնարանք և դաստիարակութիւն։—Պրուսա։—Պ. Ոստանիկ։—Աքանչելիք։—Հաշիւներ։—Եդիպտոսէն։—Հռոմ. աղատ Ազգայինք։—Մալաթիա։—Ննջումն ի Տէր Գէորգ Ս. Եպիսկոպոսի։—Թադէոս Ս. Եպիսկոպոս։—Պաշտօնական ծանուցումն, 407—420։—Վսեմ. Մելքոն խան ի Ս. Էջմիածին։—Ծուցակ նուիրատուաց ի նպաստ շինութեանց Մայր Աթոռոյս (452—54, 486—7 նոբ.)։—Շիրակայ գիւղորայք (454—57, 487—90)։ — Բէ—ղ. Սոբհ. — Գեր. Արիստակէս Արքեպիսկոպոս։ — Հաշտութիւն։ — Գեր. Բարդուղիմէոս Եպիսկոպոս։—Պօղոս վարդապետ, և Գեր Գէորգ Արքեպիսկոպոս։—Գեր. Երեմիա Եպիսկոպոսի պաշտօն։—Երեսփ. Ընդհ. ժողով։—Եդիպտոսի անցքը։—Եդեսիայէն։—Զմիւռնիա։—Կոնդակ։—Կրօնի զգացմունքներ։—Հայկազեան քաթոլիկ վարդապետ։—Վսեմ. Դեսպան Տուպքի, 451—460։—Ուխտ։—Աւազան Քրօրհնեաց։—Պ. Աղայ Աղայեանց։—Պատասխան։—Բէ—ղ Սոբհ.—Հայկական հնութիւնք ի լեառն Զիթենեաց։—Ընդհ. Երեսփ. ժողով։—Ներսէս Եպիսկոպոս։—Մանզումէ և Օրագիր։—Տարաձայնութիւնք։—Խորէն Եպիսկոպոս։—Դարձեալ տարաձայնութիւնք։—Երեզմանատուն։—Ճօղուած մի։—Տեսակցութիւն։—Խորէն վարդապետ։—Ազդ.։—Կարևորք։—Ճայտարարութիւն։—Իսլանդակութիւն, 485—500։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։